

5684



ՉՈՐՍ ԵՄԻՍ
ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀՆՅԱՍՏՆՈՒՄ

Գրեց ԱԲԷԼ ԱՊՐԵՍԵԱՆՑ



ՏՊԱՐԱՆ «ՊԱՅԻԱՐ»Ի

Պ ո ս ր ո ն

1924

ՎԷ

9/47.925/

Ա-68

2089

9(47:925)

Ա-68

7 JUL 2011
2011-08

**ՉՈՐՍ ԸՄԻՍ
ԽՈՐՀՐԻՅՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Գրեց՝ ԱԲԷԼ ԱՊՐԵՍԵԱՆՑ



2898


ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԵՆՈՐՀԱՆԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
ST. NERSES SHNORHALLI
LIBRARY
ARMENIAN PRELACY

Տպարան «ՊԱՅՔԱՐ»ի Պոսթոն

1924

2013.11.2

109



ԵՐԵՎԱՆ — ԱՐԲՈՒՆԻ ՓՈՂՈՑ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

ՉՈՐՍ ԱՄԻՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա.

Ամբողջ չորս տարի յեղափոխութիւնից յետոյ, մենք Ռուսաստանում ապրող զաղութահայերս բացարձակապէս կտրեա՞ծ էինք Անդրկովկասից:

Այն հատ ու կտոր տեղեկութիւնները, որ մենք ստանում էինք մայրաքաղաքի թերթերից, մեր երկրի, մասնաւորապէս Հայաստանի դրութեան մասին, շատ սուղ էին, եւ չէին տալիս կատարեալ պատկերը երկրի քաղաքական, կուլտուրական, եւ տընտեսական դրութեան:

Անցեալ ամառ ինձ վիճակեց անցնել Հայաստան: Եւ չորս ամսեայ այդ ճանապարհորդութիւնը մեր հայրենիքում, իր ներկայի շատ միտթարիչ կողմերի հետ, թողեց ինձ վրայ եւ ծանր ու ճնշող տպաւորութիւն իր մօտիկ անցեալով:

Երբ էջմիածնի մատենադարանում նստած, եւ աչքի էի անցնում, վերջին մի քանի տարիներում անցած դարձածը մեր երկրում, մնում էի ապշած:

Սպանութիւն, աւեր, թալան, զաղթականութիւն, սով, պատերազմ, մէկը միւսից աւելի դաժան, մէկը միւսից աւելի սարսափելի, սինկմօտոզրաֆի պատկերների պէս, զալիս անցնում էին իմ առաջից:

1918, 1919, 1920, այդ թւականները պատկանում են հայկական ցեղի պատմութեան ամենադառն տարեգրութիւնների թւին, եւ դեռ շատ երկար տա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ
ՄԱՍԻՍ
2695-2011

րիներ, անէծքով կ'իջլի բոլոր այն տեղերում, ուր հայի օճախ է վառուում այսօր եւ կ'վառւի ապագայում:

Աղէտալի պատերազմը ցնցեց հայութիւնը իր ամբողջ գոյութեամբ: Երբեք հայ ժողովուրդը այդպիսի ծանր եւ արիւնալի օրեր չէր ունեցել, ինչպէս վերջին այդ մի քանի տարիները:

Անակնկալների շարքեր եկել անցել էին նրա գլխով, եւ աւերի մատնւած ժողովրդին, ամայացած երկրին, հասցրել վերջին ճգնաժամին:

* * *

1923 Յունիսին էր, որ ես ճանապարհւեցի Անտարխանից: Առաջին քաղաքը Հայաստանի իմ ճանապարհին Բագուն էր, ուր շոգենաւը մեզ ցած բերեց երեք օրից յետոյ:

Բագուն այն քաղաքն էր, ուր թագաւորական Ռուսաստանը, տարիներով երկու հարեւան խաղաղ ժողովրդների մէջ, իր սերմանած թշնամութեան առաջին պտուղները քաղեց:

Կովկասի փոխարքայ իշխան Գալիցինի դրրդմամբ եւ Բագւի նահանգապետ գեներալ Նսկաչիկէի անմիջական գործակցութեամբ, 1904 թւից, սկսեցին այնտեղից հայ թուրքական ընդհարումները, որոնք ծայր տալով Բագում, լայն ալիքներով տարածեցին այնուհետեւ ամբողջ Անդրկովկասում, եւ պատճառ դառան ազգամիջեան անընդհատ կռիւների:

Կռիւների, որոնք աւերակների վերածեցին հայ եւ մահմետական աշխատաւորներով բնակւած ահապին շրջաններ:

* * *

Բագւից սկսած, երկաթուղին անցնում է հարթ, աւազոտ, չոր դաշտավայրերով: Ահա մէկը միւսի ե-

տեղից երեւում են քանդուած եւ վառւած կայարաններ, աւերած գիւղերի վրասակներ, քանդուած եւ անմարդարնակ տներ:

Կենդանի եւ անխօս վկաներ, սոսկալի օրերի:

Անցնում ենք Ազրբէյջանը: Գնացքը մտնում է Վրաստանի սահմանները: Թիֆլիսին մօտիկ, Նաֆթլուղը, վերջին կայարանն է, ուր մենք ցած ենք իջնում գնացքից:

— «Պէտք է սպասէք Հայաստանի գնացքին», ասում են մեզ:

Հայաստանի գնացքի՞ն... .

Մի շարք յիշողութիւններ պաշարում են միտքս: Ութսունական թւականների սկզբներն էին: Տարւել էինք բոլորս էլ երազներով:

Բաֆֆի, Պատկանեան, Արծրունի... .

Ուզում էինք մենք էլ ազատուել Բուլղարների պէս: Գլուխներս տաքացած, առանց գէնքի եւ դրամի կարծում էինք որ մի բուռն ապստամբներով, կարող էինք սոքի կանգնեցնել երկիրը եւ կեանքի մէջ իրականացնել Բաֆֆի եւ Գամառ-Քաթիպայի տենչանքները:

Որպէս թիթեռներ թռչում էինք անմտօրէն դէպի կրակը:

Ես տեսայ ուսանող Կուկունեանին, այդ տարիներում, երբ նա մի քանի տասնեակ այդպիսի երազող երիտասարդների գլուխն անցած, մետաքսայ եռագոյն դրօշակը առջեւից, «Մեր Հայրենիք»ը երգելով, գնում էին... Հայաստանը փրկելու:

Նրանք նոյն իսկ սահմանը չանցան: Հենց սահմանի վրայ, սահմանապահ կօզակները, հրազանաձգութեան բռնակով նրանց հետ, մի քանիսին սպանելուց եւ վիրաւորելուց յետոյ, միւսներին կալանաւորած բերին եւ Կարսի բանտը դրին:

Շատ չէր անցել, ես նորից տեսայ այդ խումբը,

իր առաջնորդի հետ, այս անգամ Բաթումի նաւահանգստում, երբ նրանց, որպէս տաժանակիր աշխատանքի դատապարտւածներէ, նաւ էին նստեցնում, Սախալին քշելու:

Ինչքա՞ն այդպիսի անձնազոհ, երազող Երիտասարդներ, առանց խորը մտածելու իրենց անելիքներէ հետեւանքներէ մասին, շատ անգամ պրօվակատօրներէ դրդմամբ, գնում էին մեռնելու եւ իրենց հետ քաշ էին տալիս հարիւր հազարաւոր անմեղ զոհեր չարքաշ գիւղացիներից, որոնց անասունների պէս մորթում էին յետոյ, կատաղած եւ վրէժխնդիր քրդերը:

Արժրունին կարծում էր, որ այդպիսի յեղափոխական ցոյցերը, այդպիսի մասսայական կոտորածները Եւրոպային կը դրդեն աւտօնոմիա (ինքնավարութիւն) տալու հայերին:

Եւ յիրաւի, ամէն մի այդպիսի ջարդից յետոյ, Եւրոպայի, մանաւանդ Անգլիայի պարլամենտները դրդուում էին Սուլթանի դէմ ուղղւած ճառերով:

Հետեւանքը՝:

Շատ լաւ էր հասկանում թուրք տիպլօմատիան այդ աղմուկների միտքը, եւ բաւական է, որ նա քցեր այդ հաչոցների առաջ մի կտոր ոսկոր, որեւէ կոնցեսիա, որեւէ կղզի եւ ամէն ինչ դադարուում էր:

Այդ կրծելու ոսկորն էր որ հետաքրքրում էր ընչաքաղց Եւրոպային եւ ոչ թէ հայերը: Շատ անգամ հենց այդպիսի ոսկորների համար էր, որ մեղ պրօվակացիաներով, կորստի էին դրկում:

Չարական կառավարութեան հին արխիւները բաց են անում մեղ մի շարք այդպիսի ծրագիրներ:

Վերջին համաշխարհային պատերազմին երբ մենք կաշից դուրս էինք գալիս, օգնելու Ռուսաստանին եւ նրա դաշնակիցներին, մեր բոլոր ունե-

ցածով, մեր զաւակներով. երբ մենք վստահ էինք որ կ'ունենանք ազատ հայրենիք, այդ հայրենիքը, Անգլիայի, Փրանսիայի եւ Ռուսաստանի մէջ, բաժանւած է կղկլ արդէն, ընդհանուր համաձայնութեամբ: Եւ ոչ միայն բաժանւած, այլ եւ որոշւած ու ծրագրւած որ այդ Երկրների ո՛ր մասերը կ'անցնեն Ռուսաստանին:

«Հայաստանը մեզ պէտք է, միայն առանց Հայերի»: Դա Լօրանով-Րոստովակու Լօզունգն էր, որ ոռւս քաղաքականութիւնը գլուխ էր բերում պատերազմի ընթացքում:

Վանի դիտաւորեալ նահանջը, ահա ձեզ, ամենախոշոր փաստը:

Մենք հաւատում էինք մեր քրիստոնեայ, վեհանձն կառավարութեան, եւ մեր իտիօտական ոգեւորութեան մէջ, չէինք տեսնում, որ մենք խաղալիք էինք դարձել Վօրոնցով-Դաշկովների ձեռքում:

Բայց... բաւական է: Հեռու... դէն գնացէք, ծանր յիշողութիւններ: Փոթորիկն ու ամպերն անցան:

Խաղաղ է այժմ մայրենի Երկրում: Դարերի տառապանքից յետոյ, այդ մի փոքրիկ անկիւնը ունինք դոնէ, ուր գլուխներս հանդիսա, կարող ենք ասլիլ:

* * *

Ահա եւ Հայաստանի գնացքը:

Նա թոչում է սիրուն դաշտերով, ձորերով, հովիտներով. կարում է ժայռերը, անցնում է լեռները թունելներով: Նա նման չէ Բագրի ամառի եւ չորացած դաշտերին:

Հայաստան երկիր դրախտավայր,

Դու, մարդկայնոց ցեղիս օրբան.

Դու եւ բնիկ իմ հայրենիք...:

Յիշում էք ահամայնց հին երգի խօսքերը :

Մօտենում ենք Ալեքսանդրապոլին :

Ինչե՛ր շեն անցել այդտեղ : Ի՞նչ սոսկալի օրեր նա չէ քաշել տաճկական առաջին եւ երկրորդ արշաւանքներին 18 եւ 20 թւականներին :

Իմ ծրագրից դուրս է այս անգամ , քաղաքական անցքերը նկարագրել :

Չորս ամիս մնալով Հայաստանում , ես կ'ցանկանայի միայն ծանօթացնել ընթերցողին այն տրպաւորութիւնների հետ , որ ես ստացայ այնտեղ :

Տալ , արդի Պորհրդային Հայաստանի տնտեսական եւ կուլտուրական կեանքի մի աղօտ պատկերը :

Այն , ինչ որ կայ :

Հայաստանի քաղաքական կեանքը 18—21 թւականներին , նրանում անցած դարձածները այդ տարիներում , դա ես թողնում եմ : Դա մի կտոր է Դանտէի Դժոխքից :

* * *

Գնացքը առաջ է սլանում : Մի փոքր էլ եւ ահա իմ առաջ փուլած է Արարատեան դաշտը իր սքանչելի գեղեցկութեամբ : Սաղոյի այգիներ , բամբակի արտեր , կանաչ ծառաստաններ : Հեռուն սահմանի վրայ Մասիսն է իր ձիւնափայլ դադաթով , փոքր Մասիսը կողքին , շուրջը երկար շարք գեղեցիկ լեռների , ալիքաւոր գեղազրական բարձրութիւններով :

Որբա՞ն գեղեցիկ են նրանք եւ որբան հարապատ :

Որբա՞ն մարդկային տառապանքներ եկել անցել են այդ երկու լուռ վկաների հանդիսաւորութեամբ :

Դարերի տանջանքը մի թշուառ ազգի , որ իր աչքը չէր հեռացնում նրանց կատարներից , լուռ եւ անտարտունջ իր բաժին ընկած հալածանքը տանելով : Նա չէր թողնում իր հողը , իր օջախը , իր «վաթան»ը :

Չէր հեռանում երկրից : Եւ ահա վերջապէս անհուն տանջանքներից յետոյ , արիւնաքամ եղած , որբերի եւ գողթականների աշխարհ դարձած , այդ փոքրիկ երկրում , կեանք է առել մի հանրապետութիւն , որ ամէն մի ջանք գործ է դնում , խաղաղ աշխատանքով , առաջդիմութեան ուղին հարթելու :

Դադարել է արցունքը Հայ Ժողովրդի : Գիւղացի եւ բանւոր , ապահով ու հանգիստ , կարկտում են իրենց քանդած օջախը . չէնացնում են իրենց փոքր , բայց սեպհական ու ազատ հայրենիքը :

Ահա եւ մեր մայրաքաղաքը : Գնացքը մօտենում է նրան : Ողջո՞յն քեզ , մանուկ հանրապետութիւն :

* * *

Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների մէջ , Հայաստանը ամէնից քիչ տերիտորիայ ունեցողն է : Նրա մէջ չէ մտնում նոյն իսկ Երեւանի նահանգի ամբողջութիւնը :

Մինչդեռ Ազրբէյջանը ունի 78,000 , Վրաստանը 70,000 քառակուսի վերստ տարածութիւն , Հայաստանի տերիտորիան 25,012 վերստ է միայն :

Այդ 25 հազար վերստի , կամ ուրիշ խօսքով 3,200,000 տեսեատինի , 180,000 տեսեատին բլոնում են անտառները , 750,000 տեսեատին արօտատեղիները եւ 1,781,000 պիտանի հողեր : Մնում են մշակութեան համար բոլորովին անպէտք 39,000 տեսեատին , որի մէջ մտնում է եւ Սեւանայ ծովափը :

Հայաստանը ունի երկու մեծ եւ ութը փոքր քաղաքներ : Դրանք են : Մեծերը՝ Երեւանն ու Ալեքսանդրապոլը : Փոքրերը՝ Էջմիածին , Նոր-Բայազիտ , Ղարաբաղիսա , Գիլիջան , Աշտարակ , Մեղրի , Ջալալ-Օղլի եւ Գեօրիս :

Գիւղերի թիւն է 1,101 : 146,243 տնտեսութեամբ :

Ազգաբնակչության թիւը 1922ի վիճակագրութեամբ կը թիւ 800,000, այժմ հաշոււմ են քիչ պակաս միլիոնից:

Իրանցից Հայեր 72, Մուսուլմաններ 18, Ռուսեր 7, Եգիպտի, Քուրդ, Ասորի, Յոյն եւ այլն 3:

* * *

Խորհրդային Հայաստանին ժառանգութիւն էր մնացել մի երկիր, որ սխառեմաթիքօրէն քարուքանդ էր եղել թէ պատերազմի եւ թէ ներքին խռովութիւնների պատճառով:

Երկիրը ծանր հիւանդ էր, նրա Փիղիքական գոյութիւնը սպառնալիքի տակ:

Նոր կառավարութեան գերագոյն նպատակ մընում էր խաղաղեցնել երկիրը, Փիղիքապէս պաշտպանել եւ պահպանել նրա ազգաբնակչութիւնը, հաստատել անկեղծ եւ բարեկամական յարաբերութիւն հարեւանների հետ:

Երկիրը քարուքանդ, մարդիկը տկոյր, ժամանակ եւ եռանդ էր հարկաւոր այդ բոլորը շինելու:

Հարկաւոր էր ներքին շինարարական հսկայական աշխատանք:

1921 Ապրիլ 2ի կառավարութեան նախագիծը, որի վրայ իր ընկերներով միասին ծանրանում էր այդ գործի ամբողջ պատասխանատւութիւնը — ընկեր Ալեքսանդր Մեանիկեանն էր, նոր-նախիջեւանցի, բարձրագոյն համարարանական կրթութիւն ունեցող, մէկը կուսակցութեան յայտնի եւ գործօն անդամներից, որը թէեւ երկար տարիներ աշխատած Ռուսաստանում, իր կապը հայ աշխատատեղան մասսաների հետ երբեք չէր կտրել:

Սակայն, որքան էլ նա իր ընկերներով միասին, լցւած լինէին եռանդով եւ գործելու ցանկութեամբ, նրանք ոչինչ անել չէին կարող, առանց դրսի, կողմնակի օգնութեան:

Այդ կողմնակի օգնութիւններից ամենադիտաւորը եւ յուսալին Խորհրդային Ռուսաստանն էր:

Նա թէեւ ինքը նեղ պայմանների մէջ, բայց չընորհիւ իր մեծութեան եւ այն համակրանքի, որ նա ունէր դէպի մանուկ հանրապետութիւնը, հաւատացած էին, որ նա այդ օգնութիւնը չի խնայի:

Կար այդ ժամանակ եւ ամերիկական կօմիտէ, որ արդէն դործում էր երկրում: Նա պէտք է կըրկնապատկէր իր ոյժերը, երկիրը կորստից պատելու դործում:

Բայց այդ բոլորը դեռ բաւական չէր: Հարկաւոր էր օգնութիւնը եւ այն բազմաթիւ արտասահմանեան հայ գաղութների, որոնք թէեւ կտրւած հայրենիքից, սակայն չպիտի զլանային իրենց օգնութիւնը մայր երկրի վերաշինութեան գործին:

Ահա հենց այդ նպատակով էլ կազմւում է «Հայաստանի Օգնութեան կոմիտէն»:

Ամենամեծ օգնութիւնը, որ ստանում է Հայաստանի նոր կառավարութիւնը, դա Խորհրդային Ռուսաստանիցն էր, որ իր համակիր մանուկ հանրապետութեան անում էր իր առաջին խոշոր եւ շօշափելի օգնութիւնը:

Միմիայն 1922 թւին Խորհրդ. Ռուսաստան տրւեց Հայաստանին.

— Կէս միլիոն ըուբլի ոսկով, զանազան պէտքերի համար:

— 620,000 ըուբլի ոսկով, փոխարինարար բամբակադործութեանը զարկ տալու համար:

— 3 միլիոն արշին մանուֆաթուրայ:

— 760 վազոն ցորեն եւ ուրիշ հացահատիկներ:

— 3 վազոն պատերազմական պիտոյքներ:

— 165 փութ շոկօլադ:

— 200 փութ թէյ:

— 200 փութ կական:

— 11 վազոն չաքար:

— 8 վազոն բժշկական սյարագաներ եւ դեղօ-
բայք, 4,000 լիտր հակաժանտախտային հեղուկ:

— 2 վազոն դեղեֆոնի սյարագաներ:

— 2 վազոն ապակեղէն, լամբաներ եւ այլն:

Յետագայում ստացւում են մեծ քանակութեամբ երկրագործական մեքենաներ, բամբակի սերմ, շո-
բեր, թուղթ, աֆթոմորիլներ, մի մեծ տպարան եւ վիճադատուն, մի քանի արհեստանոց: Չթի մի գործարան իր բոլոր սյարագաներով 2000 բանուրի:

Ազերբեյջանից բաց է թողնւում նաֆթ, իւղ, բենզին:

Տալիս եւ Լազարեան ձեմարանի ողջ ունեցածը:

Վերագարձնում են, Մոսկուայում տարիներ ա-
ռաջ պահ տւած, էջմիածնի թանգարանի ձեռագիր-
ները եւ իրեղէնները 140 սնտուկ:

Եւ ահա այդ բոլորը ստանալուց յետոյ, կառա-
վարութիւնը քիչ թէ շատ հնարաւորութիւն էր բա-
տանում իր կուլտուրական շինարար աշխատանքը երկրում սկսելու:

Հայաստանը մտնում է կուլտուրայի նոր դա-
րաշրջան:

* * *

Հայաստանը չունի խոշոր արդիւնաբերութիւն, իրականութիւնից հեռու չենք լինի եթէ Հայաստա-
նի ազգարնակութեան 90 հազւենք զիւղատնտեսու-
թեամբ սյարագողներ:

Մեր երկիրը բացարձակապէս գիւղատնտեսա-
կան է: Չունենալով խոշոր արդիւնագործութիւն, նա չունի հետեւարար սօցիալական այն կատեգո-
րիաները, որոնք յատուկ են արտադրութեան այդ

եղանակին — կապիտալիստական բուրժուազիա եւ սյրօլետարիատ:

Քաղաքային բնակչութեան մեծ մասը կազմում են մանր առեւտրականները եւ արհեստաւորները, աննշան մասը բանուորներ եւ հատ ու կենտ միջին բուրժուաներ:

Այդ պատճառով էլ պատերազմը հիմնական փոփոխութիւններ մեր երկրում չմտցրեց:

Այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հարստու-
թեան կուտակումն եւ հարստութեան կորուստ որ սովորական են եղել Ռուսաստանի կենտրոննե-
րում, մեր մէջ տեղի չեն ունեցել, կամ եթէ ունե-
ցել են, շատ փոքր չափով:

Հայաստանի այն մասերում, որոնք ենթակայ են եղել տաճկական ասպատակութեան եւ թարանի, ի հարկէ ազգարնակութեան հարիւր տոկոսը կոր-
ցրել է ինչքը, մերկացել է եւ տկլորացել:

«Հայաստանի մէջ խոշոր բուրժուազիա չկայ — ասում է Մեսսնիկեան իր ճառերից մէկում — մտաւորականութիւնը ուրիշ բնաւորութիւն ունի. տիրող դասակարգը միջին զիւղացիութիւնն է: Գոր-
ծարանական սյրօլետարիատ չունենք: Եղած սակա-
ւաթիւ բանուորութիւնը կապւած է զիւղի հետ, այն-
պէս որ մեր երկիրը կատարեալ այլ պատկեր է ներ-
կայացնում, քան Ռուսաստանը եւ այստեղ շատ հեշ-
տութեամբ կարելի է լինի վերականգնել հայրենիքի շինութիւնը»:

* * *

Որպէս մեծ Ֆետերացիայի մի փոքր անդամը, Հայաստանը ունի իր ուրոյն կուլտուրան, իր մայ-
րենի լեզուն: Դուք գիտէք, որ գտնւում էք Հայաս-
տանում, որը թէեւ կապւած Ռուսաստանի հետ քա-
ղաքական դաշնակցութեամբ, իր ներքին կուլտու-

րական կեանքը տնօրինում է ըստ իր ցանկացածի, կատարելապէս անկախ, առանց որեւէ մէկին հաշիւ տալու:

Իրականութեան մէջ, Հայաստանը, որպէս ազգային խորհրդային պետութիւն, ինքնուրոյն պետութիւն է հայ լեզուով, հայ կուլտուրայով:

Բոլոր հիմնարկութիւններում, սկսած ժողովրդրդական կոմիսարիատներից մինչև զինուորանոցները, տիրում է մաքուր, գրական հայերէնը:

Կայ յատուկ դեկրետ, որով հայերէն լեզուն Հայաստանում յայտարարել է պետական:

Դա արել է այն միակ պատճառաւ որ կառավարութիւնը հնորաւորութիւն ունենայ, ամենալայն կերպով մասսաների մէջ, ուսումն ու կրթութիւնը տարածելու:

Հայաստանի ազգարնակութիւնը այժմ կազմում է գրեթէ զուտ հայկական, միապաղպաղ մի տարր եւ ամէն տեղ, փողոցում, տանը, հիմնարկութիւններում, տիրապետող լեզուն միմիայն հայերէնն է, որ լսում էք ամէն տեղ եւ ամէն մի քայլում:

Իմ ծանօթ մի հայ բժշկի ընտանիքում, ես պատահեցի երկու հրէուհիների ամուսնացած հայերի հետ, որոնք ընդամէն երկու տարի ապրելով Հայաստանում, խօսում էին մաքուր, գրական հայերէնով:

* * *

Հայաստանը սկզբում միանգամայն մեկուսացած էր — ասում է «Ս. Հ.» թերթը իր առաջնորդողներից մէկում:

Վրաստանի եւ Ազերբեյջանի հետ նա կազմեց Կովկասեան Փետերացիա եւ մտաւ այդպիսով համախորհրդային միութեան ծոցը:

Այդ բանը առիթ տւաւ արտասահմանում հա-

րայ հրոց յարձրացնելու, որ Հայաստանը կորցրել է իր անկախութիւնը:

Ի դուր բոլորովին:

Այժմ Հայաստանը, ոուս բանուրի, վրացի եւ ազրբեյջանի զիւղացու բարեկամն է:

Ի՞նչ կայ այդտեղ խորշելու:

Դրանով մենք պարծենում ենք: Այսօր Հայաստանում շատ աւելի դիւրին եւ ազատ է շրջագայութիւնը, աշխատանքը եւ զարգացումը: Լեզուն ու կուլտուրան աւելի բարձր դրութեան մէջ են քան առաջ: Մարդկային անհատականութիւնը, արժանապատուութիւնը, աւելի յարգի են քան դաշնակցականների օրով էր:

Չկայ վարժապետականութիւն, սեմինարիք, մարդատեցութիւն, ստորաբաշուութիւն, դուր ու ամփոց, սրածութիւն, յայ ու չիփան:

Ինչո՞ւմն է ուրեմն հարցը:

* * *

Եւ կ'ըրեմ այդ, այսինքն անկախութեան հարցին վերաբերեալ, անցեալ տարւոյ Ս. Հ.ի սեկցիայի բացման ժամանակ նախագահ Լուկաշինի արած զեկուցումից մի քանի խօսք:

«Ի՞նչն է կազմում մեր հակառակորդների, հակաշեղափոխական արգումենտացիայի կորիզը մեր դէմ ուղղամ:

«Նրկու բան:

«Նախ՝ որ մենք չենք հետապնդում ինչպէս իրենք կ'ուղեկենային տաճկահայկական դատը եւ երկրորդ՝ որ մենք չունենք անկախութիւն:

«Մենք միայն մի բան կարող ենք ասել: Մեր քաղաքականութիւնը սօցիալական մեծ յեղափոխութեան վարքագիծն է եւ ոչ ազգայնական քաղաքականութիւնը:

«Մեզ մեղադրում են, որ Հայաստանը անկախութիւն չունի, իսկ դուք գիտէք ընկերներ, թէ ինչ էր դաշնակցական անկախութիւնը: Այդ անկախութիւնը կախ էր նոյն իսկ Անգանտայի վերջին սպայից:

«Մենք մեր անկախութիւնը մեր բանւորների, գիւղացիների սօցիալիստական ստեղծագործական սօցատութեան մէջ ենք փնտոում:

«Մենք բուրժուական անկախութիւն չունենք եւ չենք էլ ուզում ունենալ:

«Այո՛, մենք անկախ չենք սօցիալական յեղափոխութիւնից, մենք էլ ենք ջոկում, սակայն ոչ տէրեր, այլ յեղափոխական զինակիցներ եւ մենք նրանցից անկախ չենք»:

* * *

Աչքի անցնենք այժմ այն զինուորական եւ կուրտուրական աշխատանքները, որ կատարել է Հայաստանում, Խորհրդային իշխանութեան օրօք, այս երեք տարւան ընթացքում:

Հէնց առաջին հայեացքից, երբ մտնում էք Երեւան, նկատելի է, թէ որքան փոխել է նախկին կեդտոտ եւ ապականւած Երեւանը:

Փողոցները լուսաւորւած են ելեքտրականութեամբ. մեծ մասամբ նորոգւած եւ անընդհատ նորոգւում են:

Արտիկան մեծ փողոցը երկու կողմից սալայատակւած է լայն տրօտուարներով, փողոցի երկու կողմից տնկւած են ծառեր, անցրւած են առուներ: Միմիայն Երեւան քաղաքի վերաշինութեան համար ծախսւած է 600 հազար բուրլի ոսկով:

Ճանապարհների, շոսէների նորոգութիւնը կատարւում է Հայաստանում գրեթէ ամենուրեք: Սկըսել է երկրի համար հսկայական նշանակութիւն ու-

նեցող ջրանցքների կառուցումը, բացել են մի շարք արհեստանոցներ, սապոնի, լուցկու, պապիրոսի գործարաններ:

Լուսաւորութեան Ժող. կոմիտարիատը բերել եւ կազմել է մի մեծ հանրային գրադարան 50 հազարից աւելի հատոր գրքերով:

Ունի էջմիածնի թանգարանից ոչ պակաս թանգարան: Հարուստ տպարաններ, պետական թատրոն, պետական երկու կինօ: Ունեն երեք տեխնիկում (Երեւան, Ալ. սօլ, Աշտարակ): Պետական համալսարան: Հայաստանի բոլոր անկիւններում 600ի մօտ դպրոցներ: Ունեն բանւորական Փակուլտետ: Գիւղատնտեսական դպրոց: Տրօպիքական ինստիտուտ: Երաժշտական ստուդիոյ, որ երկու տարւայ աշխատանքից յետոյ վերածւել է կոնսերվատորիայի: Ունեն սրբանոցներ:

2615-2011

Ունեն հանդատան տներ Հայաստանի կուրորտներում հաշւած 750 հոգու համար, ամառւայ սեզօնում: Երկար կ'լինէր մանրամասն կանգ առնել այդ բոլորի վրայ. կ'ստեմ միայն, որ այդ բոլորը դրւած է շատ լուրջ հիմքերի վրայ:


Իւրաքանչիւրը այդ հիմնարկութիւններից պատիւ կ'ըրէր նոյն իսկ աւելի մեծ քաղաքների:

Ես նրանցից մի քանիսի մասին, այնուամենայնիւ կ'տամ աւելի մանրամասն տեղեկութիւններ:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

«Աստիճաններուն վրա կանգնած հրմանգով կ'դիտէի դասարաններուն բացւիլն եւ երկսեռ երիտասարդութեան դուրս խուծելը: Ուրախ գարթ, իրարու հետ խօսելով ու վիհելով, կուգային ու



կ'երթային, կ'խառնէին ու կ'բաժնէին մեղուներու մամն:

«Հայաստանն էր, կեանքն էր որ կ'շարժէր հոն: Եւ կ'մտածէի որ եթէ ամենէն յռոտես հայն անգամ, ներկայ ըլլար այդ հրաշալի տեսարանին, պիտի համոզուէր թէ ինք սխալեր է, թէ հոն է միայն, որ կ'տրւի իսկական խնամքը՝ ազգն ու հայրենիքը պահելու ու բարձրացնելու համար»:

Ե. ԿԱՐԻԿԵԱՆ

Հայաստանի համալսարանը, որ նոր միայն լըրացրեց իր գոյութեան եռամեակը, (23 Մարտ 1921) մանուկ հանրապետութեան պարծանքները մէկն է:

Նրա մասին տեղեկութիւններ տալու համար ես օգտուեմ եմ համալսարանի ընկտոր Յակոբ Յովհաննիսեանի ունեցած մի խօսակցութիւնից այդ նիւթի մասին, թէ ինչ գործունէութեան հեռանկար ունի համալսարանը ընթացիկ 23—24 ուսումնական տարւոյ մասին:

Համալսարանը կարելի է ասել ստեղծւեց ոչ ընդ շից: Երկրի ծայրայեղ քայքայած դրութիւնը չյուսահատեցրեց գործին գլուխ անցած ընկերներին: Ժողովրդական լուսաւորութեան կոմիտարիատը, ոչ մի ջանք չխնայեց եւ երեք տարում, համալսարանը դառաւ պատկառելի մի հիմնարկութիւն: Նա ունի հետեւեալ Փակուլտետները:

- Հասարակագիտական.
- Պատմագրական.
- Բժշկական.
- Գիւղատնտեսական
- Տեխնիքական:

Բացի այդ, համալսարանին կից, գործում է բանւորական Փակուլտետը:

Այս տարի հասարակագիտական Փակուլտետը ունենալու է երկու ճիւղաւորում: Տնտեսագիտական եւ իրաւաբանական: Տեխնիքական Փակուլտետը մասնաղէտներ պատրաստում է այս տարի գլխաւորապէս շինարարագիտական եւ ջրարաշխական ուղղութեամբ, համաձայն մեր երկրի պահանջների:

Բնագիտական մուղէյը այս տարի հարստացաւ մի շարք կուկցիաներով, որ արդիւնք է մուղէյումի վարող Շուկալնիկովի ղեկավարութեամբ կատարւած երկու էքսպեդիցիաների մէկը Արաբսի ափը, միւսը Սեւանայ լճի շուրջը:

Համալսարանը ունի նախկին Լազարեան ձեմարանի հարուստ ֆիզիքական կարիները: Ծրագրուած է հիմնել բժշկական Փակուլտետի անատոմիական աշխատանոցի եւ Թանգարանի նոր շէնք:

1922—23 ուսումնական տարւոյ համալսարանի ուսանողութեան ընդհանուր թիւը, առանց բանֆոկի եղել է 500-ից մի քիչ անց:

Ներկայ 1923—24 տարեշրջանում համալսարանը ունի 938(*) ուսանողներ.

	Արական	Իգական
Բժշկական Փակուլտետում	80	97
Գիւղատնտեսական	186	66
Հասարակագիտական	161	59
Պատմագրական	102	87
Տեխնիքական	84	16
	613	325

Ուսանողութեան թիւը կրկնապատկը կ'ըլինէր, եթէ բնակարանային եւ այլ դժուարութիւններ խո-

(*) «Մարտակոչ» թիւ 69, 1924:

չընդոտ չհանդիսանային, մանաւանդ դրսից եկողներին համար:

Այնու ամենայնիւ կան ուսանողներ Ռուսաստանից, Անդրկասպեան երկրից, հարեւան հանրապետութիւններից եւ նոյն իսկ Պարսկաստանից:

130 թոշակաւորներ կան: Ուսանողութիւնը մասնակցում է համալսարանի կեանքին, ուսանողական խորհրդի միջոցաւ: Նա ունի մի քանի գիտական խմբակներ, որոնց մէջ տարւում են սիստեմադէք պարապմունքներ: Նա կազմակերպում է երեկոյթներ, ներկայացումներ, միջֆակուլտետային դասախօսութիւններ, որտեղ կարգում են զեկուցումներ մեր պատասխանատու ընկերները զանազան հրատապ խնդիրների մասին եւ համալսարանի դասախօսները զանազան մասնադիտական նիւթերի մասին:

Ուսանողութիւնը իր հերթին շատաւում է օգտակար լինել Երեւանի շրջակայ դիւղացիութեան: Ամառը մեծ մասնակցութիւն էր ցոյց տալիս մեր բժշկական ֆակուլտետի ուսանողութիւնը, մալաբիայի դէմ մղած պայքարում:

Ուսանողութիւնը ծրագրում է աւելի լայն եւ հաստատ կապ համալսարանի եւ դիւղացիութեան մէջ:

Դասախօսների թիւը ներկայ շրջանում 60 հոգի է, որից.

ուկտոր	1
Հիմնական դասախօսներ	27
Լեկցիօն դասախօսներ	32

Դասախօսների ընդհ. թւի %47 ստացել է իր բարձրագոյն ուսումը ուսական համալսարաններում, %50 եւրոպական եւ %3 ճեմարանում եւ ուրիշ բարձր դպրոցներում:

Դասախօսների վերաբերմունքը դէպի համալ-

սարանը վերին աստիճանի անձուէր է եւ մտերմական դէպի ուսանողութիւնը:

Մենք յոյս ունենք — աւելացնում է ընկտորը — որ Խ. Հ.ի համալսարանը աստիճանաբար ամրացնելով իր ոյժերը եւ զարգանալով՝ կ'արդարացնի այն յոյսերը, որ դրւած են նրա վրայ մեր ժողովրդի կողմից:

Բոլոր դասախօսութիւնները համալսարանում կատարւում են հայերէն լեզուով:

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԷ

Բանւորական ֆակուլտետը բացել է 22 թւի Յունվարից: Տարւոյ վերջում, երբ պարապմունքները վերջացան ուսանողների ընդհանուր թիւն էր 267, ըստ ազգութեան բոլորը հայեր: Նրանցից 228 տղամարդ եւ 34 կին: Ըստ իրենց սօցիալական դրութեան 19 դիւղացի, 53 պաշտօնեաներ մանր բուրժուական ծագումով եւ 175 բանւորներ:

Հասակը 16ից մինչեւ 35:

1923—24 ուսումնական շրջանում բան-ֆակը ունի իր երկու կուրսերում 450 ուսանող 25 դասախօսներով:

Բացել է մի երկրորդ բան-ֆակ, Ալեքսանդրապոլում, որը նոյնպէս ունի 323 ուսանող 2 դասախօսներով:

Ուսումը բան-ֆակում կատարելապէս ձրի է:

Ուսանողներին ձրի բաց են թողնւում նաեւ պրքերն ու բոլոր դասական պիտոյքները:

Թոշակաւորներ ուսանողների մէջ չկան:

Առանձնապէս չեչտելու է այստեղ բան-ֆակի ուսանողութեան եռանդը:

Ստուգումների համար միանգամայն զուելով,

բան-Փակի ներկայ ուսանողութիւնը, իրենից ներկայացնում է բաւականին լուրջ, գիտակից կուլտուրական ոյժ:

Բան-Փակի աւելի թոյլ ուսանողական խմբակները ամառայ արձակուրդներին, չնայելով շոգին, աշխատել են լրացուցիչ դասընթացքներով, լրացնել իրենց գրական պաշարը:

Արհեստական միութիւնները, մեծ օգնութիւն են հասցնում իրենց կողմից բան-Փակի ուսանողութեան: Նրանցից շատերը ունեն որոշ թւով ուսանողներ, որոնց ծախքերը հոգում են:

ԳՊՐՈՑՆԵՐԸ

Մինչև պատերազմը Երևանեան նահանգը ունեցել է 347 զանազան դպրոցներ, 21,500 աշակերտներով:

1921—22 ուսումնական տարում դպրոցների թիւը Հայաստանում եղել է 478, 51,049 աշակերտներով եւ 1,124 ուսուցիչներով:

1922—23 ուսումնական շրջանում աշակերտների թիւը հասնում է արդէն 60,000ի, 558 դպրոցներով:

Այս տարի Հայաստանը ունի, 9 մանկապարտէզ, 547 առաջին աստիճանի դպրոց եւ 10 երկրորդ աստիճանի դպրոց, 69,679 աշակերտներով, որոնց 94 հազար են:

Դասատուներ թիւն է 1279, որից բարձրագոյն կրթութեամբ 138, միջնակարգ կրթութեամբ 658, տարրական կրթութեամբ 483:

Դպրոցներից դուրս ժող. Լուս. կոմիսարիատը ունի նաև մի շարք տեխնիքական, արհեստաւորական դպրոցներ:

Կար ու ձեւի դպրոց, ձեռագործների դպրոց, կազմարարական դպրոց-արհեստանոց, կօշկակա-

րական դպրոց-արհեստանոց, կենդրոնական դպրոց-արհեստանոց, եւ այլն, ուր սովորում են 1184 հոգի 145 դասատուներով:

Դասաւանդութիւնը կատարում է նոր դասագիրքերով եւ նոր ուղղագրութեամբ: Հարկ չկայ ասել, որ կրօնի դասերը դուրս են ձգուած ծրագրից:

Մինչև 21 թւականը Ամերիկեան դպրոցներում կրօն ականդում էր: Խ. Հ.ի կառավարութիւնը, այդ հարցում, երկար բանակցութիւններից յետոյ, ոչ մի զիջում չարաւ եւ ստիպեց որ նրանց դպրոցներն էլ, ուր հայ որբերն են սովորում, ենթարկեն ընդհանուր ծրագրին: Թէ՛ համալսարանում եւ թէ՛ բոլոր դպրոցներում, սկսած առաջին կարգից մինչև լիակատար միջնակարգը, բոլոր ուսումը տարւում է, բաց ի մատեմադիքական առարկաներից, մարքսիստական ուղղութեամբ:

Նախկին Աղանի, Տէր-Ղեւոնդեանի, եւ ուրիշների «Մայրենի լեզու» եւ ուրիշ դասագրքերին փոխարինում են պետական հրատարակութեամբ լոյս տեսած «Կարմիր արեւ» դասագրքերը մի քանի տարիների: Նիւթերն այդտեղ ընտրուած են մեծ խնամքով: Զետեղուած են այնպիսի հատուածներ, որոնց մէջ երևում է ինքր ժողովուրդը, աշխատաւորութիւնը:

Մեծ հաճոյքով կարգացում են Սուրխաթեանի կազմած հաւաքածուները, որ թէև դասագիրք, բայց պարունակում է իր մէջ մեր լաւ գրողների սիրուն կտորները եւ կարող է ընթերցանութեան հիանալի նիւթ լինել:

* * *

Ամերիկական դպրոցներում մեծ ուշադրութիւն էր դարձում պատանիների ֆիզիքական վրայ: Մարմնամարզութիւնը դրւած էր այնտեղ լայն չա-

վերով, եւ «բոյ-սկառու»ները իրենց խաղերի ժամանակ գեղեցիկ տեսարան էին ներկայացնում:

Այդ բանը այժմ մեծ չափերով ձեռք են առել ամբողջ Հայաստանում, պատանի կոմունիստները, կամ ինչպէս անւանում են «Պատ-կոմները»:

Իրանք Ռուսաստանի «կոմսոմոյներն» են, մեզ մօտ ի հարկէ բացառապէս աշակերտութիւնից: Նրանց թիւը այժմ տաս հազարից անց կ'լինի, որովհետեւ ամառը իմ աշնտեղ եղած ժամանակ, նրանք իրենց շարքերում հաշւում էին 8,000 պատ-կոմներ:

Այդ օրերում, նրանք նշանակել էին Երևանում համաժողով, ուր Հայաստանի զանազան վայրերից եկել էին նրանք մեծ թւով:

Ցերեկայ նրանց մարզանքները եւ երեկոյեան գլխաւոր փողոցով նրանց հանդիսաւոր մարշը Փակելներով, ներկայացնում էր մի հիանալի տեսարան:

Նրանք ունեն իրենց օրգանը «Պատ-կոմ» շարաթաթերթը: Տալիս եւ սեպհական ոյժերով ներկայացումներ եւ աշնտեղ, ուր նրանք գնում են, ներկայանում են որպէս կոմունիստական խոչնայի ջերմ հետեւողներ եւ տարածողներ:

16 տարեկանից նրանք միանում են ուրիշ համանման կազմակերպութեան որ գործում է արդէն «Սպարտակ» անունով:

* * *

Մի ինչ որ ամսագրում, հրատարակւած պատերազմից առաջ, եւ հետեւեալ խօսքերը կարդացի, որ Ֆրանսիական յայտնի սօցիալիստ ժան ժորէսը, շարդերի տարին, ասել էր հայերիս հասցէին:

«Հայ ազգը, որ այնքան ցաւերով է տանջուում, որ իր ցեղի նախնական օրօրօցում կրում է ամէն սեռակի ստորացումն եւ բռնի աշխարհակալութեան ամէն տեսակ տանջանքներ. նա, որ իր ցրած տար-

յերով բաղխուում է ամբողջ աշխարհի կապիտալիստական բեժիմի բոլոր բռնութիւններին — կրկնակի կերպով պատրաստ է ընդունել եւ տարածել սօցիալիստական գաղափարը»:

Եւ յիշուի հենց առաջին քայլում երբ մտնում էք Հայաստան, դուք զգում էք արդէն, որ գըտնում էք մի արիւի-կոմունիստական կառավարութեան տերրիտորայում:

Հայաստանի կառավարութիւնը, առանց մաղի չափ շեղելու մարքսիստական ծրագրից, գործում է այդ ուղղութեամբ ամենայն թափով եւ եռանդով եւ նրա ամենամեծ զէնքը այդ գործում — աշակերտութիւնն է, մատաղ սերունդը:

Բացի յիշածս դպրոցներից՝ Հայաստանը ունի. 24 աղումբ, 4 ժողովրդական տուն, 276 խրճիթ ընթերցարան, 60 գրադարան, 82 թատրոն, եւ 4 կինօ:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Պաշտօնապէս Հայաստանի թանգարանը բացւել է 1921 Նոյեմբեր 7ից: Ես երբեք չէի կարող ըստպասել, որ Հայաստանի կառավարութիւնը այդպիսի մի կարճ ժամանակամիջոցում, կարող լինէր կարգի բերել եւ կազմակերպել աչքի ընկնող մի այդպիսի հիմնարկութիւն:

Բայց այն, ինչ որ տեսայ, գերազանցեց իմ բոլոր սպասելիքները: Հայաստանի թանգարանը, որ դեռ իր կազմակերպչական շրջանում է դառնում, հենց հիմա էլ ունի բազմաթիւ նշանաւոր եւ հազազիւտ առարկաներ:

Նրանում հաւաքւած են քարէ, բոնդեայ, եւ երկաթէ դարերից մնացած բազմաթիւ հնութիւններ, ըստ մեծի մասամբ, զուտ հայկական եւ Հայաստանի պեղումներից հանած:

Հայերի նախահայր ինքնազգիները գանկեր 3000 տարւայ: Ալեքսանդրապոլի գաւառում հանւած մամոնտի ժանիքներ, գանաղան դարդեր, յուլունքներ, զէնքեր, դաշոյններ, ապարանջաններ, կաւէ ամաններ:

Ահագին կարասներ, որոնց մէջ մի ժամանակ թաղելիս են եղել մեղնում մեռնողներին, նստած դիրքով:

Նոր Բայազիդի գաւառում գտնւած է մի հրաշալի քանդակագործ սայլ փայտից. փտած լինելու պատճառով, հնար չէ եղել նրան ամբողջովին դուրս հանելու: Նա կոտորուած է, կոտորներն են միայն:

Կայ քրմական մի դօտի վիշապաղունների ժամանակակից:

Այդ բոլոր առարկաները տեղաւորուած են խրնամքով, ապակեպատ, մաքուր ցուցափեղկերում, համարուած եւ շարուած ժամանակագրական կարգով:

Կան դարակներ, ուր դրւած են Հայաստանում ապրող ազգերի տիպեր, բնական մեծութեամբ եւ հագուստով: Հայ ձեռագործների մեծ քանակութիւն, բազմաթիւ առարկաներ հայկական սնայնագործութիւնից:

Ուշադրութեան արժանի է Մուշից բերւած Առաքելոց վանքի դուռը 1134 թիւն շինւած:

Դա մանրանկարներով դարդարուած մի հրաշալի ձեռագործ է, սեւ ամուր փայտից, կենդանիների, ծաղիկների եւ օրնամենտների նուրբ քանդակով:

Միւսնոյն տեղից բերւած է մաղաղաթի վրայ գրւած մի հայկական «ձառընտիր», որի բոլոր երեսները դարդարուած են գունաւոր ծաղիկներով:

Թէ դուռը եւ թէ այդ «ձառընտիր»ը ոուս գինւորները իրենց նահանջի ժամանակ, բերել են ծախելու Թիֆլիսում: Դուռը նրանցից խել էր կառավարութիւնը, իսկ դիրքը ծախուած է եղել ինչ որ

խանութպանի եւ հազիւ հնարաւոր է եղել նրա մի մասը միայն ազատել կորստից:

Կան մեծ թւով արծաթեայ, ոսկեայ եւ պղղրնձեայ հայկական դրամներ, Արշակունեաց եւ Ռուբինեան շրջաններից: Կան գրական-պատմական նշանակութիւն ունեցող պահարաններ, ուր պահւում են Աղամեանի, Արծրունու, Նալբանդեանի, Սունդուկեանի, Պատկանեանի, Աղաեանի եւ ուրիշ հայ գրողներին եւ հասարական գործիչներին պատկանող գրութիւններ եւ իրեղէններ:

Նալբանդեանի պահարանում, նրա շատ գործածական առարկաների հետ, կան նաեւ 2 պիստօլեաներ, որ գնել էր Գերցենի եւ Բակունինի հետ միասին, կայ նրա գրագրութիւնը վերջիններիս հետ:

Ռ. Պատկանեանի պահարանում կայ նրա նամակի պատճէնը Գլատստոնին եւ նրանից ստացած պատասխանը: Մի ոսկէ ժամացոյց, որ նա ստացել էր Զարից, իր «Պետրոս մեծը» թարգմանութեան համար:

Թանգարանի հինգ սենեակներ, յատկացրած են պատկերասրահների:

Երեքում դրանցից հայկական մասն է, ուր կան ցուցադրուած Այվազովսկու, Փաղէոսեանի, Բաշինջաղեանի, Սարեանի, Աղաջանեանի, Շամչինեանի, Մախոխեանի եւ այլոց բազմաթիւ նկարներ:

Ներկայացրւած են նաեւ մեր Փուտուրիստները յանձին Շարբարչեանի եւ ուրիշների:

Կայ Միքայէլեանի մի գեղեցիկ քանդակը «Կոտրած կուժը» եւ Գիւրջեանի «Շարխապին»:

Մի սենեակ յատկացւած է եւրոպական գեղարւեստին, մի սենեակ ուսասկանին:

Պէտք է լինի եւ արեւելեան մաս:

Ռուս նկարիչներէլ կան՝ Վերչչազինի, Լեւիտանի, Բօգոլիւբովի եւ ուրիշների գործերը:

Կան պարսկական մինիստրներ եւ ճապոնական ու չինական ասեղնագործ աշխատանքներ :

Այդտեղ պահուած են մեր հայ պարբերական մամուլի շատ տարիների կաղմած եւ մաքուր պահուած հաւաքածուները :

Կայ մի յատուկ սենեակ, ուր հաւաքուած են յեղափոխութեան վերաբերեալ նիւթեր թէ գրաւոր եւ թէ ձեռագիր :

Այդտեղ կայ Դաշնակցութեան ամբողջ պատմութիւնը :

* * *

Թանգարանը կառավարուած է վարչական մի կօլեգիա, որի անդամներն են Երւանդ Լալաեան, խմբագիր ազգագրական հանգէսի, Երւանդ Շահագիւ եւ նկարիչ Սարեան :

Լուս. Ժող. կոմիսարիատի կողմից կօլեգիայի մէջ մտնում է եւ մի կոմմունիստ : Ներկայումս դա Հայկ Եաղուբեանն է :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՒՊԵԱՆ

Պօսելով Հայաստանի Թանգարանի մասին, մենք չենք կարող մի րոպէ կանգ չառնել այն հարցի վրայ թէ ինչ է ներկայացնում իրենից այժմ, Հայաստանի Պօմպէան, ուր պրօֆէսօր Մառ, մի շարք տարիների ընթացքում, որպէս հետեւանք իր անխոնջ աշխատանքների կաղմել էր մի աչքի ընկնող Թանգարան :

Ահա թէ ինչ է ասում, այնտեղերը նորերս անցած մի ճանապարհորդ :

Անին աւերակ է, այս խօսքի ընդարձակ իմաստով :

Վերջին տարիների անցքերը, իրենց ճակատագրական անխուսափելի հետեւանքն ունեցան Հայաստանի Պօմպէի վրայ, եւ այն բոլորը ինչ որ գտնուած եւ հանուած էին հողի տակից վերջին երկու երեք տասնամեակում, ոչնչացրած են :

Այն սպիտակ տնակը, ուր իջնում էին ճանապարհորդները եւ անւանում էր հիւրատուն՝ քանդուած է մինչեւ հիմքը :

Քանդուած են հիմնովին վերջին տարիներում պրօֆէսօր Մառի ձեռքով շինուած այն բոլոր սրբատաշ ու փարթամ շէնքերը, որոնց մէկ մասը նա դարձրել էր մուզէյ, եւ ուր հաւաքել ու դասաւորել էր Թանկարժէք իրեր ու արձանագրեր, իսկ միւս մասում ապրում էր ինքը :

Մեծ աշտարակը կանդնած է, իսկ նրա մօտ գտնուած Հնագարանը, որի մէջ գտնուած էր Գազիկ Թագաւորի արձանը, եւ ուր հաւաքուած եւ տարուած էին, հողի տակից հանուած Թանկարժէք հնութեան յիշատակներ՝ աւերուած են :

Այդ շէնքի դռներն ու պատուհանները չկան : Չկան այդտեղ շարուած պահարաններն ու արկղները, որոնք լիքն էին զանազան իրերով : Գազիկի արձանը փչրուած եւ մանր կտորների է վերածուած :

Վերջին տարիները Մառը մուզէի էր վերածել նաեւ Փրկչի եկեղեցին մաքրելով եւ կարկտելով այն ու զնելով դռներ ու պատուհաններ :

Այժմ աւերուած է եւ այդ շէնքը : Հնագարանի վիճակին է ենթարկւել նաեւ Նախշի եկեղեցին :

Պրօֆէսօր Մառին աջողւել էր պեղումների միջոցով գտնել Անիի նախկին ջրանցքը : Քաղաքի զբլիտուր փողոցի մէջտեղը կար մի փորածք, որտեղից երեւում էին ջրանցքի խողովակները :

Այժմ լցուած է այդ փորածքը եւ ոչ մի հետք չի մնացել :

Աւելի տխուր բախտի են արժանացել պրոֆէսոր Մատի վերջին տարիների գիւտերը:

Դարերի ընթացքում անվնաս էին մնացել հողի տակ, իսկ այժմ փճացել են: Նոր հանած այդ կոթողներից շատերը փլուլ էլ են:

Կուսանաց եկեղեցին, միջնաբերդը, Լուսաւորչի, Աբուղամբենց եւ Վրաց եկեղեցիները եւ գորանոցը բոլորովին քայքայւած են:

Անիի հնութիւններից հնարաւոր է եղել, նոյն իսկ գնդակների տակ, պատերազմական շրջանում, ազատել եւ Երեւանի թանգարանը բերել 15 ձիու րետ:

Այդ ազատած հնութիւնների մէջ նշանաւոր է մի գրքակալ, ամբողջովին մի կտոր սեւ փայտից քանդակւած, որի վրայ կան փորագրւած նուրբ զարդանկարներ:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆԸ

Թանգարանին կից, միեւնոյն շինութեան մէջ, տեղաւորւած է Հայաստանի կառավարութեան մի ուրիշ խոշոր եւ նշանաւոր հիմնարկութիւնը՝ դաժողովրդական գրադարանն է, որով նա ամենայն իրաւամբ կարող է պարծենալ:

Նրան կառավարում են Երեւանի Թաղիանուկան, 1917ին Բագում հրատարակւող յայտնի Գործ ամսագրի խմբագիրներից մէկը, եւ պրոֆէսոր Սաչատրեան Պոլսից: Ամառը, իմ այնտեղ եղած ժամանակ, գրադարանը դեռ եւս պատրաստ չէր բոլորովին:

Յատակի վրայ կոյտերով դասւած էին գրքեր, ստացւած Անդրկովկասի բոլոր կողմերից, նրանց թիւը տասնեակ հազարների էր հասնում:

Կան գրեթէ մեր բոլոր պարբերական հրատա-

րակութիւնների տարեկան հաւաքածուները, թէ կովկասում եւ թէ դուրսը Պոլսում, վեհնտիկում եւ այլուր հրատարակւած:

Հայաստանի այդ գրադարանը, որ հաւանակաւորէն ունի այժմ 70—80 հազար հատոր, հաւանական է, որ կարճ ժամանակից յետոյ կունենայ հայկական տպագրութեան եթէ ոչ լիակատար ամբողջութիւնը, դոնէ նրա խոշորագոյն մասը:

Գրադարանը ունի եւ իր ընթերցասրահը, ուր առաւօտ կանուխից, երբ նա բաց է աւելում, լիքն է մեր երկսեռ պատանիներով եւ երիտասարդներով, մեծ մասամբ աշակերտութիւնից:

Ընթերցասրահը լիքն է միշտ, մինչեւ փակուելը:

ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ

Հայաստանը ունի իր պետական թատրոնը Երեւանում:

Կառավարութիւնը ամէն միջոց դործ է դնում, ունենալ միշտ լաւ ոյժերից կազմւած թատերախումբ: Երեւանի բեմի վրայ խաղացել են եւ խաղում են հայ բեմի ամենայայտնի դերասան, դերասանուհիք:

Առաջին տարին նա ունեցել է 5.000 բուրլու բաց ոսկով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵՆ»

Հայաստանի Օգնութեան Կոմիտէն, կամ ինչպէս կրճատւած ասում են «Հոկ»ը, առաջ եկաւ 1921 թւին, երբ Հայաստանի նոր կառավարութիւնը տեսաւ, որ առանց կողմնակի օգնութեան, նամանաւանդ առանց արտասահմանեան հայ գաղութների աջակցութիւնը ունենալու, այդպիսի մի աւել երկրի շինարարական գործը, որտեղ խմբւած էին հա-

րիւր հազարաւոր դաղթականութիւն քաղցած ու տկուր, իր ոյժերից վեր էր:

«Հոկ»ի գործունէութեան առաջին շրջանը թոյլ է: Նա չունի կանոնաւոր հաղորդակցութիւն արտասահմանի հետ եւ պէտք է ասած որ արտասահմանեան գաղութահայերի բացարձակ մեծամասնութիւնը չէին հաւատում Հայաստանի բոլշեւիկ կառավարութեան:

Նրանից խորշում էին:

Բայց կամաց կամաց, երբ սկսում են այն կողմերից հատուկներ եկողները կողմից մանրամասն ծանօթութիւն երկրի իրականութեան, երբ նրանք վերադառնալով իրենց տեղերը, բացատրում են թիւրիմացութիւնը, սառոյցը սկսում է փոքր առ փոքր հալչիլ, եւ թէեւ զգուշաւոր վերապահութեամբ, բայց եւ այնպէս նրանք սկսում են դանդաղ, բայց աւելի եւ աւելի մօտենալ երկրին եւ աջակցիլ նրա կառավարութեան:

Այդ կողմից խոշոր նշանակութիւն ունեցաւ Հոկտեմբեր 10ի Երեւանում դումարած համաժողովը:

Փարիզի, Լոնտոնի, Վիեննայի, Բեռլինի, Եդիպոսոսի եւ Պարսկաստանի ներկայացուցիչները, որոնք մնալով մի երկու շաբաթ Հայաստանում, մանրամասն ծանօթացել էին տեղում կատարւած եւ կատարելիք բոլոր աշխատանքներին, միաբերան վկայում էին, որ այն ինչ որ նրանք տեսան, նրանք երբեք չէին սպասում Հայաստանից:

Փարիզահայ գաղութի ներկայացուցիչ Կարիկեան, այդ վերջինների անունից յայտնում էր, որ այնտեղի գաղութի մէջ միտք է յղացել, չորացնել Հայաստանի ճահիճները եւ այդ հողերի մշակութեան համար պիտանի դարձնելը:

Հ. Բ. Ը. Միութեան ներկայացուցիչը բերել էր

իր հետ 1000 Անգլիական Փունդ սղերլինդ, եւ խոստանում էր այդ ընդարձակ գաղութահայութեան կողմից լայն օգնութիւն երկրի շինարարութեան, մօտիկ ապագայում:

Հայաստանից դուրս գտնւող Ռուսահայ գաղութահայերից, Թիֆլիսն էր միայն, որ աչքի ընկնող գործունէութիւն էր ցոյց տւել:

Նա Ամերիկական կոմիտէի հետ համաձայնութեամբ, կազմել է մի Փոնդ 10 հազար տոլարի, որով ձեռք են բերելու երկրի համար հարկաւոր եղող դիւղատնտեսական գործիքները: Անցեալ տարւանից արդէն, այդ գործիքների նրանց բաց արած պահեստը գործում է Ալեքսանդրապոլում:

1922—23 Հոկտեմբերից — Հոկտեմբեր իր վերջին տարեշրջանում, «Հոկ»ը ստացել է, մեծ մասը ի հարկէ արտասահմանից Պոլսի եւ Բաթումի վրայով, — 288 հակ հազուստեղէն եւ կօշիկներ, 29 արկղ չորացրած ամերիկեան կաթ, 76 վագոն ցորեն, 13 արկղ դեղօրայք, 73 արկղ սապօն, 223 փութ բրինձ, 90 փութ լուրի, 69 արկղ գրենական պիտոյքներ (թուղթ, թանաք, եւայլն), 4 արկղ ատաղձագործական պիտոյքներ:

Փողով՝

Պոլսից 1522 լիրա ոսկով, Թաւրիզից 1350 բուրլի ոսկով, Օտեսայից 8 ոսկի, Ամերիկայից Կաթողիկոսի միջոցաւ 650 տոլար, Մոսկուայից 300 շերտօվեց (3000 բուրլի):

Այդպէսով «Հոկ»ը իր գործունէութեան երկրորդ տարեշրջանում սնեցել է մուտք փողով եւ ապրանքով՝ 266,609 բուրլի ոսկով: Եւր 234,239 բուրլի ոսկով:

Առ 1 Հոկտեմբերի 23 թւի, մնացորդ ապրանքով 32,370 բուրլի ոսկով:

Երկար կ'լինէր ի հարկէ եւ հետու կ'տանէր ինձ

պատմել թէ ո՞ւմն եւ ի՞նչպէս է տրեւել այդ բոլորը «Հոկ»ի կողմից:

Այդքանը կարելի է բաւական համարել, որ քննիչ յանձնաժողովը շատ մանրամասն եւ բարեխիղճ կերպով քննելով նրա հաշիւները, տեխնիքական մի քանի պակասութիւնների հետ միասին, գրտել էր, որ գործը նա տարել է շատ կանոնաւոր:

Ռուսահայ մեծ գաղութահայերից աչքի էր ընկնում համաժողովում Բազելի, Նոր-Նախիջևեանի եւ Րոստովի ներկայացուցիչների բացակայութիւնը:

«Հոկ»ը առաջիկայում մեծ դեր ունի խաղալու մեր երկրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ

Գաղթականութիւնն ու կոտորածները բնականաբար թողեցին իրենց ետեւից մի ահապէն թիւ որբերի:

Սորհրդային կառավարութեան սկզբնական շրջանում Հայաստանում կային շատ մեծ թւով որբեր:

Իրանցից մի մասը մեռնում է, մի մասը անցնում է ուրիշ կողմեր եւ այժմ Հայաստանի 22 եւ Ամերիկական երեք մեծ որբանոցներում կան 30,000 ի մօտ որբեր:

Ամերիկեան որբանոցները ուսման կողմից, գտնւում են Սորհրդային իշխանութեան հսկողութեան տակ:

Ամենամեծ հոգեկան բաւականութիւն պատճառեց ինձ մօտիկից ծանօթանալը նրանց կեանքի պայմաններին, նրանց նիստ ու կացին:

Հայ որբերը, Ամերիկական որբանոցներում, տեղաւորւած են ընդարձակ բնակարաններում, քաղաքից դուրս, մաքուր օդի մէջ:

Նրանց կրթում են ամերիկական դրութեամբ

Սովորում են աշխատասիրութիւն, արհեստ, կարգապահութիւն, մաքրութիւն: Աղջիկները անպայման կար ու ձեւ, տղերքը որեւէ արհեստ կամ գիւղատնտեսութիւն: Ունեն տարրական եւ միջնակարգ դպրոցներ, ուր ցանկացողները բացի ուսուցիչից կարող են սովորել նաեւ անգլիերէն:

Կրօնը դուրս է հանւած ծրագրից:

Ունեն արհեստանոցներ, կօշկակարի, դերձակութեան, լացարարի, եւայլն:

Ունեն թատրոնական դահլիճ, իրենց միջից թատերախումբ եւ երկու նւագարխումբ: Գարնան ունեցել են եւ կինօ:

Չորս կողմ օրինակելի մաքրութիւն, էլիքտրական լուսաւորութիւն, ամէն շաբաթ անպայման բաղնիք եւ սպիտակեղէնների փոխել:

Ունեն մանկապարտէզ, ամէն տեսակ խաղալիքներ երեխաների համար, Փութպոլ եւայլն:

Պարտադիր մարմնամարզութիւն: Սովորում են երաժշտութիւն, նոյն իսկ պարեր:

Կայ յատկապէս կոյրերի համար դպրոց, ուր սովորում են 60 հոգի: Նրանք սովորում են եւ ձեռագործներ, կոյրերին մատչելի:

Ունեն երեք հիւանդանոց, որոնցից մէկը թոքախտի:

Ունեցել են նաեւ մի հիւանդանոց, բորոտների, քաչալների եւ տրախոմայով հիւանդների համար:

Այդպիսիներին թիւը շատ մեծ է եղել սկզբներում. հիմա բոլորը բժշկւել են եւ ոչ մէկը չկայ տառապաւ, այդպիսի հիւանդութեամբ: Հարկ չկայ սեւել, որ բոլորը կերակրւում են լաւ, ունենալով պարզ եւ սննդարար կերակուրներ մեծ մասամբ մսեղէնով եւ կաթնեղէնով:

Վերակացունների մէջ կան ամերիկուհիներ:

Վերջին թուրքական արչաւանքին, Կարսում,

փախուստից յետոյ մնացել էին այնտեղի որրանոցներում 2000ի մօտ որրեր :

Թուրքերը սկսել էին յետոյ, նրանց ուղարկել Ալեքսանդրապոլ, բայց նրանք եղել են այնպիսի դժբախտ մէջ, որ կէսը դրանցից կենդանի տեղ չէ հասել :

Շատերը ստուել են ճանապարհին : Ծառայողը պատմում էր, որ երբ վաղոնից հանում էին նրանց, ներս բերելուց մի քանի ժամ յետոյ մեռնում էին :

Մեծ որրերից աղջկերքը ծառայում են հիւանդանոցներում որպէս գթութեան քոյրերի օգնականներ, նրանք սովորում են միեւնոյն ժամանակ այդ գործը, եւ որոշ ժամանակից յետոյ, վկայական ստանալով, նրանք Հայաստանի պէտք եղած տեղերում մտնում են ծառայութեան :

Իմ Ալեքսանդրապոլ գալուց մի քանի օր առաջ տեղի էր ունեցել մի փոքրիկ հանդէս, ի պատիւ նորաւարտ 14 այգպիսի քոյրերի :

Որրանոցի գլխաւոր կառավարիչ Մր. Ս. Եարօ, իր խօսքի մէջ նրանց ուղղւած, հետեւեալն էր ասել :

«Մենք ուրախ ենք, որ գործում ենք, մի այնպիսի ազգի մէջ, որ ապացուցել է պատմականօրէն, որ նա ընդունակ է աշխատանքի եւ գիտութեան» :

Ամերիկայից ստացւող մթերքների կենտրոնական պահեստը գտնւում է Ալեքսանդրապոլում, ուր կենտրոնացած է նրանց բոլոր գործունէութիւնը, ամբողջ Անգրկովկասի համար :

Պահեստները լիքն էին ամէն տեսակ ապրանքներով : Դեղօրայք, ալիւր, սապոն, կօնսերվ, շաքար, կակաօ, կօշիկներ, հագուստեղէն եւայլն շատ մեծ քանակութեամբ :

Այդ ապրանքների մի մասը, գլխաւորապէս հագուստեղէնը փոխւում է այն մթերքների հետ, ո-

րոնց որրանոցները պէտք են ունենում գնելու ներքին շուկայից, օրինակ, թարմ բանջարեղէն, կարտօֆիլ, մեղր, տախտակ եւայլն :

Տեղացիք մեծ քանականութեամբ փողի տեղ վեր են առնում հակերով շորեր, իւրաքանչիւր հակը 3—4 փութի ծանրութեամբ : Նրանցում լինում են ամէն տեսակի հին շորեր, գլխարկներ եւայլն, որ ինչպէս երեւում է Ամերիկացիք յատկապէս բաժանելու համար, հաւաքում են իրենց երկրում : Գինը իւրաքանչիւր հակի համար հինգ օսկի (50 բուրլի) :

Հակը չի բացւում եւ վերցնողի բախտից է կախւած թէ ինչ կ'լինի նրա մէջ :

Լինում են հակեր, որոնցից դուրս են գալիս պալտօներ կամ ուրիշ թանկագին շորեր մեծ քանակութեամբ, լինում է եւ հակառակը, ուր աւելի շատ գլխարկներ եւ ներքնաշորեր են լինում :

Պատահում է նոյն իսկ անակնկալ : Շատերի դրպաններում գտնւում են տոլարներ :

Մէկի գրպանում, դուրս էր եկել մի այգպիսի մակագրութեամբ տոմսակ անգլիերէն լեզուով :

«Ում որ ընկնի այս իմ վերարկուն, թող իր հասցէն յայտնի ինձ, ես նրան կուղարկեմ օգնութիւն», ներքեւը իր ամերիկական հասցէն :

Ալեքսանդրապոլի բաղարում մի քանի տասնեակ խանութներ, պարապում են այդ շորի առուտուրով, որը մի ահագին բարիք է թէ քաղաքացի չբաւոր դասակարգի եւ թէ շրջակայ գիւղացիների համար :

Նրանք շատ մատչելի գներով, կարողանում են իրենց համար պէտք եղած հագուստը ձեռք բերել : Վերջերս միայն մի փոքր թանկացան նրանք, որովհետեւ կառավարութիւնը իր կողմից սկսեց գնողներից հարկ առնել, իւրաքանչիւր հակից 3 չերվոնեց :

Արհեստանոցում բանող որրերը, ստանում են

որոչ վճար, միայն այդ վարձը չի տրուում նրանց, այլ գրեւում նրանց հաշիւին եւ տրուում է նրանց միանգամից, նրանց չափահաս դառնալիս:

Նկատելի էր ընդհանուր գոհունակութիւն:

Որբերից ոչ մի գանդատ: Ամենայն եռանդով, նրանք պաշտպանում են նոյն իսկ, իրենց հիմնարկութեան թէ շահը եւ թէ պատիւը:

Գլխաւոր կառավարիչ Մր. Ե. Եարօ, Հայաստանում (Վան) երկար տարիներ ապրած, մի նախկին միսիօնար է: Գիտէ հայերէն: Պահեստներէ վարիչն է մի ուրիշ Ամերիկացի, Մր. Գուբ, մի շատ խստապահանջ եւ կարգապահ Եանքի:

Նրա օրօք գողութիւններ պահեստից, որ սովորական են եղել առաջներում, տեղացիների կառավարութեան ժամանակ, վերջ է ստացել:

Ամառը Ամերիկայի մի քանի շտատներից եկած են եղել մի խումբ ներկայացուցիչներ:

Նրանց պատւին, որբերը կազմել են ի միջի այլոց եւ մի փառաւոր տօնական պրօցեսիա:

Սումբ, խումբ, իւրաքանչիւրը իր արհեստին պատկանող գործիքներով, ծաղիկներով եւ կանաչներով զարդարած կառքերի մէջ, նրանք մի գեղեցիկ տեսարան են եղել ներկայացնելիս:

Ամերիկացիների հետ գտնուող յատուկ սինեմօդօգրաֆը, հանել էր այդ հանդէսը լեւտի վրայ, Ամերիկայում ցուցադրելու համար:

Միջնակարգ դպրոցի որբերը ունեն եւ իրենց թէ եւ ձեռագիր, շարաթաթերթերը «Միաձան» եւ «Փարոս», ուր երեւում են նրանց բանաստեղծութիւնները եւ ուրիշ գրաւածքները:

* * *

Ամերիկական կոմիտէն, որ իր գործունէութիւնը սկսել է Հայաստանում, դեռ եւս Սորհրդային

իշխանութիւնից առաջ, երկրի ճգնաժամի օրերին, երբ սովը սպառնալի կերպարանք էր ընդունել մեր երկրում, առանց չափազանցելու, կարելի է ասել, որ իր այդ մի քանի տարւայ գործունէութեան ընթացքում, հարիւր հազարաւոր հայ ընտանիքներ ազատել է անխուսափելի կորստից:

Նա վերկել է Հայաստանի մանուկ սերունդը:

Որպէս զի դադարաւոր ունենալ թէ ի՛նչ գումարներ է նա մտնում Հայաստանում, բաւական է ասել, որ 1921 թւին, մի տարւայ ընթացքում նա ծախսել է 10 միլիոն րուբլի:

Անդրկովկասի համար, Ամերիկայից ստացւած օգնութեան 780ը գործադրել է Հայաստանում:

Նա բացի որբերը պատուարելուց, շինել է Հայաստանում մի քանի տասնեակ վերստ շօսէ, նորոգել է մի քանի հարիւր տներ եւ կանգնեցրել է չորս ելեքտրակայարան:

* * *

Մի բարդ եւ պատասխանատու խնդիր է ծառանում այժմ, մեր կառավարութեան առաջ:

Մեծացող եւ չափահաս դարձող որբերը, մեր երկրի համար մի խոշոր սօցիալական շարիք կարող են դառնալ, եթէ նրանք չկապւին հողին:

Պետական եւ Ամերիկոմի մանկատների որբերին, պէտք է այսպէս ասած «գործի դնել», հեռացրնել նրանցից ճրիտկերութեան գաղափարը եւ պատրաստել նրանցից աշխատաւորական երկրի համար պիտանի քաղաքացիներ:

Այդ տեսակ որբերի մի մասը արդէն աշխատում է Լուս. Ժող. կոմի բացած արհեստանոցներում: Այդ արհեստանոցները, թէ եւ շատ մեծ դժարութիւններով, բայց եւ այնպէս արդէն կազմակերպւած են: Սակայն այնտեղ տեղաւորւած որբերի

Թիւրք քիչ է, մինչդեռ ըստ ծրագրի այս 1924 թ. ընթացքում պէտք է գործ դնել 2,000 որր:

Այդ մասին աշխատում է յատուկ կոմիտէ, որ պէտք է կազմակերպի մանկական գիւղատնտեսական գաղութներ:

Այդ կոմիտէն 10 տարւայ ընթացքում պէտք է հիմնէ գաղութներ 30,000 որրերի համար:

Գաղութների մանկական հանրակացարանների հիմնական նպատակն է, ստեղծել այնպիսի սլայմաններ, որ երեխան կարողանայ ապրել բացօթեայ, առողջ կեանքով, որի ժամանակ նրա Ֆիզիքական եւ հոգեկան ուժերը կանոնաւոր կերպով կ'զարգանան: Այդպիսի մի գաղութ գոյութիւն ունի Աշտարակ գիւղի մօտ, որը դեռ եւս Պ. Իշխանութեան Հայաստան մտնելուց առաջ, հիմնել են Մոսկուայի գաղութահայերը:

Այդտեղ կան 1200 որրեր: Ունեն 100 տեսիատին հող, 30 լծկան եւ 200 ոչխար:

Երկիրը մշակում են իրենք, առանց գիւղացիների օգնութեան: Ունեն արհեստանոցներ, կօշիկի, հիւանի եւ երկաթագործի:

Գաղութը կառավարում է գերմանական գիւղատնտես Մկրտիչ Տէր Մկրտիչեան:

1923ի տարեշրջանին ունեցել են 2000 փութ ցորեն:

Որրերի այդ գաղութը, աննշան բացով, ապրել է անցեալ տարի իր ստացած արգիւնքով: Ունեցել են հիանալի բանջարանոց, որ բաւարարել է իրենց բոլոր կարիքները:

Այժմ որրերի համար յատկացրած են Սարգարաղի շրջակայքում այն տեղերը, որոնք անպէտք են եղել մշակութեան համար, որպէս ճահճային տեղեր:

Մասնազէտ ինժինեընների ձեռքով այդ հողերը

չորացելուց յետոյ, սկսելու են հիմնել գիւղեր Շվէյցարիական տիպի տներով:

Իւրաքանչիւր գիւղը 100 տնից: Գիւղը կ'ունենանայ փուռ, դպրոց, բաղնիք, հիւանդանոց, ընթերցարան:

Ըստ ծրագրի երբ որբը դառնում է 21 տարեկան, նրան ամուսնացնում են իր սրտի ուզած մի որբուհու հետ, տալիս են մի տուն, մի սայլ, մի զոյգ եղ, մի կով եւ մի տեսիատին հող: Ուտելիքի պաշար, սապոն եւ սերմացու:

Մի տարի տանելով իրենց տնտեսութիւնը, միւս տարին, իրենց բոլոր ունեցածով նրանք մտնում են արդէն գիւղական համայնքի մէջ:

* * *

Տեղաւորելով եւ բաւարարելով ամէն բանով այդքան հազար որբ երեխաներին, թւում էր, որ խնդիրը փակում էր արդէն: Սակայն իրականութեան մէջ այդպէս չէ: Թէ Պարսկաստանի եւ թէ Տաճկաստանի կողմից եւ ուրիշ տեղերից անընդհատ գալիս են գաղթական մնացորդներ: Գալիս են եւ գաւառներից: Փողոցներում շարունակ երեւում են անապաստան, այդպէս ասած «փողոցի երեխաներ», կեղտոտ, գլխարաց, պատառոտած չորերով: Դրանց հաւաքում է Լուսաւորութեան ժող. կոմիտարիատի «Մանկական գլխաւոր վարչութիւնը», որի պաշտօնն է երեխաներին հաւաքել, պատսպարել, կերակրել եւ դաստիարակութեան մասին մտածել:

Ամիսների ընթացքում, գրանք մի պատկառելի թիւ են կազմում, որոնք քիչ մտահոգութիւն չեն պատճառում Հայաստանի կառավարութեան:

ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Կառավարութիւնը աչքաթող չէ արել նաեւ ժողովրդի առողջապահութեան հարցը:

Ամենագլխաւոր հիւանդութիւնը, որ տարածւած է Հայաստանում, դա մալարիան է, որ քայքայում է ժողովրդի առողջութիւնը:

23 թւի ամառանից սկսած Հայաստանում բացւած է արդէն շարժուն հիւանդանոց, որ հսկայական նշանակութիւն պիտի ունենայ երկրի համար:

Դա այն կեդրոնն է, որ պիտի ղեկավարի ամբողջ պայքարը այդ հիւանդութեան դէմ:

Չորս ամսայ ընթացքում մինչեւ Հոկտեմբերի սկիզբը, նա ունեցել է 15,403 հիւանդներ, որոնք այցելել են 52,747 անգամ:

Տաճկական արշաւանքները մի ժառանգութիւն էլ թողին մեր երկրի այն մասերում, ուրտեղից անցան նրանք:

Դա վնասակար հիւանդութիւնն էր, որը մանաւանդ Ալեքսանդրապոլի շրջանում ահագին չափեր է ստացել:

Թէ «Հայաստանի Օգնութեան Կոմիտէն», եւ թէ կառավարութիւնը իր կողմից ուղարկել են այդ կողմերը թէ դեղօրայք, թէ պրեպարատներ եւ թէ բժշկական թուղիկ խմրեր:

Թոքախտաւորների համար Հայաստանը ունի Դիլիջանի եւ ուրիշ սպաքինարաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՄՈՒՆ

Առաջ քան կ'անցնէինք Հայաստանի տնտեսական կեանքը նկարագրելու, մի քանի խօսք էլ մեր ներկայ գրականութեան, մամուլի մասին:

Ես ի հարկէ յաւակնութիւն չունեմ, ներկայ

գրականութեան մանրամասն ուսումնասիրութիւնը տալու: Իմ արածը շրջիկի մի թուղիկ ակնարկ է, ինչ որ ես կարողացել էի նկատել, ինչ որ աչքի էր խօսում:

1918ի կիսից սկսած, մինչեւ վերջին 20—21 թւականները թէ Թիֆլիսում եւ թէ Հայաստանում օրաթերթեր թէ եւ գոյութիւն ունեցել են, սակայն շատ սահմանափակ թւով:

Հրատարակել են բաւական անկանոն, մանաւանդ Հայաստանում, ուր նրանք լոյս են տեսել շատ անգամ դեղին, փաթթելու թղթերի վրայ, ամենալատ տպագրութեամբ:

Գրական աչքի ընկնող աշխատութիւններ հայերէն լեզուով, այդ թւականներին գրեթէ չի երեւում, կամ եղածը շատ չնչին է:

Եւ հասկանալի է ի հարկէ: Պատերազմի եւ քաղաքական կռիւների ժամանակ, ի՞նչ գրականութիւն կարող էր զարգանալ, երբ երկիրը տակն ու վրայ էր լինում:

22—23 թւականներից սկսած, հրատարակչական գործը մեր մէջ սկսում է փոքր առ փոքր կենդանանալ:

Պետական հրատարակութիւնը Հայաստանում տպագրում է մի շարք հայերէն գրքեր, ըստ մեծի մասին զուտ կուսակցական եւ մասնագիտական բովանդակութեամբ: Աւելին, հաղիւ թէ ներկայ պայմաններում, գոնէ ընթացիկ տարիներում կարելի լինէր նրանից պահանջել, քանի որ բացի այդ, նա ծանրաբեռնւած է մեծ մասամբ նաեւ դասագրքերի տպագրութեամբ, որոնք կատարւում են ամենօրն թափով:

Կառավարութեան առաջ կայ այնպիսի մի ստիպողական կարիք, ինչպիսին է մատակարարել համալսարանին պէտք եղած ձեռնարկներ եւ 70 հա-

զարից աւել աշակերտութեան համար դասազրբեր:

Հայաստանի կառավարութեան, քաղաքական բովանդակութիւն ունեցող հրատարակութիւնների մէջ, առաջին տեղը կ'ընեն անկասկած, Ս. Կասեանի խմբագրութեամբ շուտով հրատարակելիք «Կարլ Մարքսի եւ Ֆրեդրիխ Էնգելսի» ղործերը հայերէն լեզուով:

Այդ թարգմանութիւնները բաղկացած են լինելու տասը հատորներից, իւրաքանչիւրը 500 մեծադիր երեսներից: Հատորներից մէկը, որ պարունակելու է «Կապիտալ»ի առաջին հատորը, բաղկացած է լինելու 800 էջից:

Տպագրուում են նորագոյն գիտական եւ բժշկական հայ բառարաններ. քիմիայի, մարդակազմութեան, պատալօգիայի, հանքարանութեան եւ այլն հայերէն դասագրքեր եւ համալսարանական դասընթացքներ:

Հայ լեզուն գեղեցիկ կերպով յարմարուում է եւ դործնականին եւ տեխնիկային եւ գիտութեան:

Որպէս պարբերական հրատարակութիւններ, Հայաստանում այժմ լոյս են տեսնում հետեւեալները:

Կառավարչական եւ կուսակցական օրգան «Սորհրդային Հայաստան» մեծ օրաթերթը: Անցեալ ամառ նա տպագրուում էր 4,000 օրինակ:

Բովանդակութեան մասին, եւ աւելորդ եմ համարում խօսել, որովհետեւ Սորհրդային կառավարութեան եւ բոլոր Ֆետերացիաներում հրատարակող քաղաքական այդպիսի օրաթերթերը, որպէս միեւնոյն կուսակցութեան եւ միեւնոյն ուղղութեան պատկանող օրգաններ, ոչ մի տարբերութիւն չունեն իրարից, իրենց բովանդակութեամբ: Նրանցում արծարծուում են ըստ մեծի մասին, ի բաց առեալ քաղաքական տեսութիւնը, կուսակցական, պրոֆեսիօնալ, մասնագիտական եւ նման հարցեր:

Բանասիրական մաս, Ֆելիտօններ, վէպեր, եւ այլն, որ նախկին թերթերի անբաժան մասերն էին կազմում նրանցից, այժմեայ թերթերը զրեթէ չունեն, եւ եթէ ունենում են, շատ քիչ:

Հրատարակուում է գիւղացիների համար «Մածկալ» օրաթերթը, որ բացի սովորական ընդհանուր հարցերից, մեծ ուշադրութիւն է դարձնում գիւղատնտեսական խնդիրների վրայ:

Այդ ուղղութեամբ կայ եւ մի ամսագիր, «Գիւղանտես», որ թէեւ կանոնաւոր հրատարակութիւն չունի, բայց եղածներում կան գիւղատնտեսական շատ կարեւոր եւ լուրջ մասնագիտական յօդուածներ:

Հրատարակուում է մի ամսագիր «Նորք», նոյնպէս անկանոն հրատարակութիւն ունի: 1922ին լոյս է տեսել 1 համար, 1923ին մինչեւ Օգոստոս լոյս էր տեսել միայն 2 համար: Ծարուռեւելուում է: Դա մի շատ լուրջ ամսագիր է, բաւական հետաքրքիր յօդուածներով եւ շատ ցանկալի էր, որ նրա հրատարակութիւնը կանոնաւորուէր:

1924 Յունվարից հրատարակուում է «Վերելք» ամսագիրը, պատկերազարդ: Հրատարակել է 2 համար:

Պատանի կոմունիստները եւ նոր պրօլետարական գրողները ունեն երեք շարաթաթերթեր:

«Պատ-Կոմ», «Պայքար», «Մուրճ» եւ մի փոքրիկ շարաթաթերթ «Աւանդարդ»:

«Պայքար» եւ «Մուրճ» շարաթաթերթերը, դժբանք մեր պրօլետարական գրողների, նրանց երկու խմբակների օրգաններն են:

Երկու ընկ. թիւներ, որոնց մէկի նախագահն է բանաստեղծ Աշոտ Վչատուրին, իսկ միւսինը՝ նոյնպէս բանաստեղծ Եղիշէ Չարենց: Դրանց մասին մի քանի խօսք քիչ յետոյ:

Կայ եւ մի փոքրիկ օրաթերթ «Տպարանական Բանուոր», որ նոյնպէս կանոնաւոր հրատարակութիւն չունի:

Հայաստանի քաղաքներից Ալեքսանդրապոլը ունի իր բաւականին մեծ դիրքով օրաթերթը «Բանուոր» եւ գիւղացիների համար «Շիրակի Բանչպար» շաբաթաթերթը:

* * *

Հարկ չկայ ասել, որ այդ բոլոր օրաթերթերը, շաբաթաթերթերը եւ ամսագրերը, նոյնպէս եւ ամէն մի հայերէն հրատարակութիւն Հայաստանում եւ Անդրկովկասում, տպագրւում են նոր ուղղագրութեամբ:

Այդ ուղղագրութիւնը, որ դործածութեան մէջ է մտել, անցեալ 23 թւականի Յունվարից, նրա հեղինակ Մանուկ Աբեղեանի ասելով, մեր հին լեզուի կորիզն է. նա իբր թէ հեշտացնում է մանուկ սերնդի համար հայերէն լեզուի դիւրին կերպով սովորելը:

Այդ փոփոխութիւնների վրայ, որ յայտնի է արդէն ամէնքին, ես կանգ չեմ առնի: Այսքանը կայ միայն, որ Հայաստանից դուրս այդ նորամուծութիւնը ահագին աղմուկ առաջ բերեց:

Գտնում էին, որ այդպիսի մի խոշոր ակադեմական հարց, առանց նրան բաղմակողմանի քննութեան առնելու, աններելի էր դեկրետի միջոցաւ, ստիպողաբար անցկացնելու:

Հայ մամուլի մէջ, ճիշտ է, բաւական քննել էր «հ», «լ», «ւ», «յ»ի հարցերը, բայց ինչպէս կ'ուղէք, այդպիսի մի հիմնական փոփոխութիւն, մանաւանդ «օ» եւ «ե» տառերի վերաբերութեամբ, ոչ մի անգամ առաջ չէ բերել եւ քննութեան չէ առնուել մեր մամուլում: Եւ հազիւ թէ հեշտութեամբ ամէն տեղ էլ ընդունւի:

Յայտնի մանկավարժ եւ հայկարան՝ Ստեփանոս Մալխասեան, որ երկար տարիներ այդ հարցով զբաղւել է, նորերս նոյնպէս մի խիստ քննադատական ունէր, այդ նոր ուղղագրութեան դէմ: Նա գտնում էր, որ այդ նոր ուղղագրութիւնը աւելի եւս կ'իսճողի եւ կ'ըժւարացնի մեր լեզուն:

Նոր ուղղագրութեամբ մի շարք հրատարակութիւններ կատարւում են եւ Պոլսում, Հայաստանի քաղաքական ներկայացուցիչ Պօղոս Մակինցեանի ձեռքով:

Այդ գրքերը տպագրւում են յատկապէս Հայաստանի համար, թէեւ հաւանական է, որ նրանք կ'տարածւեն եւ այնտեղ:

Ես տեսայ այդ հրատարակութիւնների մի շարք՝ կայ Իսահակեանի, Թումանեանի, Շիրվանզադէի, եւ ուրիշ մեր գրողների հեղինակութիւնները, կայ թարգմանութիւններ եւրոպական կլասիկներից՝ Շէքսպիր, Կէօթէ եւ այլն:

Տպագրութիւնը կատարւում է մեծ խնամքով եւ ընտիր թղթի վրայ:

* * *

Աբեղեանի նոր ուղղագրութեան հետ միաժամանակ, մեզ մօտ նոյնպէս, ինչպէս եւ Ռուսաստանում, առաջ է եկել գրական մի նոր հոսանք, մի նոր ուղղութիւն:

Պրոլետարական գրողներն են դրանք, որ չեն հետեւում ընդունւած հին ձեւերին:

Նրանք բերում են նոր խօսքեր, նոր ձեւեր, նոր չափեր:

Առ այժմ նրանք մեր գրականութեան մէջ երեւում են միմիայն իրենց բանաստեղծական ստեղծագործութեամբ:

Առաջինը եւ ամենանշանաւորը դրանց մէջ մեր

գրական կեանքում, դա Եղիշէ Չարեցն է, որի հե-
ղինակութիւնների մի խոշոր հատորը նորերս լոյս
տեսաւ Մոսկուայում:

Նրան հետեւում են մի շարք բանաստեղծներ՝
Աչոտ Վչատենի, Գուրգէն Մահարի, Արով, Նայիր
Չարեան, Ալաղան եւայլն:

Մի երկար շարք այդպիսի գրողների, գրանից
յետոյ, անընդհատ երեւում է «Մուրճ»ում, «Պայ-
քար»ում եւ պարբերական մամուլում:

Դրանք մեր Հայաստանի Փուտուրիստներն են:

* * *

Եղիշէ Չարեց, ժամանակակից այդ պրոլետար
բանաստեղծը ունի մի շարք ուժեղ, հետաքրքիր
պոէմաներ: Նրա պատկերները չափազանց գունա-
ւոր են: Երբեմն կարծես նա մոռնում է ամէն մի
արգելք, ամէն մի պատուար, եւ գործ է ածում յան-
դուզն բառեր, անսանձ նախադասութիւններ:

Յեղափոխութիւնը երգող իր պոէմաների մէջ
կարծես նա ուզում է բռնել այդ յեղափոխութիւնը
եղջիւրներից եւ թափ տալ նրան: Բանաստեղծու-
թեան մէջ ընդունւած չափեր, յանգեր, նրա համար
գոյութիւն չունեն:

Նրա չափը իր կամքն է:

Նա ունի եւ հին ձեւով գրւած սիրուն կտորներ,
օրինակ Սայաթ Նովայի նմանութեամբ եւայլն:

Բայց ունի եւ Փուտուրիստական այնպիսի
գրւածքներ, որ մարդ չգիտէ ինչի՛ն վերագրել, նրա
շարածճիւղութեա՞ն թէ օրդինալ երեւալու ցանկու-
թեան:

Անցեալ տարի նրա հրատարակած մի գրքոյկը
«Պօէզոգրունա» վերնագրով, բաւականին խիստ
քննադատութեան ենթարկեց:

Դա նրա թոյլ գրւածքներից մէկն էր, եթէ ա-
ւելին չասել:

Բոլոր այդ պրոլետար գրողները մեծ մասամբ ի-
ւենց հեղինակութիւնները տպագրել են ցարդ իրենց
«Պայքար» եւ «Մուրճ» շարաթաթերթերում եւ
Թիֆլիսի ու Երեւանի օրաթերթերում:

Կան դրանց մէջ շնորհքով գրողներ, որոնց
գրւածքները միտք ունեն, բայց պատահում են եւ
այնպիսիներ, որոնց գրւածքները կարգալուց յե-
տոյ, չգիտէք ծիծաղէք թէ զարմանաք:

Եւ այդպիսիները քիչ չեն:

* * *

Նորագոյն այդ բանաստեղծներից, բացի Եղիշէ
Չարեցից, առանձին հրատարակութեամբ լոյս է
ածել իր հեղինակութիւնների երկու փոքրիկ հա-
տորներ՝ բանաստեղծ Արովը:

«Կին» եւ «Դանակը ըկին»:

Վերջին գրքոյկի յառաջարանում, խօսելով
գրական այդ նոր հոսանքի մասին, նա հետեւեալն
է ասում:

«Նա — այսինքն այդ նոր ուղղութիւնը — Տեր-
եանի ստատիկ եւ ածականներով մշուշուղ լեզւին,
հակադրեց կոնկրետ եւ չոր լեզու, բերեց հատու-
րիթմ, ոչնչացրեց ածականները, բանաստեղծու-
թիւնը կառուցեց բացառապէս բայերով եւ գոյա-
կաններով: Բանաստեղծութեան մէջ մտցրեց օտար
եւ հայ խօսակցական բառեր: Մեր էսթեթիկներին
մեծ զժգոհութիւն պատճառեց իր ոչ բանաստեղծա-
կան Փորմայով:

«Այս վերջին հանգամանքը հասկանալի է: Չեմ
կարող մեղադրել երբ բազազը պրօպիլէրի զիգզազը
չափում է արշինով: Ինչ պիտի անես, երբ նրա քիթը
չիթ է միայն տեսել շարունակ»:

Շուռ տալով այդ յառաջաբանը, ես բերում եմ
որպէս նմոյշ, այդ դրքոյկից, հենց նրա առաջին
բանաստեղծութիւնը:

«Ունաց.

Արովն — ով էր

որ ձեզ հերքեց

երգեց գո

ուսք

կո

ուակ

19 թւին էր դեռ

տպեց իր «Կինը»

բերում էր ոռւմբ ու պրօպելլեր:

Բերում էր

«Գ»եր

«Կ»եր

կիներ, կոնք ու կառք

նշում էր, նգմում ձեր

կոկորդը

նշում էր որ նշաք իր պէս

հանճարով ձեր բանջար քաղէք

նահիմում

ջգմէք հուտեր

եւ յետոյ

տրակտորն իր թողած

ձեր սրտին լծէք շուքեր,

յիշում եմ Տերեան ձերուկը

իր ժանգոտ ծիծն էր տալիս

ծծէք դուք

Թիթեղապատ թեւերս եթերում թրում

կտրում է թուրն իմ

հոռ՛

տարէք նկուղ նետեցէք, ձեր մաշւած կոշիկը»:

Այդպիսի մի մեծամիտ նախաբանից յետոյ,

բերելով որպէս նմոյշ, Արովի դրածքներից այդ
կտորը, կոմենտարիաներ իմ կողմից ես աւելորդ եմ
համարում:

* * *

Հայաստանից դուրս հրատարակւում են «Խ.
Հ.»ի մեծութեամբ «Մարտագոչ» թերթը Թիֆլի-
սում եւ երկու ամսագրեր «Նոր-Աշխարհ» եւ ման-
կական «Միլեր»:

Բազում մի օրաթերթ «Կոմունիստ»:

Ղարաբաղում մի փոքրիկ օրաթերթ «Որորհրդա-
յին Ղարաբաղ»:

Թիֆլիսը չի ներկայացնում այլեւս այն հայ մը-
տաւոր կենտրոնը, որպիսին էր նա պատերազմից
առաջ:

Թէեւ Վրաստանի մայրաքաղաքում հայ բնակ-
չութիւնը չի պահասել նախապատերազմական չըջա-
նի թւից, բայց նա այլեւս առաջւայ դերը չի խա-
ղում մեր կրթական գործում:

Մտաւորականներից մեծ մասը անցել են Հա-
յաստան:

Այն հայ ինտելիգենտ ոյժերն էլ, որ մնացել են
Թիֆլիսում, ըստ մեծի մասամբ զբաղւած են քա-
ղաքական կեանքով:

Նոյնը եւ Բազում:

* * *

Լէօի եւ Թումանեանի գեկուցումը իր ժամա-
նակին լսելուց յետոյ, Ս. Հ.ի կառավարութիւնը
ցմահ թոշակ է նշանակել հետեւեալներին մեր մտա-
ւորականներից:

Գրականագէտներից եւ բանաստեղծներից.—
Շիրվանդադէին, Յ. Թումանեանին, Աւետիս Իսա-
հակեանին, Յովհ. Յովհաննիսեանին, Դերենիկ Դե-

միջնակարգ, Շանթին, Նոր-Դոսին, և Յակոբ Յակոբյանին:

Նկարիչներին — Բաշինջաղեանին, Սարեանին, և Թաղէոսեանին:

Դերասաններին — Յ. Արէլեանին, Մանուէլեանին և Մայրուքեանին:

Մեր հին գրականութեան մէջ աչքի ընկնող գրականագէտներին 1920 Ապրիլին էջմիածնում մեռել է Վրթանէս Փափագեան:

Շիրվանդադէն գտնուում է Պոլսում: Այնտեղի թերթերում ևս կարդացի, որ Շիրվանդադէն իրա սերով, պատրաստում է այժմ մի մեծ վէպ. թէ երկրում գտնուող և թէ գաղութահայ կեանքին:

Հենց այդ նպատակաւ ուսումնասիրութիւններ կատարելու համար է, որ նա եկել է Պոլիս և անցնի պիտի այնտեղից և ուրիշ գաղութներ:

Այդ վէպի մէջ Հայ ժողովուրդը պիտի ներկայանայ իր գործունէութեան և հոգեբանութեան բոլոր կողմերով:

Մեր հայ գրականութեան մի համեստ գործիչը գտնուում է մի քանի տարի է Նոր-Նախիջևանում:

Դա մեր յայտնի դերասան Յ. Արէլեանի եղբայր Ալեքսանդր Արէլեանն է, որ ունի մի շարք թատրոնական գրածքներ, որոնցից մի քանիսը մեծ յաջողութեամբ խաղացուում են մեր բեմերի վրայ:

Երեսուն հինգ տարի նա գործում է այդ ասպարիզում, երկար տարիներ նա թղթակցել է մեր օրաթերթերում, գրելով բանորական կեանքից, սիրտրում Բազելից, որի գործարաններում նա աշխատել է և յետոյ ուրիշ տեղերից:

Նոր-Նախիջևանի կուսակցական կոմիտէն, ի նկատի առնելով նրա 35-ամեայ գործունէութիւնը, միջնորդել է ժող. Լուս. կոմիտարիատին նշանակել նրան ցմահ թոշակ, ամսական 80 ռուբլի:

Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Այժմ անցնենք Հայաստանի տնտեսական կեանքին և տեսնենք այդ ուղղութեամբ Խ. Հ.ի կառավարութեան ունեցած գործունէութիւնը:

Չնայելով որ բնութիւնը պարզեւել է Արաբսի հովտին բաղմամբիւ բարեյաջող պայմաններ, որոնք պիտի ապահովէին ժողովրդի բարեկեցութիւնը, այնուամենայնիւ մենք ամենուրեք տեսնում ենք նշանակալից չափերով չբաւարութիւն:

Հայաստանի դիւղացիութեան ընկերական շերտաւորման, թւական յարաբերութիւնները պատեւազմից առաջ մօտաւոր կերպով եղել է այսպէս:

Հողագուրկ ընտանիք 2%, աղքատ 54%, միջին 41%, հարուստ 3%:

Պատերազմից առաջ այդպիսի մի վիճակ ունեցող գիւղը, ինչ կ'ընէր այժմ, երբ Շիրակի շրջանում, երկու անգամ ենթարկուել էր թաթարական արշաւանքին, իսկ միւս մասերում, քաղաքական և ազգամիջևան կռիւները տարիներ էին տեսել:

Հետեւանքը ցոյց է տալիս մի փոքր վիճակագրութիւն:

Պատերազմից առաջ 1914ին Հայաստանում եղել են ոչխարներ և այծեր 1,486,000, ձիեր 444,500, եղջիւրաւոր անասուններ 587,000, ուղտեր և ջորիներ 9,000: 1923ին կային ոչխարներ և այծեր 364,000, ձիեր 12,800, եղջիւրաւոր անասուններ 281,000, ուղտեր և ջորիներ 2,000:

Աւելցրէք դրա վրայ Թուրքահայաստանից գաղթած հարիւր հազարաւոր աղքատ և թալանւած դիւղացիութիւնը և կ'տեսնէք, որ Հայաստանը ոչ մի-

այն զուտ գիւղատնտեսական երկիր է, այլ եւ մանր ու աղքատ գիւղացիական տնտեսութիւնների երկիր, զուրկ դասակարգային խոր բախումներից:

Քաղաքային ազգաբնակչութիւնը հազիւ նրա 10 կազմի:

Գիւղատնտեսութիւնը զարգացնելու, նրան արդիւնաբեր դարձնելու համար մի երկրում, ուր գիւղացիութեան ամենամեծ տոկոսը կազմում են աղքատները, որքան էլ նա գործէր եռանդով, երեք տարին շատ քիչ ժամանակամիջոց էր, խոշոր, զգալի օղնութիւն հասցնելու համար նրան:

Սակայն, այնուամենայնիւ այն, ինչ որ կատարել է Հայաստանի կառավարութիւնը, նշանաւոր չափով գիւղացիների դրութիւնը բարելոցելու պատճառ է դառնել:

Նա հենց առաջին տարին, երբ սովը դեռ եւս չէր անհետացել Հայաստանից, տւել է գիւղացիներին Ռուսաստանից ստացած ցորենի սլաշարի մեծ մասը ցանելու համար:

1917ից յետոյ, երբ միջազգային եւ քաղաքական կոնիւնների շնորհիւ տասնեակ եւ հարիւրաւոր գիւղեր աւերւեցին, այն էլ բամբակագործութեան շրջանում, երբ դաշնակցական կառավարութիւնը բամբակը մենաշնորհ հրատարակեց բամբակագործութեան մշակումը իսպառ անհետացաւ:

Ոչ մի տեսիատին այլևս չէր ցանուում:

Խ. Հ. ի կառավարութիւնը հեռաւոր Թուրքիստանից բերել տւեց 1922ին 4000, իսկ 1923ին 17,000 փութ սերմացու եւ բաժանեց գիւղացիներին:

Ի հարկէ գիւղացին մշակելով բարձր կուլտուրայի այդ բերքը անհամեմատ աւելի օգտուում էր իր հողից, եւ հետեւանքը աչքի առաջ է:

1923ին, այն գիւղացիք, որոնք բամբակի մշա-

կութեամբ էին պարապել, կարողացան իրենց տնտեսութիւն քիչ թէ շատ բարելոցել:

Բամբակը անցեալ տարի, տւեց միջակից բարձր բերք եւ դա գլխաւորապէս այն պատճառաւ, որ նրա դաշտերը բաւարար կերպով ջրւեցին նոյն Սորհրդային կառավարութեան ջանքերով նորոգւած էջմիածնի ջրանցքով:

* * *

Ես այժմ կ'տամ, առնելով գիւղատնտես Փիրալեանի գեկուցումից, մեր երկրի գիւղատնտեսութեան վերաբերեալ մի քանի տեղեկութիւններ:

Հայաստանը մի արտակարգ լեռնոտ երկիր է:

Նրա տարօրինակ լեռնադրութիւնը, եւ դրանից առաջացած կլիմայական յատկութիւնները, տաք ցածավայրից սկսած, մինչեւ յաւերժական ձեան սահմանները, ստիպում են հայ հողագործին, երկար տարիների ընթացքում, յամառ պայքար մը մղել իր հայրենիքի այդ լեռնային բնութեան դէմ եւ հետզհետէ խլել նրանից մշակութեան հողի բեկորներ:

Ցածադիր հարթութիւնների վրայ երկրագործութեամբ կարելի է պարապել բացառապէս արհեստական ոռոգման շնորհիւ:

Հայաստանի հողը շատ բազմազան է, ունի գլխաւորապէս հրաբխային ծագում եւ իր քիմիական կազմութեան տեսակէտից, աչքի է ընկնում բոյսերի համար սնունդ ծառայող նիւթերի առատութեամբ:

Լեռնային շրջանում գետինը ծածկւած է հարուստ սև հողով:

Արաքսի հովտի ամենացածադիր վայրերից սկսած, մինչեւ 4200 ոտնաչափ բարձրութիւն ծովի մակերեւոյթից, արդիւնագործական, դաշտային

անտեսութեան շրջանն է, որ յայտնի է, իր բամբակով, խաղողով եւ մրգատու այգիներով:

Սրան յաջորդում է հատիկային անտեսութեան շրջանը, որ հասնում է մինչեւ 5000—6000 ոտնաչափ բարձրութեան:

Իրանից բարձր արդէն մինչեւ ձիւնը, դա զուտ անասնապահութեան շրջանն է:

ԲԱՄԲԱԿ

1910—14 թւականներին բամբակը դարձել էր Հայաստանի գլխաւոր արդիւնաբերական բոյսը: Վրայ հասաւ պատերազմը, Ռուսական արդիւնագործական կենտրոնների հետ կարգաւորւած առեւտրական յարաբերութիւնների ապարատը հետըզհետէ սկսեց քայքայւել:

Շոգեշարժ կառայումը գրեթէ ամբողջապէս սկսեց ծառայել պատերազմական կարիքներին եւ Մոսկուայի ու Լոձի բամբակ մանելու գործարանները հարկադրւած եղան կրճատել իրենց գործունէութիւնը: Ապա, պարենաւորման եւ սովի ազդեցութեան տակ, բնակչութիւնը սկսեց բամբակի փոխարէն որակի կարող էր ցորեն եւ դարի ցանել:

Այնպէս որ 1914ին ստացւել էր 710,000 փութ մաքրած բամբակ, 1917ին ստացւել էր 270,000 փութ, 1920ին ոչ մի փութ:

Անցեալ 1923 թւին կազմւեց ուսու—հայկական մի ընկերութիւն, որ իր գործունէութիւնը սկսեց տարւայ սկզբից:

Պայլչիկներն էին՝ Հայաստանի զիւղատնտեսական բանկը եւ Ռուսական բամբակի գլխաւոր կոմիտէն:

Ընկերութիւնը որ համառօտած, անւանում էր «Գրախտ», ունէր 825,000 ռուբլի շերվոնցով դրամազրուխ:

Գիւղացիներին ընկերութիւնը բաց թողեց իւրաքանչիւր տեսիատինին 6 փութ սերմացու: 23ին ցանած էր այդպիսով 4,350 տեսիատին, որից բերք ստացւեց 220,000 փութ: Միջին թւով իւրաքանչիւր տեսիատինից 50 փութ:

Մոսկուայում առաջ մեր բամբակը զնահատում էր %25 պակաս ուրիշ երկիրներից բերող բամբակի գնից: Այժմ այդ տարբերութիւնը %2 էլ չէ կազմում:

Ներկայ տարւայ համար, բամբակի ցանքերի տարածութիւնը Հայաստանում կ'կազմի 16,000 տեսիատին, որից սպասւում է 800,000 փութ բամբակ:

Բամբակի գլխաւոր կոմիտէն բաց է թողել զիւղատնտեսական բանկի միջոցներ, օգնելու զիւղացիներին հարկաւոր զիւղատնտեսական մեքենաներ եւ անասուններ ձեռք բերելու համար:

Բոլոր այն շրջաններում, ուր ներկայ 1924ին բամբակ պիտի ցանւի, զիւղացիութիւնը ապահովւած է հացով եւ սերմացուով:

Բամբակի հսկայական կարիքը ամբողջ աշխարհում եւ Մոսկուայի արդիւնագործական շրջանում, բամբակի գործարանների վերանորոգումը, Հայաստանի—Ռուսաստանի, Արեւմտեան Եւրոպայի հետ տնեցած առեւտրական յարաբերութիւնների վերականգման հետ միասին, մեծ յոյսեր են տալիս, որ Երեւանի բամբակի արդիւնաբերութիւնը աւելի եւ աւելի առաջ կ'գնայ:

Օդոստոս 23ին, հիմք դրւեց Երեւանում բամբակ մաքրող մի գործարանի, որ կառուցանւում է ներկաթուղու կայարանին մօտ եւ բռնում է 16 տեսիատին տարածութիւն: Նա կ'մաքրի կէս միլիոն փութ բամբակ:

Վերջին տեղեկութիւնների համաձայն, նա արդէն սպարաստ է եւ սկսել է գործել:

Խ. Ռուսաստանը նւիրել է Հայաստանին 2000 բանւոր աշխատեցնող, չիթի մի գործարան, բոլոր անհրաժեշտ պարագաներով:

Գործարանը, որի շէնքի կառուցումը ծրագրւած էր Ալ.պօլում, այս տարի սկսել է, պատրաստելուց յետոյ, Հայաստանի բամբակի մի խոշոր մասը մըշակոյթի կ'ենթարկելի հենց երկրի ներսում:

Բամբակը մաքրելուց յետոյ մ'նում է մեծ քանակութեամբ բամբակի սերմ: Նա գործ է ածուում, որպէս կեր անասունների համար, մի մասն էլ դընում է ձէթի սրատրաստութեան:

1914 թւին ստացւած հում, չմաքրած 2,210,000 փութ բամբակից ստացւել էր մաքուր բամբակ միմիայն 710,000 փութ, մնացածը սերմն է եւ տափանքը:

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Բամբակից յետոյ մեր երկրի անտեսութեան մէջ երկրորդ տեղը բռնում է խաղողի մշակութիւնը:

Ըստ մաքսային արժանահաւատ տեղեկութեանց Երեւանի շրջանում 1909—13 տարիների ընթացքում խաղողի բերքը եղել է միջին թւով տարեկան 3,750,000 փութ: Դրանից գործադրւել է գինու վրայ առ հարիւր 80, կոնեակի առ հարիւր 15, խոշարի առ հարիւր 5:

Առաջին մեծ կոնեակի գործարանը, որ շինւեց Երեւանում, պատկանում էր տեղական մի հայի, Ներսէս Թայիրեան, որ 80-ական թւականներին ծախսեց նրան Մոսկուայի յայտնի Շուստով Ֆիրմային:

Այդ գործարանը, որ Շուստովը բաւական ընդարձակել էր, 1920ին բռնազրաւուել էր դաշնակցական կառավարութեան կողմից եւ գործում էր «Արարատ» Ֆիրմայի տակ:

Նոյն Ֆիրմայի տակ, նա այժմ պատկանում է Հայաստանի կառավարութեան:

1922ին գործարանը արտադրել է կոնեակ 9000 վեդրօ, գինի 35,000 վեդրօ:

1923ի թւերը չունեմ, բայց զգալի կերպով աւելի է անցեալից:

Գինու աւելի լայն տարածման մեծապէս խանգարում է այն մեծ մաքսը, որ Ռուսաստանում դրւած է գինու եւ կոնեակի վրայ:

Կովկասեան Ֆեդերացիան միջնորդել է այս տարի, կենտրոնական կառավարութեան առաջ իջեցնել Կովկասեան գինիների եւ կոնեակի համար մաքսի չափը:

Պետական «Արարատ» գործարանը, ոչ միայն Հայաստանում, այլ եւ Ռուսաստանում առաջին տեղն է բռնում իր արտադրութեամբ:

Տարեց տարի ընդարձակելով նա կարող կ'լինի պետական բիւտջէի մի խոշոր մասը ծածկել:

Իրենց գիւղացիների մէջ, գինեգործութիւնը զգալի կերպով ընկել է: Առաջւան երկաթուղիի յարմարութիւնները չկան: Չկան ամաններ: Այգեգործերը որ առաջ իրենք էին գինի պատրաստում եւ արտահանում, այժմ ըստ մեծի մասին տալիս են խաղողը պետական գործարանին:

* * *

Այգեգործութիւնը նիւթ է մատակարարում նաեւ պահածոյի արդիւնաբերութեան: Արտադրութեան նիւթ ծառայում են գեղձն ու ծիրանը, մասամբ սպիտակ կեռասը եւ սալորները: Մինչեւ 14 թւականը, տարեկան միջին թւով արտահանւելիս է եղել 100 հազար փութ:

Պատերազմից յետոյ, արդիւնաբերութեան այդ ճիւղը գրեթէ դադարել էր: Այժմ Երեւանում նորից

գործում է կառավարութեան պահածոյի գործը (նախկին էսպիեանի) : Պատրաստում է պահածոներ, դեղձի, ծիրանի եւայլն : Ծիրանի պիւրէ : Վարունգի մարինոզներ :

Օրինակները ուղարկւած են եղել Մոսկուայի ցուցահանդէսին :

Անցեալ 1923 տարին արտահանութիւնը եղել է 20 հազար փութ :

Մեծ կարիք է զգացում թիթեղեայ տուփերի եւ նրա պահանջը կարող է տարեկան տասնեակ միլիոնների հասնել : Այդ գործն էլ ինքնին հանդիսանում է խոշոր արդիւնագործութիւն : Նրան լաւ հիմքերի վրայ դնելու համար, Ս. Հ.ի կառավարութիւնը մտադիր է ունենալ ելեքտրական ոյժով օժտուած յատուկ գործարաններ :

ՀԱՅԱՍՏԱՆԻԿ

Բացի բամբակագործութիւնից եւ այգեգործութիւնից Հայաստանի գիւղացիք պարապում են բրնձի հանաւարար եւ հացահատիկների մշակութեամբ :

Վարելահողերի ընդհանուր տարածութիւնը Հայաստանի բոլոր գօտիներում, հաւասար է 800 հազար տեխատինի, որից մինչեւ վերջին պատերազմը ցանեւ է միջին թւով մօտաւորապէս 410 հազար տեխատին :

Ս. Հ.ի կառավարութիւնը իր գոյութեան հենց առաջին տարին, 1921 թւին տեղ գիւղացիութեան 350 հազար փութ սերմացու :

Այդ տարին ցանեց 120 հազար տեխատին :

Հետեւեալ 22ին այդ տարածութիւնը հասաւ 185,000 տեխատինի, որ տեղ 8 միլիոն փութ հացահատիկ :

1923 թւականը կարելի է հաշուել անբերրի տա-

րիներից մէկը : Այդ տարի չնայելով որ ցանած էր գրեթէ միեւնոյն տարածութիւնը եւ աւելի քան 22ը, բերքը եղաւ ընդամենը 7 միլիոն փութ :

Հայաստանը կարիք ունի տարեկան 12—14 միլիոն փութ հացի :

Նա պակասը պիտի լրացնի դրսից, որ կառավարութեան ծանր հոգսերից մէկն է ամէն տարի :

ԲՐԻՆՁ

Հայաստանի ճահճային մասերում, գիւղացիք պարապում են բրնձի մշակութեամբ :

Նախապատերազմական շրջանում այդ բերքը տեւել է 210,000 փութ տարեկան :

Նրա արդիւնագործութեամբ պարապում են Երևանի, Էջմիածնի եւ Գարալագեազի գաւառները, ուր կան քսանի մօտ բրինձ մաքրող գործարաններ, սակայն այդ գործարանների մեծ մասը նախնական բնոյթ ունեն եւ տալիս են բաւականին մեծ տոկոս փճացած հատիկների :

Մինչ ամերիկական գործարաններում ստացւում է 60 մաքուր բրինձ, մերոնք 50ից աւել չեն տալիս :

Պատերազմից յետոյ այդ արդիւնաբերութիւնը ընկել էր, եւ նոր նոր սկսում է նորից բարձրանալ :

ԾԽԱՆՈՏ

Ծխախոտի մշակութիւնը նոր է Հայաստանում, եւ լայն չափեր դեռ չէ ստացել :

Պարապում են նրանով տաճկահայ, գործին ծանօթ, գաղթականներ :

Հաւանական է, որ ծխախոտի մշակութիւնը որպէս աւելի արդիւնաւէտ գործ, աւելի եւ աւելի կ'մեծանայ :

Տեղացիք սկսում են հետաքրքրել նրանով եւ ընդօրինակել:

Կօօպերատիւ «Հայկօպ»ը ունի իր սեպհական տնկարանը Չարրախ գիւղում, 25 տեսիատին տարածութեամբ: Ունի ծխախոտի գործարան, էլեքտրական շարժիչ ոյժով, որի արտադրութիւնը 1922ին եղել է մօտաւորապէս 280 փութ ծխախոտ եւ 9 միլիոն պապիրոս:

1923ին աւելի շատ էր:

ԿԱՇԵՔՈՐԾՈՒԹԻՒՆ

Հայաստանում կան երկու բաւականին լաւ դրամ կաշու գործարաններ:

18ից գրեթէ դադարած այդ գործարանները, այժմ գործի են անցել նորից:

Կարելի է սպասել, որ այդ գործն էլ Հայաստանում, որպէս նրա արդիւնարեքութեան մի կարեւոր ճիւղը կ'հասնի իր կատարելութեան եւ կ'տայ ցանկացած արդիւնքը:

Պատերազմի տարիներում սաստիկ ընկած այդ արդիւնարեքութիւնը 21ից սկսած սկսում է զգալի կերպով կենդանանալ եւ տարից տարի առաջ գնալ:

Ահա մի փոքրիկ պատկեր այդ արդիւնարեքութեան.

Արտահանել է	1921ին	1922ին	1923ին
Ոչխարի եւ այծի կաշի	600 հտ.	9706	32,000
Կոշտ կաշիներ	422 փթ.	984	1,553
Ուղտ	71 փթ.	206	680

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Հայաստանում անասնապահութիւնը դրամ է նախնական հիմունքների վրայ:

Ոչ մի փորձ ազնւացնելու նրանց տեսակը:

Տկար եւ փոքրիկ կովեր, որոնք քիչ կաթ են տալիս: Փոքրիկ եղներ: Հայաստանում շատ տարածւած են գոմէշները: Նրանց արունները չափազանց ուժեղ են, որպէս լծկաններ, իսկ էգերի կաթը թանձր է եւ իւղալի:

Շատ տարածւած է ոչխարապահութիւնը, մանաւանդ Ալպեան շրջաններում:

Մոսկուայի համամիութեան ցուցահանդէսին մասնագէտների կոմիսիան միաձայն, առաջին մրցանակին էր արժանացրել Լոռու, Վօրոնցովկայ գիւղում, չվէյցարիական եղանակով պատրաստած պանրին:

Նախապատերազմական շրջանում, Հայաստանը արտահանել է 50,000 փութ չվէյցարական պանիր:

Հայաստանի լեռնային կաթը, արդիւնք է, մեր լեռնաշխարհի ինքնայատուկ եւ արօմատիկ արօտի, որոնք ըստ հեղինակաւոր վկայութիւնների, գերազանցում են Շվէյցարական Ալպերի արօտից:

«Մեղք ու յանցանք է — ասում է գիւղատնտես Աթանասեան — այնպիսի շրջաններ, ինչպիսին Լոռին, Նոր-Բայազետը, Դարաշիչազը, Արագածոտն ու Ծաղկաձորն, որոնք ընդունակ են տալ առաջնակարգ կաթ, գործադրել հացահատիկների մշակութեան համար, որ միշտ էլ վտանգի տակ է եղել եւ անօգուտ:

«Մեր այսօրն ու արօտները գրեթէ ամենուրեք Հայաստանում, իրենք են որ դոռում են մեզ, ես կաթ եմ եւ ոչ ցորեն, եւ սակայն մենք շարունակում ենք լուցնել բնութեան այդ ձայնը եւ տասնեակ հազարաւոր կաթնառատ տարածութիւններ, ցանում ենք ցորեն, որ ցուրտն է տանում եւ մկներն են ուտում եւ արեւն է խանձում»:

Հողային ժող. կոմիսարիատը մշակել էր արդէն

մի շրջաբերական կարգադրութիւն, որով թոյլ չպիտի տրուէր Այսլեան շրջանում հացահատիկ ցանել:

Ամբողջ Հայաստանում ոչխարները կթւում են: Նրանք տալիս են այժից ոչ պակաս կաթ: Գիւղացի ընտանիքներ, որոնք մի քանի ոչխար ունեն, իրենց ամբողջ տարւայ իւղ ու պանրի պաշարը հաւաքում են:

Արարատի եւ Ալազեադի փեշերին ապրող, եղբի յոնականները, որոնք բացառապէս պարապում են խաչնարածութեամբ, ահագին քանակութեամբ իւղ եւ պանիր են բերում քաղաքում ծախելու:

Երբ էջմիածնայ գործ-կոմում, յայտարարւած էր գիւղացիներին մտցնել իրենց միասնական հարկը դանձարան, կզիղիք առաջինն էին, որ բերին ու լիովին տւին իրենց հարկը, մանրացնելով ոսկերամ:

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Մի ժամանակ բաւական ծաղկած է եղել շերամապահութիւնը Հայաստանում, թէեւ ի հարկէ ոչ այնքան մեծ չափերով, որպիսին Շուշիայ եւ Նուխիվայ գաւառներում:

էջմիածինը, իր մօտիկ Գայանէ վանքում, ունեցել է սեպհական շերամապահական կայարան եւ անտառում բաւականին թթենիներ:

Այժմ բոլորն էլ ոչնչացած են:

Շերամապահութեան զարգացման համար Հայաստանում պայմանները չափազանց նպաստաւոր են:

Ձեռներէջ մարդկանց համար, թէկուզ նոյն իսկ գաղթականներից, կամ այնպիսի մարդկանցից, որոնք կ'ուզեն գործ ունենայ Հայաստանում, բայց հողի պակասութիւնը վախեցնում է նրանց, ամենաարմար գործն է շերամապահութիւնը:

Նա չի վախենում ոչ արեւից եւ ոչ անձրեւից: Նա չի պահանջում երկար ամիսների չարքաշ աշխատանք:

Գործի ամբողջ ընթացքը, շերամի որդի կենդանանալուց սկսած, մինչեւ պատրաստի բոժոժի հաւաքելը տեւում է մօտ երեք ամիս:

Եթէ գործը դրւի հաստատ հիմքերի վրայ, կազմուի ընկերութիւն հենց իրենց աշխատաւորներից, ունենալով իրենց մէջ մի քանի մասնագէտներ, այդ գործը կարող է զարգանալ եւ այնպիսի օգուտներ տալ, որ երբեք չեն կարող տալ ոչ այդպէս գործուներ եւ ոչ էլ վար ու ցանքը:

Շուշու եւ Նուխու շրջաններում, ուր մի ժամանակ շերամապահութիւնը գիւղացիների մէջ չափազանց տարածւած էր, լինում էին գիւղացիներ, որոնք մի տարւայ իրենց բերքից հաղարներ էին ստանում:

Երբ արդիւնագործութիւնը կովկասում, նոր նոր միայն սկսում էր զարգանալ, Շուշու գիւղացիք սրբանից 60—70 տարի առաջ, արդէն յարաբերութիւն ունէին Եւրոպայի հետ եւ ամէն տարի շատ մեծ քանակութեամբ շերամի բոժոժ էին ուղարկում Մարսէյ:

1870 թւականից սկսած մի քանի հայ դրամատէրեր, մէկը միւսի ետեւից, բերեցին թէլ մանելու գործարանական մեքենաներ, եւ նրանից յետոյ այլեւս հում բոժոժը չէր ուղարկւում Մարսէյ, այլ հենց այդ նոյն գործարաններում վերածելով մետաքսեայ թելի, ուղարկւում էր մեծ մասը Մոսկուս եւ մի մասն էլ Մարսէյ:

Հայ Թուրքական կոիւնները եւ վերջին պատերազմը քար ու քանդ արին այդ բոլորը:

Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ խաղաղւած երկիրը ձեռք է առել նորից իր այդ պա-

բայմունքը եւ տարէց տարի նա կենդանանում եւ առաջ է գնում :

Հայաստանը պէտք ունի ամերիկական եռանդը ունեցող ձեռնարկուների եւ ասագին բարիք կ'անի երկրին այն առաջին խումբը, որ այդ գործը լայն չափերով կ'սկսի Հայաստանում :

Օրինակողներ նրանցից յետոյ շատերը կ'լինեն : Դժւարը առաջին փորձն է :

ՄԵՂՈՒԱՌՈՒԾՈՒԹԻՒՆ

Մեր գիւղատնտեսութեան մէջ կարեւոր տեղ ունի մեղուարուծութիւնը, որը նոյնպէս սպասում է իր եռանդուն ձեռնարկողներին :

Թէ կլիմայական եւ թէ բուսական պայմանները այնպիսի մի երկրում, ուր բազմաթիւ ծաղիկներով լի դաշտեր կան, ինչպէս մերը, խիստ նպաստաւոր են մեղուարուծութեան զարգացման :

Ամերիկացի յայտնի մեղուարոյժ Պրն. Ֆէսօր Բէյլտօնը, 1903 թւին, ծանօթանալով Հայաստանի մեղուների հետ, գրել էր, որ մեր մեղուները պատկանում են ազնիւ, չխայթող տեսակին : Տաճկական արջաւանքի ժամանակ, Հայաստանի մեղուարուծութիւնը մահացու հարւած ստացաւ :

Վերջին երկու տարին Ղարաքիլիսայում, Դարալագեղում, եւ ուրիշ չրջաններում, սկսել է նորից կենդանանալ այդ գործը :

Կառավարութիւնը Շահալի կայսրանին կից, չինել է մի գործարան, որ յատկապէս ծառայում է մեղուարուծութեան կարիքներին, պատրաստելով կատարելագործւած փեթակներ եւայլն :

ՋԻԱՌՈՒԾՈՒԹԻՒՆ

Հայաստանի կառավարութիւնը, երկրի գիւղացիութեան դիմացկուն եւ աշխատաւոր ձիեր տալու

համար, բերել է տեւլ դրսից ազնիւ տեսակի ձիեր եւ բեղմնաւորել նրանց, նա նոյն իսկ մասնակցել է մի քանի անգամ Թիֆլիսի ձիարշաւներին եւ տարել մրցանակներ :

ԽՈՉԱՌՈՒԾՈՒԹԻՒՆ

Սոցարուծութեամբ Հայաստանում, ինչպէս եւ արեւելեան բոլոր այն երկրներում, ուր քրիստոնեաները ասրելիս են եղել մահամետականների հետ կողք կողքի, չեն պարապել երբեք :

Նրանք նոյն իսկ շատ դէպքերում խոզի միս չեն ուտում :

Մինչդեռ այդ չափազանց օգտակար կենդանին, գիւղատնտեսութեան մէջ մեծ դեր է խաղում շատ երկրներում, ինչպէս օր. Գերմանիան :

Հայաստանի կառավարութիւնը երկրում խոզարուծութիւնը զարգացնելու համար, Ռուսաստանի պետական խոզարուծական կայսրանից բերել է տալիս, աճեցնելու համար, ցեղական խոզեր :

Հաւանական է, որ խոզարուծութիւնը աւելի եւ աւելի կ'տարածւի Հայաստանում, որովհետեւ այդ կենդանիների պահելը, այնքան էլ դժւար չէ, մինչդեռ նրանք արագ աճում են, եւ մի տարուց յետոյ ասագին միս եւ ճարպ են տալիս :

Թէ ո՛րքան օգտակար է նրանց պահելը, այդ երևում է նրանից, որ այդպիսի մի խոզը, ամէն տարի ծնում է 10ից ոչ պակաս ճտեր, եւ մի տարւայ շաւ կերակրած խոզը տալիս է 2 փութի մօտ ճարպ եւ 4—5 փութ միս :

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Տնայնագործութիւնը, որ առաջ մեր գիւղացիների մէջ շատ էր տարածւած, այժմ գրեթէ կանգ է առել : Եւ շատ պարզ է :

Տնայնագործութիւնը իր հում նիւթերը ստանում էր բնութիւնից՝ հողից կամ կենդանիներից: Գիւղացին պիտի բամբակ ցանէր, ոչխար ու շերամ պահէր, որ գործելու համար բամբակ, բուրդ ու մետաքս ունենար:

Գիւղացին պիտի ունենար ազատ ժամանակ, ազատ ձեռքեր, որ կարողանար զբաղել տնայնագործութեամբ:

Պատերազմը քայքայեց թէ մէկը եւ թէ միւսը:

Գիւղացուն պատկանում էր ներկը, առանց որի նա անկարող էր պատրաստել այն գեղեցիկ կարպետները, ջիջիմները եւ այլ հիւսածփները, որոնց արտադրութեամբ պարծենում էին մի ժամանակ մեր մի շարք գաւառները:

* * *

Որ բոլոր յիշածս գիւղատնտեսական եւ արդիւնաբերական ձեռնարկութիւններին լայն յերպով օգնել է Ս. Հ. ի կառավարութիւնը, դա չուրս է ամէն կասկածից: Կարելի եղածի սահմաններում, նա ոչ մի միջոց չի խնայել, առաջ գնալու ժողովրդի կարիքներին:

Եւ ամենագլխաւորը որ նա արել է, այդ այն է որ երկիրը խաղաղեցրել է:

Դադարել են գողութիւն, թալան, աւազակութիւն, սպանութիւն եւ այլն, որ այնքան սովորական եւ ամէնօրեայ են եղել մեր երկրում 18ից սկսած մինչեւ 21 թւականները:

Գիւղացին եւ քաղաքացին հանգիստ եւ գլուխը քաշ, զբաղւած են իրենց խաղաղ, հալալ աշխատանքով:

Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցնենք այժմ Հայաստանի բնական հարստութիւններին:

Հայաստանը հարուստ է հանքերով: Նրանում կան ոսկուց եւ արծաթից սկսած մետաղի գրեթէ բոլոր տեսակները, բայց անւանել նրանց հանքեր անկարելի է, որովհետեւ շատերը նրանցից այնքան քիչ տոկոս են պարունակում իրենց մէջ իսկական մետաղի, որ օգտագործել նրանց ոչ մի միտք չկայ:

Հայաստանի հարստութիւնը իր ներկայ սահմաններում պղինձն է կազմում որ բաժանում է երկու շրջանի, Լոռու եւ Զանգեզուրի:

Պղինձի արտադրութիւնը նորութիւն չէ մեր երկրում, դեռ մեր հայրերը՝ շնայելով նախնական միջոցներով, բայց պղինձի արտադրութեամբ զբաղւել են:

Պղինձի արդիւնաբերութիւնը մեր երկրում սկսւում է զարգանալ 40—50 թւականներից:

Պղինձահանքի գլխաւոր գրուպաներից մէկը, դա Ալլաւիբաթի կայարանի մօտ գտնուող գրուպան է, որի հանքերի չափը, չափազանց դժւար է եղել ճշտել:

Պղինձը այդտեղ կազմում է հանքի 3—4 տոկոսը:

Այդ տեղեկութիւնները ես քաղում եմ ինժ. Կարապետեանի մի զեկուցումից:

Պղինձահանքերի երկրորդ կենտրոնը, Զանգեզուրն է, որ բռնում է 25 քիլոմէթր տարածութիւն հանքային շրջան: Այդտեղ հաշուում է 10 միլիոն փութ պղինձ, որի մի տեսակի մէջ ոսկի է պարունակում:

Այդտեղ 60 փութ պղինձից կարելի է ստանալ

2ից 2½ ֆնտ. արծաթ եւ ոսկի, որից %6 միայն ոսկի:

Այդ հանքերի օգտագործումը կախած է գըլ-լաւորապէս փոխադրական միջոցներէից:

Հայաստանը ունի բաւականաչափ զինկ եւ արծիճ: Նրանք չեն օգտագործուում առ այժմ, բայց կարող են օգտագործուել:

Հայաստանը կոփկասում առաջին տեղն է բրոնում ծծմբաճրաքարի կողմից, որից ստացւում է ծծմբաթթւոտ, կան արծիճ-արծաթեան գրուպպաներ:

Շուկայում, պղնձի զների չափազանց աննպաստ լինելու պատճառաւ, վերջին տարիները Ալլահապետու գործարանը թողել է պղնձի մշակութիւնը, սակայն իր բանուորները գոյութիւնը ապահովելու համար, նա ձեռք է առել օժանդակ գործեր:

Նա իր 1922ին եւ 1923ին ստացած ծծմբաճրաքարից արտադրել է հեաեեալ նիւթերը:

1922ին. — 88,000 փութ ծծմբաճրաքարից ստացւել է ծծմբաթթու՝ 5,424 փութ, աղաթթու՝ 603 փութ, պղնձարձասպ՝ 789 փութ:

1923ին. — Մշակութեան է ենթարկուել երեք անգամ աւելի ծծմբաճրաքար: Ստացւել է 221,459 փութ: ծծմբաթթու՝ 6004 փութ, աղաթթու՝ 1435 փութ, պղնձարձասպ՝ 2569 փութ, ոսկի՝ 29 ֆնտ. 10 մսխալ, արծաթ՝ 11 փութ 29 ֆունտ:

Շինարարական քարերով Հայաստանը ամբողջ ֆետերացիայում ամենահարուստն է: Բացի դրանից կայ եւ տուփ, որը լաւագոյն նիւթն է տուն շինելու համար:

Երկիրը հրաբխային լինելով, հրաբխային նիւթը շատ է տուել, օրինակ, ապակին, որից կարելի է լաւ տեսակի շիշեր, հեռագրային անօթներ եւ նրման իրեր պատրաստել:

Կան հրաշալի մարմարիոն քարեր, որոնց մի տեսակը գործ է ածուում վիճագրատներում:

ԱՆՏԱՌՆԵՐԸ

Մի բան, որ պակասում է Հայաստանին, դա անտառներն են:

Այն ժամանակ երբ մեր հարեւան Վրաստանում անտառները բոնում են երկրի մակերեսովի 27 տոկոսը, Ադերբէյջանում 15 տոկոսը, մեզ մօտ Հայաստանում անտառները բոնում են նրա 6 տոկոսը միայն:

Սակայն այդպէս չէր մեր երկիրը հարելը, նոյն իսկ յիսուն տարի առաջ:

Եօթանասնական թւականների ուսումնասիրողները պնդում են, որ ներկայ Հայաստանում 600 հազարից աւելի տեսիատին տարածութիւն անտառապատ էին, ուրիշ խօսքով երկրի 20 տոկոսը:

Յիսուն տարւայ մէջ մեր ժողովուրդը ոչընչացրել է 400,000 տեսիատին անտառ, առանց հոգ տանելու նորերը անկելու:

Այդ գործում էլ Հայաստանի կառավարութիւնը գործնական քայլեր է առնում արդէն:

Երեւանի Գործ-կոմի գիւղատնտեսական բաժինը, որոշել է առաջիկայ դարնանից ընդարձակ աշխատանքներ սկսել ծառեր անկելու երկրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԱՅԻՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Հայաստանի ջրային աղբիւրները, չնորհիւ իրենց լեռնային բնոյթի, եւ համեմատաբար խիստ անկումի, ջրային ոյթի խոշոր պաշար են պարունակում իրենց մէջ:

Թէեւ նրանց կարողութեան մասին հնարաւոր չէ եղել ճիշտ թւեր ունենալ, այնու ամենայնիւ նրանց արդիւնաբերական ոյթը, համաձայն նախկին տւեալների կարելի է հաշուել 897,000 ձիւ ոյթ, որ հաւատար է 224,000 փութ նաֆթի:

Այդ ոյժի գործադրութիւնը մինչեւ այժմ եղել է շատ չնչին:

Այսօր կը գործարանու՞մ՝ Փամբակ գետից 1800 ձիու ոյժ:

Երեւանի քաղաքի լուսաւորութեան համար Ձանգու գետից 470 ձիու ոյժ:

Դելիճանի լուսաւորութեան, նոյն անունով գետից 50 ձիու ոյժ:

Այդպիսով Հայաստանում գտնուող գետերի երկուսը՝ Գեղարքի ոյժից օգտուել են մէկ 383րդ մասը միայն:

Որքա՞ն լայն հնարաւորութիւններ կան այդ ուղղութեամբ գործնական քայլեր անելու:

Ջրային այդ ոյժի օգտագործումը թէ Արարատեան դաշտը ոռոգելու եւ թէ ուրիշ գիւղական կարիքների համար, միակ ելքն է Հայաստանի տրնտեսական վերածնման:

Եւ հենց այդ ուղղութեամբ գործելու համար, Հայաստանի կառավարութիւնը ունի մօտիկ ապագայի համար մի շարք ծրագիրներ երկրի լայն ելեքտրականացումին:

Մի քանի տեղերում արդէն որպիսիք են Ձանգու գետը, Գորիս, Ջալալօղլի, Ղարաքիլիսա, Նոր Բայաղիտ, եւ Դիլիջան արդէն սկսուել են եւ տարւում են էլեքտրոկայարանների շինութիւնը:

ՋՐԱՆՑՔՆԵՐԸ

Ու շին իշխանութեան նշանաւոր ձեռնարկներից մէկն է, երկրում անցկացրած, եւ անցկացնելիք ջրանցքները, որոնք պիտի աւելացնեն երկրի հողային Փոնդը, եւ մեծած անապատներին կենդանութիւն բերեն:

Ահա մի քանի համառօտ տեղեկութիւններ ներանց մասին:

Շիրակի քրանցքը.— Այդ ջրանցքի նախագծի վերջնականապէս կազմելուց եւ հաստատելուց յետոյ, որի գումարը կազմում էր 750,000 ռուբլի սակով, 1922 Նոյեմբեր 29ին մեծ հանդէսով, սկսւում են աշխատանքները:

Աշխատանքները սկսելիս, ծախսի այդ գումարի ստաջ, վարչութիւնը ունենում է իր ձեռքում մի չնչին գումար 25,643 ռուբլի:

Բայց Անդրկովկասեան Ժող. կոմիսարների Խորհրդի, Ֆինանսական կոմիտէն նախահաշիւն ծանօթանալուց յետոյ, բաց է թողնում 350,000 ռուբլի:

Ջրանցքի շինութեան աշխատանքները մեծ թափով շարունակուում են: Երկուսը է՛ք թիւնէլ 2 վերստ 187 սաժէն երկարութեամբ:

Ջրանցքը պիտի ունենայ 45 վերստ երկարութիւն:

Նա կ'ոռոգի 15,000 տեւիտին տարածութիւն: Բայց ջրանցքի նշանակութիւնը միայն ոռոգումով չի սահմանափակուում:

Նա տալիս է նաեւ էլեքտրական ոյժ տարւայ բոլոր շրջաններում, ամառը 1200 ձիու ոյժ, իսկ ձմեռը 4500, որից օգտուեն պիտի շրջակայ գիւղերն ու քաղաքը:

Այս տարի ամառ, հաւանական է որ ջրանցքը պատրաստ կ'լինի եւ կ'սկսի գործել:

Ջրանցքի վրայ բանում են 300ից մինչեւ 500 բանւորներ, որոնց մեծամասնութիւնը եկւորներ են: Նրանց համար շինւած է ժամանակաւոր բնակարան, բարէ շինութիւններով: Ունեն բաղնիք, է՛ք նագին ճաշարան եւ կլուբ:

* * *

Էջմիածնի քրանցքը.— Բոլորովին վերջացած է էջմիածնի ջրանցքը: Այդ ջրանցքը սկսւած է եղել

պատերազմից մի երկու տարի առաջ, վանքի միջոցներով եւ հինգ վերստի չափ ծեփուած :

Պատերազմը դադարեցրել էր եւ այդ գործը :

Հայաստանի կառավարութիւնը նրան շարունակեց եւ վերջացրեց անցեալ ամառ :

Նա ունի պակասութիւններ. նա չի տալիս այնքան ջուր, որքան բերանում ընդունում է : Ջրի մի մասը ծծում է հողը :

Երկրարան ինժիներ Այվազեանի ասելով, որ 1920ին հետադառնել էր ջրանցքի հողը, նա բազկացած է աւաղից եւ տուֆից, ունի հրաբխային ծագում եւ այնպիսի յատկութիւն, որ ջուրը ծծում է եւ գտում :

Նա գտել էր շատ մեծ կորուստներ այդ ջրանցքի շինութեան գործում :

* * *

Էլվիջարի ջրանցքը. — Երբորդ ջրանցքը, էլվիջարի կամ «Հիւսիսաչին» օրի կառուցումը իր վրայ էր առել Մոսկուայի «Հայաստանի Օգնութեան Կոմիտէի» ճիւղը, անցեալ տարի սկսել եւ թողնել էր :

Նախնական աշխատանքները նոյն իսկ սկսւած են եղել, բայց թողնւած, որովհետեւ Մոսկուան, ծրագրւած 60,000 ռուբլի ծախքի դէմ, ուղարկել էր միմիայն 3000 ռուբլի :

Այս տարի գարնան աշխատանքները սկսեցին :

Յայտնեց որ նախնական նախահաշուով որոշած 60,000 ռուբլուց շատ պակաս կ'արժենան աշխատանքները, ոչ աւելի 35—40 հազար ռուբլուց :

Մոսկուան բաց թողեց այդքան գումարի վարկ, եւ ամսէ ամիս գանձելով այդ փողը գաղութահայերում, փոխադրում է Երեւան :

Ջրանցքը կ'ունենայ 15—16 վերստ երկարութիւն, կ'ոռոգի 1800—2000 տեսիատիւնի մօտ մի տա-

րածութիւն, եւ դրանով մի ահագին բարիք կ'անի մեր ոտքի կանգնող երկրին, նրա դիւղացուն եւ բանւորին :

Մոսկուայի պատգամաւորը Երեւանի համաթողովում, պրօֆէսոր Ա. Քալանթար, ասում էր, որ նրանք չկարողացան իրենց խոստումը կատարել ժամանակին, որովհետեւ Ռուսահայ գաղութները, նոյն իսկ այնպիսիներ ինչպէս Րոստով, Նախիջեւան, Արմաւիր, Խարկով, Լեայլն չօգնեցին իրենց :

Եթէ այդ օգնութիւնը լինէր ժամանակին, մենք գուցէ այդ ջրանցքը ունենայինք արդէն մի տարի առաջ :

Ես երբեք չեմ մոռանայ : «Հայաստանի Օգնութեան Կոմիտէի» համաթողովի նիստն էր :

Բեմ է բարձրանում ընկ. Երզնկեան, Հայաստանի Հողային Ժող. կոմիտարը :

Նա խօսում է կտրուկ : Շեշտում է իւրաքանչիւր բառը :

«Տեսեալն զարդացման համար — ասում է նա — երկիրը պիտի աղատել քայքայումից եւ վրուզումից :

«Դուք տեսնում էք թէ ինչպէս մեր բանւորն ու գիւղացին դրա համար փիթխարի ջանքեր են թափում : Օր օրի վրայ նա քար է դնում իր քանդւած հայրենիքի կառուցող շէնքի վրայ, եւ այս տեսակէտից նրանք, որոնք ցանկանում են աջակցել մեր գործին՝ չպիտի ուշանան :

«Մեր հայրենիքը չենանում ու կերտում է իր բանւորի, իր գիւղացու ձեռքով : Գաղութահայութիւնը պարտականութիւն ունի մասնակցելու այդ չենացման :

«Եթէ դուք այդ օգնութիւնը մեղ կ'ուղարկէք յետոյ, աւելի ուշ, կարող է պատահել, որ Հայաստանի բանւորն ու գիւղացին, այն ժամանակ այլ-

և ևս նրան պէտք չեն ունենայ և կարող է նոյն իսկ պատահել, որ այդ օգնութիւնը նոյն իսկ չեն էլ ընդունի, նրանք նրան կարող են ևս յետ դարձնել»:

«... Նրանք այդ օգնութիւնը կարող են ևս յետ դարձնել»:

Դրանք գեղեցիկ խօսքեր չէին որ ազդելու համար, ասում էր ընկեր Երզնկեան:

Դա համոզմունք էր, որ ունեն մեր երկրի կառավարիչները, վստահ թէ իրենց, և թէ իրենց երկրի բանուոր ու զիւղացու ոյժի վրայ:

Եթէ օգնութիւն տալու էք հայրենիքին, տէք նրան, երբ նա նրան ծայրայեղ պէտք ունի: Աւելի ուշ նա կարող է պէտք էլ չլինել:

Նրանք կարող են, ինչպէս ասում է ընկ. Երզնկեան և չընդունել նրան:

Հայաստանը այլևս հին, լալկան և դարերի մտրացկանը չէ:

Դա աշխատաւոր մեղուների մի երկիր է, որին եթէ մի քանի տարի այդպէս հանդիստ կ'թողնեն, նա ոտքի կր կանգնի և հպարտ իր արժանապատուութեան գիտակցութեամբ, դէն կ'չպրտի ամէն մի ողորմութիւն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՀԻՃՆԵՐԸ

Ս. 2-ի կառավարութեան ամենամեծ հոգսերից մէկն էլ Հայաստանի ճահիճներն են:

Այդ ճահիճները բռնում են 46,395 քառակուսի տեսիատին տարածութիւն, որից 15,460 տեսիատին Երեւանի և 17,170 տեսիատին էջմիածնի դաւառում:

Այդ ճահիճները չափազանց մեծ վնաս են հասցընում երկրին:

Նրանք ոչ միայն մալարիա հիւանդութիւնն են տարածում ժողովրդի մէջ, այլ ևս խլում են մեր

չարքաչ դիւղացուց հսկայական տարածութիւն, որի չորանալուց յետոյ, կ'վերանան մի շարք շրջանների հողասակաութիւնը:

«Հոկ»ի վերջին համաժողովի ժամանակ Բարիդի գաղութահայութեան կողմից խոստում եղաւ, այդ ճահիճների մի մասի չորացնելը իրենց վրայ վեր առնելը:

Այս տարւայ գարնան կառավարութիւնը, ինչպէս հաղորդում են Հայաստանից ստացուող լուրերը, արդէն այդ ուղղութեամբ սկսել է գործնական աշխատանքների:

Գ.

ՇՈՒԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Մանուկ հանրապետութեան մեր մայրաքաղաքում, այժմ շատ քիչ են աչքի ընկնում հին, բնիկ տեղացիներ:

Բնակչութեան խոշոր մասը կազմում են եկեղրները, որոնց մէջ առաջին տեղը բռնում են Վանեցիները: Դրանց ձեռքն է քաղաքի առուտուրը, շուկան:

Մեծ առևտրական Փիրմաներ, խոշոր դրամական գործառնութեամբ Հայաստանում չկան: Եթէ չհաշուենք կառավարութեան կոնեակի գործարանը, և բամբակի «Գրախտ» ընկերութիւնը, Հայաստանում մնում են ամենախոշոր առևտրական գործօններ «Հայ-Պետտուր» և Հայկօպ» կոպերացիան, որ ունի մի քանի ճիւղեր և մեծ քանակութեամբ սպառող անդամներ:

Տարեկան շրջանառութիւնը «Հայ-Պետտուր»ի և «Հայկօպ»ի կազմում է տարեկան մօտ 6 միլիոն լուրլի, ոսկով:

Ապրանքների գները «Հայկօպում» թէեւ անընդան չափով, այնու ամենայնիւ սլակաս են շուկայի մասնաւոր խանութպանների գներից:

Մինչեւ Փետերացիայի հաստատելը, Հայաստանը մեծ նեղութիւն էր քաշում ապրանքների:

Վրաստանի եւ Ադերբէյջանի սահմաններում, մաքսատների վերանայով եւ երկաթուղու կանոնաւորելով, ապրանքները հասնում են այժմ աւելի արագ եւ աւելի քիչ վերադիր ծախքերով ծանրաբեռնած:

Բայց եւ այնպէս ապրանքները Հայաստանում, ծախւում են աւելի թանկ քան Ռուսաստանում:

«Խ. Հայաստան»-ում եւ կարգացի մի յօդւած այդ մասին, ուր յօդւածագիրը այդ տարբերութիւնը շատ դէպքերում, հաշւում է մինչեւ 100%:

Դա ի հարկէ շատ ծանր է, մի այնպիսի երկրի համար, որպէս մեր գիւղացիական Հայաստանը, որը միայն իր դաշտի բերքերն ունի ծախելու, այդ ապրանքները գնելու համար:

Հազուատի կողմից մանաւանդ, Հայաստանի գիւղացիք չափազանց մեծ նեղութիւն են քաշում:

Եւ դա աչքի է ընկնում ամէն տեղ մեր երկրում, գիւղում լինէր թէ քաղաքում:

Երկրի տնտեսական կեանքում ահագին դժւարութիւններ էր առաջացնում նաեւ դրամական շրջանառութիւնը, որը մինչեւ Անդրկովկասեան Փեդերացիայի թղթագրամների բաց թողնելը, մի կատարեալ քաոս էր ներկայացնում Հայաստանի մէջ:

Հայկական փողերի հետ միաժամանակ դործ էին ածուում եւ ռուսական եւ վրացական եւ ադերբէյջանեան դրամանիշեր:

Առեւտրի մի մասը կատարւում էր թուրքական լիբրաներով եւ ռուսական ոսկով:

1920 Դեկ. 20ին Խ. կառավարութիւնը հենց իր

առաջին քայլում, պարտադիր է հռչակում ռուս սովետական դրամանիշները:

Նա նշանակում է կուրս հայկական թղթագրամների համար:

Վերջինները գոյութիւն ունէին մինչեւ 1922 Յունվար 1ը, որից յետոյ նրանք ջնջւեցին:

Դաշնակցական կառավարութեան ընկնելու միջոցին, երկրում մնում էր շրջանառութեան մէջ տաս միլիարդ հայկական դրամանիշ, որը ժամանակի կուրսով հաւասար էր 700 ռուբլու ոսկով:

Երկրի տնտեսական կեանքի կենդանանալու, եւ առեւտրական շրջանառութեան մեծանալուն, մեծ խթան հանդիսացաւ անկասկած եւ Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների առանձին առանձին փողեր ունենալու վերացումը: Անդրկովկասեան Փեդերացիայում այժմ շրջանառութեան մէջ են միմիայն այդ դրամանիշները:

Սովետական փողերը թէեւ ընդունւում են, բայց շուկայում դործածական չեն:

Չերվոնցը նոյն դերն է խաղում, ինչպէս եւ Ռուսաստանում:

Գիւղացու համար ի հարկէ դժւար է նրան ձեռք բերել եւ դրամանիշների կուրսերի անընդհատ ընկնելը քիչ վնասներ չի հասցնում նրան, նրա խեղճ ու կրակ բիւտճէին:

Անդրկովկասեան թղթագրամների աստիճանաբար անկումը իրրեւ բնական երեւոյթ, ընդհանրապէս կրում էր պլանամեր բնոյթ, սակայն այս տարւայ սկզբին, նրանք աղետալի կերպարանք ստացան:

Գլխաւոր պատճառը այդ անկման, Անդրկովկասի Փեդերացիային բիւտճէն էր: Համաձայն պետական նախնական պլանի, երկրի ծախքի քանակը պիտի լինէր 50 միլիոն ռուբլի ոսկով: Եկամուտ-

ները հաշուած էին 37 միլիոն: Մնում էր բաց 13 միլիոն, մուտքի 22—24 տոկոսը:

Սակայն մենք չկարողացանք ծախքի որոշած սահմաններում մնալ: Բիւտճէն 24 թւականին հասնելու է 50 միլիոնի փոխարէն 80—90 միլիոնի:

Պատճառները երկու էին: Նախնական ծախքերի հաշւետման շրջանում, հիմք ունենալով չերվոնրուբլին, ապրանքային րուբլին հաշւած էր մէկ առ մէկ: Սակայն պրոֆէսիօնալ կազմակերպութիւնների պահանջմամբ, ի նկատի առնեց յետադայում, ապրանքային րուբլու իրական էկվիվալենտը:

Չերվոնի հաշուով պարզ բան է որ պիտի աւելանար մեր ծախքերի քանակը:

Երկրորդ պատճառը այն էր, որ 50 միլիոնանոց բիւտճէն հնարաւորութիւն չէր տալիս հոգալու մեր կուլտուրական եւ տնտեսական շինարարական կառիքների մինիմալ չափը:

Այդպիսով մեր բացը բարձրանում է մինչեւ 45% եւ դրա հետեւանք — թղթագրամների անկումը:

Ռուսաստանում կայուն վալիւտայ հաստատուելուց յետոյ, հաւանական է որ նա մեծ ազդեցութիւն կ'ունենայ եւ մեր երկրի Ֆինանսը առողջացնելու վրայ:

Առանձնապէս Հայաստանի պետական բիւտճէն կազմում է 6 միլիոն րուբլի տարեկան:

1923ին Հայաստանի կառավարութիւնը հաւաքել էր միասնական տուրք գիւղացիներից 725,000 փութ ցորեն, 1½ միլիոն րուբլի ոսկու արժէքով:

Ե.

ԵՐԵՒԱՆԻ ՈՒ ԳԱՒԱՌՆԵՐԸ

Մեծ պահատութիւն է զգացւում Երեւանում բրնակարանների:

Քաղաքի փողոցները թէեւ մաքրւած եւ շատ տեղ սալաշատակւած, տների մեծ մասը այնուամենայնիւ ներկայացնում են ասիական հին շէնքերի մի շարք, առանց երկաթէ ծածկերի, տափակ կրտուրով:

Ամրոցը ընտանիքներ ապրում են մի, կամ շատ շատ երկու սենեակում, զուրկ յարմարութիւններից: Քաղաքի մեծ շէնքերից մեծ մասը գրաւուած են բազմաթիւ կառավարչական հաստատութիւններից:

Նոր շինութիւններ, ինչպէս եւ ամէն տեղ Ռուսաստանում, պատերազմից յետոյ, այլեւս չկան: Շատ շէնքեր որոնք սկսել էին այդ տարիներում, պատերազմի ժամանակ, հենց այդպէս էլ մնացել են կիսաշէն:

Մինչդեռ Երեւանի ազգարնակութիւնը շատ խոշոր թւով աւելացել է նախապատերազմական շրջանից:

Քաղաքի փողոցները մաքրելու եւ ճանապարհները կանոնաւորելու վրայ 600 հազար րուբլի ծախսելով, Հայաստանի կառավարութիւնը, ինչպէս երեւում է կէս ճանապարհի վրայ կանգ չի առնում:

Ահա թէ ինչ նորութիւն են բերում մեզ այնտեղի թերթերը:

Ապրիլի 3ին, Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նիստում, վաւերացեց Երեւանը նոր յատակագծի վերածելու նախագիծը:

Առաջին յօդւածում աւսած է:

«Վաւերացւում է Երեւան քաղաքի բարգաւաճ-

ման եւ կանոնաւորման յատակագիծը, որ կազմել է ակադեմիկոս Ա. Գ. Տամանեանը»:

Յատակագծի մէջ նախատեսնուած է սեպհակա-նութիւնից հանել այն հողերը, որոնք ծառայելու են գոյութիւն ունեցող փողոցների ընդարձակման, նոր փողոցների, հրապարակների, դրօսավայրերի, քաղաքային փոքրիկ այգիների, սլարկերի, պետական եւ հասարակական շինութիւնների կառուցմանը եւայլն:

Յատակագիծը նախատեսնում է Հայաստանի մայրաքաղաքը, ասիական տիպի քաղաքից, իր յատուկ բոլոր պակասութիւններով, դարձնել մի բարեկարգ քաղաք, այգի-քաղաքի տիպի, տեխնիկայի վերջին խօսքի համաձայն:

Քաղաքային, Գաւառային Գործադիր Կոմիտէին առաջարկւած է արդէն գործի անցնել:

Քաղաքը ունի երկու գեղեցիկ ժողովրդական պարտէզներ, որոնցից մէկում գրւած են Ստեփան Շահումեանի եւ Սուրէն Սպանդարեանի արձանները:

Ինձ համար շատ ծանր է խոստովանիլ, որ այդ մեծ բազմութեան մէջ, քաղաքի բնակչութեան, ես չէի տեսնում մի բարձրահասակ, առոյգ, գեղեցիկ տղամարդի, մի աչքի ընկնող գեղեցիկուհու:

Կարճահասակ, թուխ դէմքով, նիհար կազմւած-բով, ահա մեր Երեւանի հայութիւնը:

Եւ դա աւելի աչքի է ընկնում, մանաւանդ տաճկահայ գաղթականների մէջ: Կարծէք տաճիկները սրի են քաշել բոլոր գեղեցիկներին: Ոչ մի գեղեցիկ դէմք:

Կաղ, կոյր, չեչոտ, շտիկ, որքան կ'ուզէք:

Մի առաւելութիւն որ ունի Երեւան քաղաքը, դա նրա ջուրն է: Յայտնի բժիշկ Լեւոն Տիգրանեանի ջանքերով քսան տարի առաջ, շինւած է մի գեղեցիկ ջրանցք, որով քաղաքը իր ջուրը ստանում է

Արագածի լեռների վրայ գտնւող «Գրբի-բուլաղի»* լեռնային ջինջ աղբիւրներից:

Սառը, մաքուր, այդ հիանալի ջուրը մի մեծ բարիք է քաղաքի համար:

Ամառը ես կարգացի, որ քիմիական վերլուծութեան ժամանակ, յայտնւել է, որ առուի եւ քաղաքի ջրերի մէջ, միեւնոյն քանակութեամբ վեր առած, երբ մէկում եղել է հարիւր հազարաւոր միքրոպներ (ճիշտ թիւը չեմ յիշում) Գրբի-բուլաղի ջրում եղել են նրանք միմիայն... Երեք հատ:

Շատ քիչ քաղաքներ, ոչ միայն Ռուսաստանում, այլ նոյն իսկ ամբողջ երկրաշնորհի վրայ կարող են պարծենալ մի այդպիսի ջրով:

Թէ ինչ բարերար աղբեցութիւն է ունեցել այդ ջուրը քաղաքի բնակչութեան համար, այդ ցոյց է տալիս այն փաստը, որ նրան քաղաք բերելուց յետոյ, սովորական մահացութիւնը Երեւանում, իջել է մօտ տասն անգամ:

Կան վիճակագրական տւեալներ:

* * *

Կեանքը Ալեքսանդրապոլում, նոյնն է ինչ որ Երեւան, սակայն որպէս աւելի բարձր դիրք ունեցող, նրանում իր շրջակայքով չեն մշակւում եւ չեն էլ կարող մշակւել ոչ խաղող, ոչ բամբակ եւ ոչ էլ մրգեղէն:

Ալեքսանդրապոլը ամառը գուրկ է սեպհական մրգից: Նշանաւոր «Կիրչլուկը» (գոշար) ահա նրա միակ միրգը:

Շինարարական աշխատանքները սլոտեղ, որ-սլիսին է փողոցների եւ խճուղիների մաքրելը եւ կարգի բերելը կատարւում էր եւ այնտեղ նոյն թա-

* «Քառասուն աղբիւրներ» բուրժեբէն:

վրով ինչ որ եւ Երեւանում :

Քաղաքը ունի մի շարք գեղեցիկ տներ, եւ սեպ-
հական թատրոնական շէնք :

Բնակարանային հարցի նոյն դժւարութիւնը :

Կարսի հետ քաղաքը յարաբերութիւն ունի շա-
բաթը մի անգամ երկաթուղու գծով :

Լէնինի մահուանից յետոյ, քաղաքը ի պատիւ
նրա վերանուանած է «Լէնինական»ի :

* * *

Սեւանայ լճի ափի մօտ, գտնուում է Նոր-Յայա-
զիտ քաղաքը :

Դա մի շատ յետ ընկած աւան էր պատերազմից
առաջ եւ իր ամբողջ գաւառով, ունէր 9 դպրոց մի-
այն :

Այժմ նա ունի 41 հայկական, 7 թրքական եւ 2
ռուսական դպրոցներ :

Շինուում էր ելեքարակայարան : Տեղական գոր-
ծունեայ ոյժերից մէկն է՝ նախկին Կարսի եւ Ատրը-
պատականի յայտնի առաջնորդ Եղիշէ Վրդ. Մու-
րատեան, որ դեռ պատերազմից առաջ, դէն դրեց
Փարաջան, ամուսնացաւ եւ Սեւանի մօտ իր գիւղա-
տընտեսական Ֆիրման բանալով, սկսեց պարապել
գիւղական աշխատանքով :

1917ին գալով Աստրախան ձեռք բերեց մի շո-
ղեմակոյկ, մեծ դժւարութեամբ տեղ հասցրեց նը-
րան, եւ երբ մի քանի ամիսների շարժարանքից յե-
տոյ, ջուրն էր բցել նրան «Աշոտ Երկաթ» անունով,
վրայ հասաւ տաճկական արշաւանքը, որ անցնելով
այդ կողմերով, քար ու քանդ արաւ ամէն ինչ :

Երկրում խողաղութիւն տիրելուց յետոյ, նա-
ւակը, որի պղնձէ մասերը գողացել տարել էին, եւ
մեքենան վնասել, Մուրատեան նորից ջանք է թա-
փում նորոգել եւ գործի դնել :

Այժմ Սեւանայ լճի վրայ կան երկու շոգեմա-
կոյկներ, որոնք 1923 Մայիսից սկսած, կանոնաւոր
հաղորդակցութիւն ունեն լճի հարաւային եւ արեւել-
եան ափերի եւ մասնաւորապէս Նոր-Յայազիտի հետ :

Երկուսն էլ կառավարութեան ձեռքն է :

Իրանցից մէկը յիշածս Մուրատեանի «Աշոտ
Երկաթ»ն է, միւսը «Լուկաշին» շոգեմակոյկը, որ
Խ. Հ.ի կառավարութիւնը ձեռք է բերել յետադա-
յում :

Վանքը Սեւանայ լճի վրայ դեռ եւս կայ : Նրա
շինութիւնների լաւ մասը, որպէս ազգային սեպհա-
կանութիւն, ծառայում է այժմ, որպէս հանգստեան
տներ, հիւանդ բանւորների եւ ծառայողների հա-
մար, որոնք ամառը գալիս են այդտեղ հանգստա-
նալու :

Առաջւան մի շարք սեպհական հարկատու գիւ-
ղերը վանքը չունի :

Շողերը բաժանւած են գիւղացիներին : Չկան
նաեւ ուխտաւորների նախկին խմբերը : Վանքում
մնում են միայն մի երկու վանականներ, որոնք այդ
հնադարեան վանքի ամբողջ միաբանութիւնն են
կազմու Բ այժմ :

Լճի ափին ապրող Մալականներից** մեծ մասը
թողել է իր հողերը եւ անցել Ռուսաստան : Մնացել
են շատ քիչերը : Հեռանալու գլխաւոր պատճառ ե-
ղել է հետեւեալը :

Զարական կառավարութիւնը բշկով Ռուսաս-
տանից այդ աղանդաւորներին եւ տեղաւորելով նը-
սանց առանց այն էլ մեր հողագուրկ գիւղացիների
հողերի վրայ, տեւել էր նրանց աւելի շատ հողաբա-
ժին, քան շնչի հաշւով, մերոնք ունէին :

Երբ Խ. Հ.ի կառավարութիւնը սկսեց հողը բա-

** Ռուս աղանդաւորներ :

ժանել բոլորին միահաւասար, առանց խտրութիւն դնելու թէ ով ինչ ազդութեան է պատկանում, այդ երես առած գիւղացիք, իրենց զրկած համարելով, թողին հեռացան Ռուսաստան:

Կար եւ երկրորդ պատճառ:

Իա կրօնական հայածանքի դադարելն էր ամբողջ Ռուսաստանում եւ աղանդաւորներից շատերը, որոնք որպէս աքսոր ապրում էին մեր երկրում, հասկանալի է, որ ներկայ պայմաններում կ'ցանկանային իրենց հայրենիքը վերադառնալ:

* * *

Մի սիրուն, փոքրիկ, բարեչէն քաղաքի տպաւորութիւն է թողնում նաեւ ծաղիկների եւ ծառերի մէջ թաղած Ջալալ-Օղլին, որի անունը նոյնպէս փախած է «Ստեփանաւան»ի ի պատիւ երկար տարիներ այնտեղ ապրած Ս. Շահումեանի:

Ունեն թատրոն, ախումբ, ելեքտրական լոյս:

Նոյնն է եւ Ղարաֆիլիսան: Այդ հիանալի ամբարանոցը ունի նոյնպէս ելեքտրական լուսաւորութիւն, համեմատաբար մաքուր փողոցներ, եւ քաղաքի կենտրոնում սիրուն ծաղկանոց:

2.

ԷՋՄԻԱԾԻՆՆ ՈՒ ԻՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փալ Հայաստան եւ չիինել էջմիածնում, դա միեւնոյն է լինել Հոռոմում եւ Պապին չտեսնել:

1920 Դեկտեմբերին, երբ կառավարութիւնը Հայաստանում անցնում է բոլշեւիկներին, նրանք նոյն ամսի 17ին մի դեկրետով, էջմիածնի վանական ճեմարանը, հնազնտական եւ ազգազրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը, որպէս

ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հիմնարկութիւններ, յայտարարում են Հայաստանի աշխատաւոր ժողովուրդի սեպհականութիւն եւ ենթարկում ժողովրդական Կոմիսարիատի իրաւասութեան, նշանակելով իրենց կողմից մի կոմիսար, որի ղեկավարութեամբ պիտի վերակազմէին նրանք:

Պետականացում են Հոփսիմէի վանքը, Զըւարթնոց եկեղեցու աւերակները յարակից շինութիւններով ու գոյքերով, էջմիածնի նոր վեհարան կոչւած շինութիւնը, վանական նոր հանրակայանը իր կահաւորութեամբ:

Յանձնարարում է Լուս. Ժող. կոմիսարիատին վերակազմել էջմիածնի կուլտուր-պատմական հաստատութիւնը, որ նպատակ պիտի ունենայ, գիտնական հիմքերի վրայ զնելու Հայաստանի ժողովրդի կուլտուրական ուսումնասիրութեան գործը եւ միաժամանակ մասսաների սեպհականութիւնը դարձնել հնութեանց բոլոր այն յիշատակարանները, որոնք գիտնական եւ գեղարեստական արժէք ունեն եւ կարող են ազդիւր դառնալ կուլտուրական նոր արժէքների ստեղծագործութեան:

Այդպիսով հիմք է դրում էջմիածնի կուլտուրական հաստատութիւնը, որի իրաւասութեան են յանձնում մատենադարանը, թանգարանը, ընթերցարանը, վանական հանրակայանները, Հոփսիմէի վանքը եւ Զւարթնոց աւերակները:

Փետր. 2ին այդ հաստատութեան անդամներ են նշանակում Լեւոն Սարգսեան, Երանդ Տէր Մինասեան, Սենեքերիմ Տէր Յակոբեան եւ Լէոն Լիսիցեան:

Մինչդեռ հաստատութեան գրական խումբը, ըզրադրած էր կազմակերպչական աշխատանքով, իրենց հետ ունենալով եւ նոր աշխատակիցներ՝ Ար-

չակ Բարխուտարեանին, Թադէոս Աւտայրեկեանին, և Եւսրոպ Եպիսկոպոսին, գալիս է Փետր. 17ի յեղաշրջումը, կառավարութիւնը նորից անցնում է Դաշնակցականներին և «Հայաստանի Փրկութեան կոմիտէի» կնքով, կնքուում են բոլոր այդ սենեակները:

Թէև այդ նոյն կոմիտէի կարգադրութեամբ կնիքները չուտով հանուում են և խումբին առաջարկուում է շարունակել իրենց աշխատանքը, սակայն այդ խմբից էջմիածնում մնացած է եղել միմիայն Սենեքերիմ Տէր Յակոբեան:

1921 Ապրիլին Ս. Իշխանութեան վերականգնմամբ վերահաստատուում է նաև հաստատութիւնը իր օրինական սահմաններում:

Հրաւիրուում են նոր անդամներ՝ Լէօ, Աճառեան, Դաւիթ Անանուն, ճարտարապետ Թորոմանեան և Չուբար:

Հաստատութիւնը մինչև այժմ հրատարակել է չորս գիրք:

1.— Գիրք պատմութեան Շապհոյ Բագրատունոյ: Աշխատ. Եւսրոպ Եպիսկոպոսի:

2.— Հայ-Ռուսական օրիէնտացիայի ծագման խնդիրը: Պատմաքննական ուսումնասիրութիւն Աշոտ Յովհաննիսեանի:

3.— Արրահամ Սոստովանողի վկայք արեւելից: Թարգ. ասորերէնից Գայրուտ Տէր Մկրտիչեանի:

4.— Ռուսահայերի հասարակական զարգացումը: Դ. Անանունի:

Հաստատութիւնն ունի և իր պարբերական հանդէսը (որտեղից և քաղում եմ իմ տեղեկութիւնները):

1922 Մայիս 11ից հաստատուած նոր կանոնադրութեամբ, Հաստատութիւն անւանուում է նոյն թւից «Հայաստանի Գիտական Հաստատութիւն»:

Ես հիմ կարող իմ առանձին հիացմունքը չյայտնել մատենադարանի կառավարիչ Սենեքերիմ Տէր Յակոբեանի մասին:

Նա արեւմտահայ է: Գիտէ մի քանի լեզուներ և այս մի քանի տարում մատենադարանը իտէլական կարգ ու կանոնի է դրել:

Նա կարգի է բերել էջմիածնի արխիւր: Ունի շատ սիրելի վերաբերմունք դէպի բոլոր նրանց, որոնք այցելում են էջմիածնի այդ հիմնարկութիւնները, հետաքրքրուում են նրանցով կամ օգտուում են իրենց գրական աշխատանքների համար:

Վ.Ա.Ն.ԲԸ ԵՒ Մ.Ա.Տ.ԵՆԱԴԱՐԱՆԸ

Երեւանից 18 վերստի վրայ, բաւականին լաւ խճուղիով միացած, գտնուում է Վաղարշապատը էջմիածնի վանքով:

Արարատի ոտքերի տակ ապաստանած այդ հրնադարեան տաճարը, որ դարերի մի երկար շրջանում, ականատես է եղել Հայ ազգի անթիւ տառապանքներին, չէր կարող մի որոշ պատկառանք չազդել ամէն մի հեռուից եկող հայի վրայ, ով էլ ուղում է նա լինէր, հաւատացող կամ ոչ, այդ միւսնոյն է:

Վանքը շրջապատուած է այժմ մի շարք նոր և կիսաւարտ շինութիւններով: Դրանց մէջ իր գեղեցկութեամբ աչքի է ընկնում վանքի նոր մատենադարանը, շինուած 1908—11ին, Եւսրոպ Եպիսկոպոսի ծրագրով և ջանքերով:

Նա բոլորովին աւարտած է: Կառուցուած է սրբառատաշ քարերից: Սրահներից մէկը, որ յատկապէս ձեռագրերին է յատկացրած շինուած է սիմէնթով:

Ձեռագրերին յատկացրած պահարանները ամբողջուած են պատերի մէջ և բոլորը երկաթից են:

Փայտի ոչ մի կտոր: Ամէն տեխնիքական յարմարութիւն ձեռք է առնւած թէ լոյսի եւ թէ խոնաւութեան վերաբերեալ, որպէս զի ձեռագրերը ազատ մնան փճանալուց:

Նրանց թիւն է 6,400:

Նրանցում, մեր ժողովրդի պատմութիւնն է կենդանի արտացոլումով:

Այդ հնութիւն շնչող կողմերը, իրենց միջի մազաղաթեայ թերթերով, խօսում են այն մասին կարծես, որ այդ ժողովուրդը, որ ունի իր խոր պատմութիւնը, իրաւունք ունի ասրելու եւ... պիտի ասրի:

Մի քանի սրահներում տեղաւորւած են տպագիր գրքեր թէ հայ եւ թէ օտարազգի լեզուներով:

Բոլորովին մի առանձին սրահ մամուլի բաժինն է, ուր կան բազմաթիւ կազմած համարներ ամբողջ տարիների, թէ մեր եւ թէ Պոլսական թերթերի եւ ամսագրերի:

Մի լայն սրահ այդ շինութեան մէջ յատկացւում է պատկերասրահի, ուր Այվազովսկու մի մեծ ծովանկարի հետ կան եւ բազմաթիւ ուրիշ նկարներ, շատերը կրօնական բովանդակութեամբ:

ԹԱՆԳԱՐԱՆԸ

Աւելի անյարմար շինութեան մէջ տեղաւորւած է վանքի թանգարանը: Բաղկացած է երկու մասից, չորս սրահներով, որոնք այնքան ալ ընդարձակ չեն:

Զիայ այդտեղ Երեւանի թանգարանի կարգ ու կանոնը:

Բազմաթիւ հնութիւններ պահարանների մէջ ամառ են իրար կողքի, առանց սիստեմի, առանց համարների:

Աչքի են ընկնում ընդհանրապէս վարդապետի հաւա-

քածուն, որ բռնում է 20 պահարան, Գարեգին եւ պիսկոպոսինը 16 պահարան, Խրիմեանինը 11 պահարան, Բրօֆէսօր Մարրի, Մեսրոպ եպիսկոպոսի եւ ուրիշների 7 պահարան:

Կան հետաքրքիր հնութիւններ, կան եւ նոր բաներ:

Ասում էին, որ թանգարանը կարգի պէտք է դրի: Առարկաները պէտք է համարադրեն, եւ դասաւորեն ժամանակագրական բաժանմունքներով:

Այս անգամ ես նրանց վրայ մանրամասն կանգ առնել աւելորդ եմ համարում:

ՆՈՐ ՇԷՆՔԵՐԸ ԵՒ ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

Աւարտած շինութիւններն են նոր հանրակայանը երկու յարկանի 18 բնակարաններով, իւրաքանչիւրը 3 սենեակից: Կիսում ապրում են վանքի հոգեւորականութիւնը, կիսում խորհրդային հիմնարկութիւնների ծառայողները:

Մի մեծ շինութիւն, որ յատկացւած է մանկավարժանոցի:

Կիսաչէն մնում են, հսկայական մի շինութիւն սրբատաշ քարերից, երկյարկ, մօտ 60 սենեակներից եւ դահլիճներից բաղկացած: Նա շինւում էր Սանթաչեանի ծախքով, որպէս վեհարան: Եւ մի եռայարկ շինութիւն, որ շինելիս է եղել որպէս օբսերվատօրիա եւ մարմնամարզանոց:

Հին Գէորգեան ձեմարանը, ծառայում է այժմ, որպէս Վաղարշապատի Չրդ աստիճանի դպրոց:

Ձեմարանի ընդարձակ ննջարանը, որ քար ու քանդ էր եղել վերջին տարիներում, ամառը նորոգւում էր:

Այդտեղ պիտի տեղափոխուէին 800 որբեր:

Ձեմարանի բակում կանգնած են երկու արձան-

ներ, մէկը Ռ. Պատկանեանի բրոնզեայ կիսարձանը, միւսը նրա դիմաց, սպիտակ քարէ մի սիւն, որի գագաթին կանգնած է բանուորը, մուրճը ձեռքին:

Այդ արձանը կանգնեցրեա՞ծ է 14 կոմմունիստները յիշատակին, որոնք ընկել էին 21 Փետրուարի յեղաշրջման ժամանակ:

ՆԵՐՍԷՍԵԱՆ ԼԻՃՆ ՈՒ ԱՆՏԱՌ

Ճեմարանի առաջ գտնուող բակում, չկան այլևս այն հրաշալի հնադարեան չինարիները եւ ուրիշ ծառերը, որոնք մի գեղեցիկ այգու կերպարանք էին տալիս այդ հրապարակին:

Նրանց վառել եւ աւերել էին գաղթականները: Ահա եւ Ներսէսեան լիճը:

Մի րոպէ ես ապշած կանգ առայ: Հարիւրամեայ ընդարձակ անտառը, այլևս գոյութիւն չունէր: Նրան հիմնովին տեղահան էին արել: Անտառի տեղ ձգուե՞լ էին այժմ ընդարձակ դաշտեր ցորենով եւ բամբակով ցանուած:

Հետաքրքիր էր որ անտառը կտրեցին ոչ թէ տաճկահայ գաղթականները, որ 15 թւականից սկըսած մի քանի անգամ մեծ խմբերով եկել անցել էին Էջմիածնի վրայով, այլ թուրքական արշաւանքի ժամանակ, հենց իր Էջմիածնի հարեան, Սուրմալուի ոռոսահայ գաղթականները, իրենց շատ կարճ ժամանակայ գաղթի ժամանակ:

Նրանք կտրել էին ծառերը, ոչ թէ տաքանալու համար միայն, այլ ամենամեծ մասը տարել էին Երեւան ծախելու:

Լճի երկու ափին անցեալ գարնան երեւի տնկած են եղել նոր ծառեր, բայց անխնամ եւ անջուր մնալու պատճառով չորացել են, թէեւ առուն անցնում է կողքով:

Նկատուե՞մ էր մի տեսակ ընդհանուր լքում: Նախկին կենդանութիւնը վանականների մէջ այլևս չկայ: Կարծես այլևս ոչ ոք նրանցից սիրտ ու գլուխ չունի այդպիսի գործերով զբաղելու:

Լճի ափը եւ անտառը, վանքի հոգեւորականութեան սիրելի գրօսավայրերն էին մի ժամանակ: Դուք նրանց կ'հանդիպէիք այդտեղ օրւայ ամէն ժամին:

Ա՞յժմ:

Այժմ նա բոլորովին այլ պատկեր է ներկայացրնում:

Չորս ամսւայ ընթացքում ոչ մի անգամ, ոչ մի հոգեւորականի եւ չտեսայ լճի ափում գրօսնելիս:

Դրա փոխարէն տեղական օրիորդներն ու երիտասարդներն էին, որ խումբ խումբ գրօսնում էին այդտեղ ամէն օր:

Նոյն իսկ վանքի բակը այլևս հին տեսարանը չի ներկայացնում: Այդտեղ դուք աւելի շուտ եւ աւելի շատ կ'հանդիպէք այժմ խորհրդային ծառայողների իրենց պորտֆէլներով, քան վարդապետների իրենց վեղարներով:

Բակում լիքն են ծառայողների կանայք եւ երեխաներ:

Եւ վերջապէս վանքում չկան այլևս այն թւով վեղարաւորներ որքան առաջ, նամանաւանդ երիտասարդ վանականներ:

Եւ ո՞վ է ներկայ պայմաններում գժել վարդապետ ձեռնադրելու:

Բոլոր կուսակրօնների թիւը Էջմիածնում հազիւ մի երկու տասնեակի հասնի:

Վանքը այլևս չունի իր ձեռքում այն մեծ քանակութիւնը մշակելի հողերի, որ առաջ ունէր:

Ունենար էլ մշակողներ չունի:

Գրական-գիտական աշխատանքով վանքի մա-

տենագարանում ձեռագրների բաժնում աշխատում են Մեսրոպ, Գարեգին, Բազրատ եւ Գիւտ եպիսկոպոսները: Չորսն էլ հմուտ հայկարաններ են եւ ունեն տպագրելու պատրաստ բազմաթիւ աշխատութիւններ:

Ինքը տաճարը նոյնպէս փոփոխութիւն է կրել: Ամառը, նրա փլած մի կաթողիկէն, այդ հնադարեան ճարտարապետութեան ամբողջութեան, չափազանց վնասել է: Նա դատել է կարծես մի ոտքով կաղ:

* * *

Իւրաքանչիւրին կ'հետաքրքրէր իմանալ թէ ի՞նչ յարարերութիւն ունի այժմ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը դէպի վանքը եւ մասնաւորապէս դէպի Կաթողիկոսը: Արտասահմանի հայ գաղութիւնների մէջ տարածւել են լուրեր, որ Հայաստանի կառավարութիւնը հալածում է Կաթողիկոսին, վանքի միաբանութեան եւայլն եւայլն:

Սուտ եւ անհետեւ լուրեր են դրանք, դիտում-նաւոր կերպով տարածւած:

Ոչ մի հայածանք:

Բայց եւ ոչ մի ուշադրութիւն:

Ի հարկէ մի կոմունիստական կառավարութիւնից՝ չէր կարելի պահանջել, սիրալիր վերաբերմունք դէպի մի հիմնարկութիւն, որի գոյութիւնը նրանք ոչ միայն չեն ընդունում, այլ եւ համարում են վնասակար:

Յարարերութիւնը դէպի Կաթողիկոսը նոյնն է, ինչ որ դէպի ամէն մի քաղաքացի:

«... Կղերը, նոյն իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսը — ասում է Լուկաչին իր ճառերից մէկում — կրում են համահասարակարտականութիւն, ինչպէս ամէն մի քաղաքացի մեր երկրում եւ ենթարկւում են մեր Խորհրդային օրէնքներին»:

Յամենայն դէպս կառավարութիւնը կարելի եղածի սահմաններում կորեկտ է եղել թէ դէպի վանքը եւ թէ դէպի Կաթողիկոսը:

Բայց եղել են դէպքեր, երբ մի քանի հոգեւորականներ, իրենց անտակտ գործելակերպով, մասնաւոր արտասահմանում, գրգռել են կառավարութեան եւ զայրացրել:

Դրանցից մէկն է Ամերիկայի հոգեւոր ներկայացուցիչը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԸ ՈՒ ՇՐՋԱԿԱՅԻԸ

Վաղարշապատը, որ շրջապատում է վանքին, քաղաքի է վերածւած:

Ես եղել էի այնտեղ 30 տարի առաջ: Շատ քիչ փոփոխութիւն այս երեսուն տարւայ ընթացքում:

Նոյն ցեխէ սլատերով, եւ հում աղիւններով շինւած տները, նոյն նեղլիկ եւ խորտ ու բորտ փողոցները:

Մի փողոց միայն, որ քիչ թէ շատ նման է մի բանի, ունի մի քանի քարաշէն տներ, որոնք ըստ մեծի մասամբ բոնւած են կառավարչական հաստատութիւններով:

Մի նորութիւն միայն, որ հենց առաջին հերթին աչքի էր զարկում, դա նրա փողոցների ելեքտրական լուսաւորութիւնն էր:

Մի առաւելութիւն, որ ունեն Վաղարշապատից այդ այն է, որ նրանց նոյն իսկ ամենաաղքատիկ տների առաջ կան փոքրիկ պարտէզներ, մեծ մասամբ պտղատու ծառերով:

Իւրաքանչիւր ընտանիք, բնիկ Վաղարշապատցիներից ունի իր առանձին խաղողի այգին: Այդ այգիները քաղաքից չորս վերստ հեռաւորութեան վրայ են դրուում:

Վանքն էլ ունի իր խաղողի երկու ընդարձակ այգիները, որոնք մի ժամանակ հարիւրաւոր խալվար խաղող են եղել տալիս:

Այժմ թողնւած են անխնամ, երեսի վրայ:

ԳԻՒՂԵՐԸ

Ես անցայ Վաղարշապատի գիւղերը:

Անցնում են տարիներ, անցնում են դարեր, եւ դուք ման գալով Հայաստանի գիւղերում, գտնում էք նոյնը ինչ որ առաջ էր:

Ոչ մի փոփոխութիւն: Ոչ մի նորութիւն: Ոչ մի առաջդիմութիւն:

Նոյն ցեխէ եւ քարէ գետնափոր օտաները, նոյն անդրջրհեղեղեան կահ կարասին, նիստ ու կացը:

Հենց նորերս էր, որ մի ճանապարհորդ ման գալով Ապարանի գիւղերը, իր տպաւորութիւնները նկարագրել էր «Ս. Հ.»-ի էջերում:

Այդ երկար եւ ընդարձակ յօդածից, որի վերնագիրն էր «Նամակ Քսենոֆոնեան գիւղերից», ես կ'ըրեմ մի քանի կտոր:

«Արագածի ստորոտներում, դաշտավայրի տափարակներում, գետնի երեսին, հաղիւ նշմարւում են ինչ որ խորտուրտութիւններ:

«Իրանք Ապարանի գիւղերն են, որոնք իրենց բնակավայրի տեսքով, ճաշակով եւ կուլտուրայով, դեռ եւս ապրում են Քսենոֆոնեան դարերում:

«Ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ այդտեղ մարդկային մտքի եւ առաջդիմութեան էվօլյուցիան դադարել է առաջ շարժել, սայլը կտարւել է ու այդպէս կանգնած մնացել դարերի ընթացքում:

«Ապարանի գիւղացիութիւնը մեծ մասամբ Տաճկահայաստանի Մուշի եւ Բասէնի գաւառներից են, ուստի եւ տաճկահայ ժողովրդի լեզուն ու եալլի պարերը տիրապետում են այդտեղ:

«Ապարանի գուռնան ու դհօլը, որին իրենք նաղարայ են անւանում, յիշում են որպէս առակ:

«Դհօլը այնտեղ այնքան մեծ է լինում, որ դըռնովը չի մտնում, ուստի կտրան էրդիքը քանդում են եւ այնտեղից իջեցնում տունը:

«Պատմում են, որ դհօլը յաճախ զարկելիս, որ լինում է եալլի պարի ժամանակ, ճրագը շատ անգամ հանդում է եւ տունը մնում մթութեան մէջ:

«Երբ Ապարան էք ընկնում, թւում է թէ գտնւում էք հիւսիսային բևեռում, ուր մարդկութիւնը եւ բնութիւնը տակաւին մնում են անաղարտ ստեղծագործութեան առաջին օրերից»:

Թղթակցի այդ յօդւածը Ապարանի համար, յիշեցնում է ինձ, ութսունական թւականներին «Մըշակ»-ի յայտնի Ֆիլիէտօնիստ Կոօի մի սրամիտ առակը:

Մի անգամ Ասուած — ասում է Կոօն — ցանկացաւ տեսնել իր ստեղծած աշխարհը: Կանչեց Գարբիէլ Հրեշտակապետին եւ հրամայեց նրան առաջնորդել իրեն այնտեղ:

Գարբիէլը տարաւ նրան Ամերիկա, տարաւ Անգլիա, Շվեյցարիա, Ֆինլանտա:

Ասուած մնացել էր շարած: Նա տեսնում էր բազմաթիւ շողենաւեր, տեսնում էր երկաթուղիներ, դրամվայ, շարժում, աղմուկ, ելքաբաղանութիւն եւ ոչ մի քայլ անմշակ հող:

«Ծօ Գարբիէլ, անիծած, էդ ուր ես բերել ինձ — դոտում է Ասուած — ես այդպիսի բաներ չեմ ստեղծեր: Տար ինձ վերջապէս այնտեղ ուր Ադամն ու Եւան ստեղծեցի»:

Եւ... Գարբիէլը բերում է Աստուծոն Հայաստան:

«Ա'... Ի՛նչ ունեմ անելու — բացազանչում է

Աստուած ուրախացած — Ա՛յ երկիր, ինչպէս ստեղծել եմ, այնպէս էլ մնացել է»:

* * *

Այժմ միայն, սկսել է մի տենդոտ աշխատանք գիւղը լուսաւորելու:

Շինուում են օրինակելի գիւղեր, յատուկ ճարտարապետների հսկողութեան տակ, դրանցից մէկը երեւանի մօտ, «Նոր Անի» անունով, միւսը էջմիածնից վեց վերստի վրայ և ուրիշներ:

Կառավարութիւնը յայտարարել է, որ հանրապետութեան տասնամեակին նրա սահմաններում ոչ մի անգրագէտ չպիտի լինի:

Ապաստում են Ամերիկայից տրակտորներ և գիւղատնտեսական գործիքներ, խոստանում են ևլեքտրոֆիքացիայ:

Մանուկ հանրապետութեան մէջ ծրագրուում են հսկայական բարենորոգումներ:

Գուցէ և չափազանցութիւն, բայց այդ բոլորը ցոյց է տալիս այն եռանդը, ուր մարդիկ իտէաների խորին արբեցութեան մէջ, մտածում են դրախտ դարձնել մեր երկիրը:

Անյողդողդ հաւատ դէպի գաղափարի յաղթանակը, ահա թէ ի՛նչը ծնեց այդ մարդկանց:

Ի՞նչ է մնում մեզ անել:

Մեզ, մեր հայրենիքից հեռու ընկած, բայց սրտով նրան մօտիկ գաղութահայերիս:

Վերջին հայկական համաժողովի ժամանակ Բարիդի ներկայացուցիչ Կարիկեան, իր ճառերից մէկում հետեւեալը ասաց:

«Միլիոններ հաւաքած ու ծախսած ենք քաղաքական և այլ նպատակների համար, մինչդեռ մեր գործը պիտի լինէր, երկիրը վերաշինել:

«Ծառը կենդանի պահելու համար, մենք պիտի նրա արմատը ջրենք, մինչդեռ մենք նրա արմատն ու հողը թողած, ջուրը տերեւներին սրսկել ենք:

«Մեր ազգի հիւանդութիւնն է անհատները միայն փրկել:

«Արմատախիլ մի ծառի, որքան էլ ճիւղերին խնամք տանէք, դա միեւնոյն է, նա պէտք է կորչի:

«Ասում էք որ Հայաստանը փոքր է, որ մնացորդ գաղթականութեան տեղ չկայ տեղափոխելու: Միայն է, փոքր չէ:

«Դուք ունէք տասնեակ հազարներով տեսիատիւ անջրդի, անպէտք հողեր, ճահիճներ, սրոնք ժողովուրդին օգուտ տալու փոխարէն մալարիա հիւանդութիւնը կ'տարածեն: Պէտքական դարձրէք այդ հողերը: Չորացրէք ճահիճները, տէք ջուր գիւղացուն, հեռացրէք մալարիան և դուք տեղ կ'ունենաք բոլորի համար: Երկիրը տասն անգամ աւելի արդիւնք կ'տայ քան նա տալիս է հիմա:

«Առողջ մարմնի մէջ, առողջ կուլտուրայ:

«Պէտք է գերադասել տեխնիքայի զարգացման գործը, աղքատախնամութեան գործից:

«Հայրենիքի մէջ է միայն, որ մտաւորականը կարող է օգտակար լինել իր ազգին»:

Հարկ չկայ ասել, թէ որքան ճիշտ են Կարիկեանի խօսքերը:

Աղգասիրական հովերով բռնւած, ութ, ինն տարի առաջ, պատերազմի սկզբին, մեզ այնպէս էին յափշտակել, որ մենք գաղութահայերս, մեր ոգևորութեան մէջ, ոչինչ չէինք խնայում:

Կենտիկ. Աստրախանում, մի օրուայ մէջ, Սեմի-նարիայի դահլիճում, «Մեր Հայրենիք»ը երգելուց յետոյ, երբ թերթը գրեց ստորագրելու յօգուտ Թիֆլիսի կենտրոնական բիւրոյի, որ խմբեր էր

կազմակերպում կուրի դրկելու Հայաստան, ստորագրուեցին 40,000 բուրլի սկով:

40,000 բուրլի մի քանի ժամայ մէջ:

Այսօր նոյն գաղութը, երբ նրան դիմել էր Մոսկուայի, Հայաստանի Օգնութեան Կոմիտէի ճիւղը, խնդրելով օգնելու, այն կոմիտէին, որի նպատակն է իրականացնել օգնել մեր հայրենիքին, երբ նրա, երկրի 90 տոկոսը կազմող աշխատաւոր մասսան, չլիթաները ջարդած, ազատ ու հանգիստ, մըջիւնների պէս, իր աւերակ օջախի կարկտելովն է դրադուած եւ մեծագոյն կարիք ունի օգնութեան, այդ նոյն գաղութը երեք ամսայ մէջ հաւաքում եւ տալիս է . . .

40 շերտներ: Մենք հայերս մի խոշոր պակասութիւն ունենք: Մենք չինում ենք եկեղեցիներ, որպէս զի նրա պատերի վրայ յաւիտեան մեր անունը կարդան: Մենք հազարներ տւել ենք անհատներին, որոնք իրենց ճոճոան Ֆրագներով, գովել ու փառաբանել են մեզ: Ծոյել են մեր ինքնասիրութիւնը: Մենք միլիոններ քամու ենք տւել, սին, քաղաքական նպատակների համար, որի մեծ մասը սրիկաների կորուցն է անցել, կամ ինչպէս ասում է Կարիկեան, ջրել ենք ծառի տերեւները արմատի փոխարէն:

Ժամանակ է այժմ, որ մեր գաղութահայերի աշխատաւոր մասսան, նրա գիտակից մասը, օգնութեան գայ իր եղբայրներին, օգնէ նրան այն ժամանակ, երբ նա այդ անմիջական օգնութեան կարիք ունի, երբ նրա առաջ դրւած են հսկայական ծրագիրներ, որոնց յաղթելու համար, գերմարդկային ճիգեր են հարկաւոր:

Ես կոմմունիստ չեմ, բայց Հայաստանում անցրածս չորս ամիսը, ինձ համոզեցին, որ կոմմունիստները ոչ միայն փրկեցին Հայաստանը, այլ միակ եւ միակ կառավարութիւնն էր, որ կարող էր եւ կարողացաւ խաղաղեցնել երկիրը, դադարեցնել ազգա-

միջեան կռիւները, դարաւոր թշնամութիւնը հարեւանների մէջ ջնջել, ձեռք տալ գիւղացուն եւ աշխատաւորին, դուրս քաշել խաւարից, եւ առանց յետին մտքերի, նրա առաջ լայն բաց անել կուլտուրայի եւ առաջդիմութեան դռները:

Թող վաղը փոխի սովետական իշխանութիւնը Ռուսաստանում, եւ Միլիկովները նորից բռնեն իրենց աթոռները — ինչպէս ասում է Գ. Չալխուշեան — Հայաստանը նորից կ'դառնայ Ռուսաստանի ծայրագաւառներից մէկը, ուր նոր Գալիցիներ, նրա գլխին նորից կ'իսպառն իրենց զգուշի եւ կործանարար խաղերը:

Ոչ մի հայ, որին իր հայրենիքի շահը աւելի թանկ է, քան իր անձնականը, թող այդ ոչ մի բոլոր չմոռնայ:

Երբ մենք, երկրագնտի չորս կողմը ցրւած, հայրենիքից հեռու, բայց սրտով նրան մօտիկ, հայ աշխատաւոր մասսաներս, կ'զանք մեր արիւնաքամ եւ նոր ոտքի կանգնող մեր հայրենիքին օգնելու իր ճգնաժամի ժամանակ, նրա այս նեղ օրերին, մենք շատ չի անցնի կ'ունենանք մի շէն ու բարեկեցիկ հայրենիք, որին եթէ Աստուած, Գաբրիէլի հետ միասին, կ'զայ նորից մի անգամ տեսնելու, այլեւս չի բացազանչի. «Մնացել է այնպէս, ինչպէս ստեղծել եմ»:

Ասենք չեմ էլ կարծում, որ Աստուած, այդ սրբալի քայլը անի, շատ լաւ հասկանալով, որ այս անգամ Հայաստանում նա կարող է ընկնել այնտեղի կոմունիստների ձեռքը, եւ հազիւ թէ կարող կ'լինի հեշտութեամբ իր օձիքը նրանցից ազատել:

ՎԵՐԱԳԱՐՁՈՂ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԸ ԵՒ
ՄՆԱՑԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Թէ Դաշնակցական կառավարութեան ժամանակ, եւ թէ նրանցից առաջ, սկսած 1905 թւից, ազգամիջեան կռիւների պատճառով, երկրից քշւեցին կամ հեռացան կամովին մեծ թիւ մուսուլմանների թէ գիւղացիներից եւ թէ քաղաքացիներից:

Վերջին տարիները իմ կառավարութեան հաստատմամբ, մի փոքր մասը դրանցից սկսեց վերադառնալ:

Ընդհանուր շինարարական եւ հողարաշխական իր գործունէութեան առաջին շրջանում, Հայաստանի կառավարութիւնը ոչ մի խտրութիւն չէր դրնում հայի, մուսուլմանի կամ մի ուրիշ ազգի պատկանողի մէջ:

Սմէնքն էլ ստանում էին հողի իրենց բաժինը: Մուսուլման գիւղացին ազատ կարող էր տեղաւորւել իր տնում, իր գիւղում, եթէ նա մնացել էր:

Այժմ Հայաստանում այլեւս ազատ հողեր չկան: Չկան նորեկների համար, հայ լինէին թէ մուսուլման, այդ միեւնոյն է:

Չեն լինի մինչեւ ճահիճների ցամաքեցնելը, ջրանցքների անցնելը եւ այլն:

Արտասահմանում մնացած գաղթականութեան մնացորդների մասին, քանի որ առ այժմ նրանց Հայաստանում հնարաւորութիւն չկայ տեղաւորելու, Հայաստանի իմ իշխանութիւնը անցեալ տարի բանակցութեան մէջ էր մտել Ռուսաց կառավարութեան հետ:

Վերջիններս համաձայնել էին նշանակել նրանց համար հող, Կուբանեան շրջանում, ուր այժմ հա-

րիւր հազարից աւելի հայ բնակչութիւն կայ արդէն, մեծ մասը գաղթականներից:

Այդ որոշման դէմ արտասահմանեան հայ գործիչներից մի քանիսը բողոքել էին:

Մինաս Չերազ գրել էր մի յօդւած.

«... Ինչներուս է պէտք Քուբանը, երբ մեր գաղթական հայը չի լսի այնտեղ, էջմիածնի մայր տաճարի զանգակների քաղցրահնչիւն զօղանջը, չի չնչի Հայաստանի օդը, չի խմի նրա անուշահամ ջուրը... եւ այլն»:

Մի շատ կծու եւ հեզնական պատասխան էր տւել նրան պաշտօնական «Խ. Հ.» թերթը, իր առաջնորդողներից մէկում:

«Ուրեմն ձեզ համար պարոնայք Չերազ եւ նրմաններ, աւելի լաւ է, որ նրանք, այդ գաղթականները, հարիւր հազարի մօտ որբեր, տարւեն Յունաստան որպէս աղախիններ ու ծառաներ, տարւէին Կալիֆօրնիա պլանտացիաներում անասունների պէս աշխատուելու եւ ոչնչանալու, ինչ որ իրականութեան մէջ, ցաւօք սրտի, տեղի է ունենում, քան թէ նրանք ազատ Ռուսաստանի հողի վրայ աճէին ու դարգանային թէ Փիղիբապէս եւ թէ տնտեսապէս:

«Ո՞րն է գերադասելին»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Առաջ քան թէ ես կ'վերջացնէի իմ տեսութիւնը Հայաստանի մասին, ես չեմ կարող մատնացոյց չանել նաեւ մի անդնահատելի օգնութեան եւ բարիքի մասին, որ Սովետական Ռուսաստանը արեց Հայերիս համար:

Դա լեռնային Ղարաբաղի ազատութիւնը, նրա ինքնավարութիւնն էր, որ նա տւեց մեզ:

1919—20 թւականների ընթացքում Դաշնակցա-

կանները ոյժով կամենում էին միացնել Ղարաբաղը Հայաստանին :

Այդ արիւնահեղ ընդհարումները մեր խմբերի եւ Թուրքերի մէջ, որ արեւան եւ կրակի ասպարէզ էին դարձրել այդ դժբախտ երկիրը, վերջացան մի սոսկալի կոտորածով :

1920 թւի Մարտին, Սովետական զորքերի Բազու մտնելուց երեք ամիս առաջ, Ազրբէյջանի Թուրքերը իրենց գեներալ նահանգապետ Սուլթանովի գլխաւորութեամբ, մտան Ղարաբաղ եւ մի ահռելի ջարդ տւին հայերին :

Շուշին կապեցին նրանք թնդանօթի եւ հողի հասարեցրին :

Սովետական կառավարութեան Ազրբէյջանում հաստատելով, երկիրը խաղաղեց թէեւ, բայց Ղարաբաղը մնում էր դարձեալ Ազրբէյջանի տերիտորիայում : Հայ ժողովուրդը իրեն հանգիստ չէր ըզդում :

Այն, ինչ որ Դաշնակցականները այդքան արիւն թափելով չկարողացան, Ս. Հ. ը ձեռք բերեց իր մի խօսքով :

Ղարաբաղը այժմ կազմում է ինքնուրոյն կառավարութիւն, որի մայրաքաղաքն է այժմ «Ատեփանաւանը», նախկին Սանքեանդին, Շուշիի մօտ :

Այդտեղ հրատարակուող «Սորհրդային Ղարաբաղ» թերթում, տպագրւած էին նրա նոր հայ կառավարիչների, կոմիսարների պատկերները :

Բոլորը աշխոյժ երիտասարդներ :

Թերթը գրում էր թէ ինչպէս ուժեղ թափով ըսկըւել են այնտեղ շինարարական եւ կուլտուրական աշխատանքները :

Կարգերը նոյնն են ինչ որ Հայաստանում : Ամէն տեղ միմիայն հայերէն լեզուն : Լեռնային Ղարաբաղի սահմանները մօտենում են Հայաստանին, նոր

Բայագիտի մօտ եւ նրանց իրարից բաժանող տարածութիւնը 25 վերստաչաք մի շրջան է :

Ս. Հ. կառավարութիւնը ամէն օգնութիւն աւնում է իր փոքրիկ քրոջը : Ուղարկում են գրքեր, ուսումնական պիտոյքներ, եւ ինչին որ նրանք պէտք ունեն :

Ղարաբաղցիք ամբողջ Անդրկովկասում յայտնի են իրենց ժրջանութեամբ, եռանդով եւ գործունէութեամբ :

Նրանք շատ շուտով — ես այդ համոզւած եմ — կ'ըժչկեն իրենց վէրքերը, կ'կարկտեն իրենց քանդւած բայց գեղեցիկ օջախն ու հայրենիքը եւ նորից իրենց հպարտ ու բարձր լեռների վրայ, կ'հնչեն նրանց ուրախ լեռնական երգն ու պարը, թառն ու բեամանչան :

Երկու խօսք էլ Հայաստանի զինւորականութեան մասին :

Թւեր ես չեմ կարող տալ :

Զինւորական կենտրոնական կառավարութիւնը ամբողջ Փետերացիայի համար Թիֆլիսն է : Զինւորները Հայաստանում, ինչպէս եւ ամբողջ Անդրկովկասում հագնում են միեւնոյն հագուստը, ինչ որ ընդունւած է ամբողջ Ռուսաստանում :

Նոյն կասկան, կարմիր աստղով եւ նոյն համազգեստը :

Հագւած են բոլորը մարտի : Լեզուն եւ կամանդան հայերէն : Բաւականին յաւ տեսք ունեն : Երեւանի զինւորականութիւնը ամբողջապէս գրեթէ հայեր են : Կան շատ Ղարաբաղցիներ : Այլքաանդրապոլի շրջանում զօրքերի շարքերում կան եւ բաւականին Ռուսեր :

Զօրախմբերը իրենց գրօսանքներին երգում են միմիայն հայերէն զինւորական երգեր : Դրօշակներն էլ Հայաստանում ամէն տեղ միայն կարմիր քաթա-

նը չէ : նրա վերելի մասում, կողքից Ս. Ս. Ս. Փ. է, իսկ ներքեւում, մուրճի եւ մանդաղի տակ երկու Արարատը, որի միջից երեւում է ծագող արեգակը : Դա Հայաստանի պաշտօնական Ձինանշանն է, որ ընդունւած է բոլոր հիմնարկութիւններում :

ԽՈՐՀՐԳ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՒՆԵՐԸ

Ծանօթանանք այժմ Խ. Հ.ի կառավարութեան կազմի հետ :

Իմ տեղեկութիւնները վերաբերում են 1923ին, որը կարծեմ նոյնն է եւ այժմ :

Խ. Հ.ի կառավարութեան Ժողովրդական Կոմիտեաների նախագահն է Սարգիս Սրապիօնեան - Լուկաչին, որ ընտրուել է այդ պաշտօնում 1922 Յունիս 14ին : Գիւղացու որդի է : Ծնւել է 1884 թիւն, Նոր-Նախիջևեանի Թովթի հայ գիւղում :

Աւարտելով Բագւի գիմնադիոն, մտել է Պետերբուրգի համալսարանը եւ 1910ին աւարտել իրաւաբանական բաժինը :

Նա բոլշեւիկ է 1905 թւից : Զարական կառավարութիւնը նրան երկու անգամ կալանաւորել է, փախել է արտասահման :

1910ին նորից անցնում է Ռուսաստան եւ շարունակում իր յեղափոխական գործունէութիւնը :

Ասեանագ Մուսեան. — Լուսաւորութեան կոմիտեան : Ծնւած է 1886ին, Գանձակում : Միջնակարգ ուսումը ստացել է Գէորգեան ճեմարանում, բարձրագոյնը Պետերբուրգի համալսարանի պատմագիտական ֆակուլտետում :

Բոլշեւիկ է 1905 թւից :

Խմբագրած է մի շարք թերթեր Բագւում եւ Թիֆլիսում :

1920ին Յունվարին Դաշնակցականների Ժամա-

նակ, ձերբակալւած է երեւանում եւ աքսորւած Հայաստանի սահմաններից դուրս :

Արամայիս Երզնկեան. — Հողագործութեան կոմիտեան : Ծնւել է 1879ին Հաղբատ Լօտիում : Միջնակարգ ուսումը ստացել է Ներսէսեան դպրոցում, բարձրագոյնը Ժրնկվի համալսարանում, ուր լսել է գասախօսութիւններ հասարակական գիտութիւններից : Աշխատել է կուսակցութեան զանազան օրգաններում :

Սիւմէոն Լազարեան. — Առողջապահութեան կոմիտեան : Բժիշկ :

Բալեան. — Ժողովրդական Տնտեսութեան կոմիտեան : Ունի համալսարանական կրթութիւն, (էկօնոմիտ) :


Դանուշ Շահլեբեղեան. — Արդարադատութեան կոմիտեան : Ունի համալսարանական կրթութիւն, (իրաւաբան) :

Փիրգուլեան. — Բանուոր-Գիւղացիական տեսչութիւն : Ունի միջնակարգ կրթութիւն :

Զինուորական, Ֆինանսական, Արտաքին Գործոց, Փօստ հեռագրական կոմիտեաներ չկան : Նրանք միացած են Անդրկովկասեան կառավարութեան կենտրոնի հետ, ուր Հայաստանը ունի իր լիազօրները :

Արտասահմանում Հայաստանը ունի իր ներկայացուցիչները ուսական ներկայացուցչութեան կից : Բաղաքական խնդիրներում, նրանք ենթարկուած են ոռոսական ընդհանուր օրիէնտացիային :

Ներքին գործերում, նրանք անկախ են : Անդրկովկասեան Ֆետերացիան Մոսկուայում ունի յատուկ ներկայացուցիչ, որի մէջ Հայաստանի ներկայացուցիչն է Ս. Տէր Գաբրիէլեան :



ԵՐԵՎԱՆԻ ԱՐՈՎԵԱՆ ՓՈՊՈՑԸ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

AMERICAN
1882
ST. LOUIS
1882

900

« Ազգային գրադարան



NL0374542

